

**ՀԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ**

2(23)



ԵՐԵՎԱՆ 2021

հՅԻ ✓
947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

2 (23)

ՄԵՍՐՈԲ ԱՐԶ ԱՇԿԵԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ
221



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
221

Signature

ԵՐԵՎԱՆ
2021



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի
տեղակալ), Ա.Ա. Խառատյան, Հ.Կ. Սուքիասյան,
Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Մուրադյան, Վ.Ս. Սարգսյան
(պատ. քարտուղար)

Редакционная коллегия

Ա.Ա. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель
председателя), А.А. Харатян, А.К. Сукиасян, А.И. Шахназарян,
А.Г. Мурадян, В.С. Саргсян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonian (Chairman of the Board), K.H. Khachatryan (Deputy
Chairman of the Board), A.A. Kharatyan, H.K. Sukiasyan, A.I.
Shahnazaryan, H.Gh. Muradyan, V.S. Sargsyan (Executive Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության
հարցեր» գիտական պարբերականի հերթական՝ 2 (23) համա-
րում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, արխի-
վային նյութերի, մամուլի հրապարակումների, հայրենի և հա-
մաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի
վրա լույս են սփռում Հայոց հին և նորագույն ժամանակաշր-
ջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա: Պար-
բերականում հրատարակվում են նաև Պատմության ինստի-
տուտի երիտասարդ գիտաշխատողների 41-րդ գիտական
նստաշրջանում կարդացված որոշ զեկուցումներ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Հ. ԽՈՒԴԱՆՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱԼԶԻԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ
(Ք.Ա. XIII ԴԱՐ)

*Թանալի բառեր*¹ Ալզի, Ասորեստան, Սալմանասար I, Վերին Տիգրիս, Ադձնիք, Հայկական լեռնաշխարհ, սեպագիր արձանագրություն, Հայկական Տավրոս:

Ձ.ա. XIII դարում աքքադերենի միջին ասուրերեն բարբառով գրված սեպագիր արձանագրություններում Ադադներարի I-ը (Ք.ա. 1305–1274 թթ.) ու Սալմանասար I-ը (Ք.ա. 1273–1244 կամ 1265–1235 թթ.) վկայում են Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող մի շարք երկրների մասին¹: Այդուհանդերձ, նրանք չեն հիշատակում Ալզի երկիրը կամ նրա տարածքում գտնվող որևէ բնակավայր: Հաճախ արշավելով և նվաճելով Հայկական լեռնաշխարհի տարբեր երկրներ, Ասորեստանի այս արքաները մեծամասամբ զերծ են մնում Վերին Տիգրիսի տարածք ներխուժելուց: Կարելի է ենթադրել, թերևս, որ կամ Ալզին այդ ժամանակ բավականին հզոր թա-

¹ St'u Grayson A.K., The Royal Inscriptions of Mesopotamia (այսուհետ՝ RIMA), Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC). Volume I, A.O.76.1, էջ 131–132, A.O.77.1, էջ 182–186, A.O.77.10, էջ 192–193, A.O.77.17, էջ 206–207, A.O.77.18, էջ 207–208:

գավորություն էր², և Ասորեստանը, ի գորու չլինելով վերջինիս իրեն ենթարկեցնել, հաշվի էր նստում այդ փաստի հետ, կամ Ասորեստանը և Ալգին դեռևս դրական ռազմաքաղաքական հարաբերություններ էին պահպանում³: Հարկ է նշել, որ Ադադներարի I-ի կառավարման շրջանի գործունեությանը վերաբերող թեկուզ մեկ արձանագրություն չկա, որտեղից հասկանալի կդառնար Ասորեստանի ու Ալգիի ռազմաքաղաքական փոխհարաբերությունների բնույթը: Ակնառու է նաև այն, որ Սալմանասար I-ը, նվաճելով Ուրուատրիից մինչև Կուտմուխի երկրների միջև ընկած տարածքները, որևէ կերպ չի հիշատակում Ալգին, որը Կուտմուխիի հյուսիս-արևմտյան հարևանն էր⁴: Այսուամենայնիվ, Թուկույթի-Նինուրթա I-ի (Ք.ա. 1243–1207 թթ.) հետևյալ հաղորդումը, որը վերաբերում է իր հոր՝ Սալմանասար I-ի կառավարման շրջանում Ասորեստանի և Ալգիի միջև տեղի ունեցած ռազմաքաղաքական

² Ք.ա. XIV դարում Խաթիի արքա Սուպիլույիումա I-ը հասնում է Ալգի, գրավում է Կուտմար ամրոցը և նվիրում Ալգիի տիրակալ Անտարաթիին՝ այդպիսով իր հյուսիսում ապահովելով վերջինիս բարեկամությունը դեպի Միտանիի մայրաքաղաք Վաշուզանե կատարած արշավանքի ընթացքում: Ն. Ադունցը գտնում էր, որ այդ ժամանակաշրջանում Ալգիի թագավորությունը տարածվում էր մինչև Քաշիարի լեռները (տե՛ս **Ադունց Ն.**, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 49: **Аветисян Г. М.**, Государство Митанни: Военно-политическая история в XVII–XIII вв. до н.э., Ереван, 1984, էջ 70):

³ Խուրի-Միտանիի տիրակալ Արտաղամա I-ն ու նրա որդի Շուտանսա III-ը, մերձավոր ու դաշնակցային հարաբերություններ հաստատելով Աշուրի և Ալգիի հետ՝ փորձում էին ի շահ իրենց օգտագործել այդ երկուսի ռազմական հնարավորությունները՝ ուղղելով դրանք Թուշրատայի դեմ: Արդյունքում նրանք թալանում են Թուշրատայի ապարանքը, վերջինիս ոսկյա, արծաթյա և այլ թանկարժեք գանձերը նվիրում աշուրցիներին ու ալգեցիներին (տե՛ս **Аветисян Г. М.**, նշվ. աշխ., էջ 85):

⁴ St' u RIMA, vol. I, A.O.76.1, էջ 131–132:

փոխհարաբերություններին, որոշակի լույս է սփռում մի շարք հանգամանքների ու պատմական անցքերի վրա. «Ողջ Շուբարի երկիրը, Քաշիարի լեռն ամբողջությամբ, ընդհուպ Ալզի երկիրը, որը նախկինում Սալմանասարի՝ տիեզերքի արքայի, իմ հոր կառավարման ժամանակ ապստամբել էր և հրաժարվել հարկերից, միավորվել էր մեկ հրամանի ներքո: Աղոթեցի ես Աշշուր աստծուն և մեծ աստվածերին՝ իմ տերերին և արշավեցի դեպի Քաշիարի լեռը: (Ինչպես) երասանով տիրեցի ես Սուբարու երկիրը, Ալզի երկիրը և նրանց դաշնակից արքաներին: Ես նվաճեցի Պուրուլումգի երկրի մեծ պատամունքային կենտրոնը: Նրանց (բնակիչներին) ողջ-ողջ այրեցի, իսկ նրանց բանակի մնացորդներին գերեվարեցի: Գրավեցի Ալզի երկրի թագավոր Էխլի-Թեշուբի չորս ամուր մայրաքաղաքները և Ամադանի երկրի վեց ապստամբ քաղաքները: Նրանցից գերիներ և ունեցվածք բերեցի իմ քաղաքը՝ Աշշուր: Երկյուղեց իմ մեծության առաջ Ալզի երկրի թագավոր Էխլի-Թեշուբը, և վերցնելով իր պալատականներին ու որդիներին, լքեց իր ողջ երկիրն ու գաղտնապես ուղևորվեց դեպի Նաիրի երկրի սահմանը՝ անհայտ մի երկիր: Նրանց բանակի մնացորդները, որ փախել էին ճակատամարտի կեսին, փախուստի դիմեցին դեպի ժայռոտ լեռները՝ փրկելու իրենց կյանքը: Ոչնչացրի, ավերեցի, հրի մատոնեցի և ավերակների բլուրների վերածեցի նրանց 180 ամրացված քաղաքները: Ալզի, Ամադանի Նիխանի, Ալայա, Թեպուրգի և Պուրուլումգի երկրների շրջաններն իմ երկրին միացրի:

Նրանցից պատանդներ վերցրի, խոնարհեցրի նրանց իմ ոտքերի առջև և կոռ դրեցի նրանց վրա»⁵:

Տվյալ արձանագրությունից պարզ է դառնում, որ դեռևս Սալմանասար I-ը փորձել է իրեն հպատակեցնել ողջ Շուբարի երկիրը, Քաշիարի լեռների շրջանն ու Ալզի երկիրը: Սակայն, Ալզին, դաշնակցելով և իր շուրջը համախմբելով հարևան շուբարիական և, թերևս, ոչ շուբարիական երկրները, կարողացել է պահպանել քաղաքական ինքնուրույնությունն ու զերծ մնալ ասորեստանյան ռազմա-քաղաքական գերիշխանությունից: Ըստ ամենայնի՝ Ալզիի շուրջ համախմբված քաղաքական միավորումները, որոնք ներկայանում են որպես առանձին փոքրիկ քաղաքներ, եղել են Ալզիի ազդեցության ներքո և նույնիսկ նրա կազմում և միայն ժամանակ առ ժամանակ են ձեռք բերել հարաբերական ինքնուրույնություն⁶: Ինչպես հասկացվում է այս հաղորդումից, տվյալ ժամանակաշրջանում, ինչպես նաև Ք.ա. 12-րդ դ. Ալզին հակասորեստանյան պայքարի ռազմաքաղաքական կենտրոնն էր Վերին Տիգրիսի ավազանում՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում:

Վերոհիշյալի առնչությամբ պետք է նկատել, որ ըստ էության Միտաննիի կործանումից մինչև Սալմանասար I-ի գահակալության ավարտը և առնվազն Թուկուլթի-Նինուրթա I-ի կառավարման սկիզբը՝ այն է Ք.ա. 1244–1243 թթ., Ալզին

⁵ RIMA, vol. I, A.O.78.1, pp. 236.

⁶ См'у Головлева М. Л., Царство Алзи во второй половине II тыс. до н. э., Древний Восток 3, 1978, т. 76, 84:

դեռևս շարունակում էր մնալ Հայկական լեռնաշխարհի ամենից կազմակերպված և հզոր թագավորություններից մեկը, որին անգամ Ասորեստանը դեռևս ի զորու չէր ծնկի բերել: Հատկանշական է, որ Թուկուլթի-Նինուրթան Քաշիարի (Մարդին) լեռներից անմիջապես հետո վկայակոչում է Ալգի երկիրը, ինչը նշանակում է, որ վերջինիս սահմանները ձգվում էին մինչև այդ լեռները կամ այդ լեռներից անմիջապես հյուսիս տարածվում էին Ալգիի տիրույթները⁷: Թուկուլթի-Նինուրթա I-ը նվաճում է Պուրուլումգի երկրի հոգևոր կենտրոնը, գրավում Ալգի երկրի թագավոր Էխլի-Թեշուբի չորս ամուր մայրաքաղաքները և Ամադանի երկրի վեց ապստամբ քաղաքները, ողջ-ողջ այրում է դաշնակից երկրների բնակիչներին, նրանց բանակի մնացորդներին գերեվարում, գերիներ ու հարստություն բերում Աշշուր: Էխլի-Թեշուբը, վերցնելով իր պալատականներին ու որդիներին, փախչում է Ալգիից ու գաղտնապես ուղևորվում դեպի Նաիրի երկրի սահմանում գտնվող անհայտ մի երկիր: Դաշնակիցների բանակի այն մնացորդները, որոնք մարտադաշտը լքել էին դեռևս ճակատամարտի կեսին, ապաստան են փնտրում լեռներում: Դատելով ամենից, թերևս, խոսքը վերաբերում է Հայկական Տավրոսի լեռնահամակարգին կամ այլ կերպ ասած՝ Սասնո լեռներին: Ասորեստանի արքան ավերում, հրի է մատնում և ավերակների բլուրների վերածում դաշնակից երկրների 180 ամրացված քաղաքները, իսկ Ալգի, Ամադանի Նիխանի, Ալայա, Թեպուրգի և Պուրուլումգի երկրների շրջաններն

⁷ Տե՛ս Խաչատրյան Վ., Հայկական տեղանունները սևալգիի աղբյուրներում

իր երկրին միացնում՝ պատանդներ վերցնելով և հարկառու դարձնելով դրանց: Փաստորեն թվարկված երկրներից կենտրոնականն ու քաղաքական առումով ամենից նշանակալի են եղել է Ալզին: Անհայտ է մնում Ալզիի թագավոր Էխլի-Թեշուբի և նրա ժառանգների հետագա ճակատագիրը: Այսպիսով, Թուկուլթի-Նինուրթա I-ի ռազմաքաղաքական ձեռնարկումների արդյունքում վերջ է դրվում Հայկական լեռնաշխարհի երբեմնի հզոր թագավորություններից մեկի՝ Ալզիի քաղաքական ինքնուրույնությանն ու հզորությանը, թեև այն հետագայում ևս շարունակում է այս կամ այն չափով որոշակի քաղաքական դերակատարություն ունենալ և վկայակոչվել:

– Հաջորդ կարևոր տեղեկությունը վերաբերում է Ք.ա. XIII դարի վերջերին աքքադերենի միջին ասուրերեն բարբառով քարե սալիկին գրված Թուկուլթի-Նինուրտա I-ի արձանագրությանը, որտեղ նա, իր երկարահունչ տիտղոսի մեջ իրեն անվանելով Շումերի, Աքքադի, Վերին և Ներքին ծովերի, բոլոր նահիլյան երկրների և կուտիների արքա, հիշատակում է նաև շուբարիների արքա լինելու մասին⁸: Միևնույն ժամանակ հետաքրքրական է, որ ասորեստանյան այս արքան թերևս առաջինն է, որ ուղղակիորեն հիշատակում է Ալզին՝ համարելով այն շուբարիական երկիր և խոսելով դրա նվաճման մասին: Իր արձանագրության մեջ նա մասնավորապես ասում է. «Իմ թագավորության սկզբում՝ իմ կառավարման առաջին տարում, իմ ձեռքը նվաճեց կուտիներին, ուկումացիներին, Էլ-խունիա, Շարնիդա և Մեխրի երկրները: Նրանց երկրի

(տեղագրական և ստուգաբանական քննություն), Երևան, 2012, էջ 21:

հարկն ու նրանց լեռների հարստությունը ես տարեկան ստանում էի իմ քաղաք Աշշուրում: Այդ ժամանակ Բաբելոն, Կաստուկսի, Պուշշի, Մումմի, Ալգի, Մադանի, Նիխանի, Ալայա, Թեբուրգի, Պուրուկուգի երկրները՝ շուբարիական լայնատարած բոլոր երկրները ես այրեցի կրակով: Թագավորներին՝ նրանց տիրակալներին, ես ծնկի բերեցի իմ առջև և հպատակեցրի:

Ես իմ անգերազանցելի հզորության ուժով կտրեցի հզոր (՝) լեռները, որտեղ ճանապարհ չկար, որոնց արահետները ոչ մի արքա չգիտեր, այնուհետև Նաիրի երկրների 40 թագավորներ հանդգնորեն մարտի ելան շարքով: Ես նրանց հետ կռվեցի, նրանց պարտության մատնեցի, նրանց արյունը ես լցրի լեռների զառիվայրերն ու կիրճերը: Նրանց բոլոր երկրները ես ենթարկեցի իմ լծին, նրանց վրա հավերժ հարկ ու տուրք դրեցի»⁹:

Վերոնշյալ արձանագրությունից կարելի է, թերևս, հասկանալ, որ արդեն Ք.ա. XIII դ. վերջերից՝ Թուկուլթի-Նինուրթա I-ի գահակալության ժամանակաշրջանում, Ասորեստանն աննախադեպ հզորության է հասնում՝ դառնալով տարածաշրջանի գերիշխան տերությունը: Այսպիսով, իր թագավորության սկզբում Թուկուլթի-Նինուրթան նվաճում և իրեն է ենթարկում Ասորեստանից հյուսիս ընկած լեռնային երկրներն ու հպատակեցնում կուտիններին և ուկումանացիներին: Այնուհետև, նա արշավանք է ձեռնարկում դեպի Հալկական լեռնաշխարհի հարավային երկրներ ու կրակով այրում դրանք՝

⁹ St'u RIMA, vol. I, A.0.78.5, էջ 244:

ներառյալ Ալզին, իսկ այդ երկրների արքաներին հպատակեցնում է իրեն: Գտնվելով միմյանց հարևանությամբ՝ այս շուբարիական երկրները աշխարհագրորեն պետք է ոչ միայն զբաղեցնեին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքն ամբողջությամբ, այլև պետք է դուրս գային վերջինիս բուն սահմաններից:

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ Ասորեստանի արքան պարտության է մատնել Վերին Տիգրիսի ավազանում գտնվող երկրները, այնուհետև անցնելով Հայկական Տավրոսը՝ ներթափանցել բուն Հայկական լեռնաշխարհի խորքերը: Այսպիսով, շուբարիական երկրները՝ մասնավորապես Հայկական Տավրոսի շրջանում գտնվող թագավորությունները, նախ իրենց բնական դիրքով և ապա ռազմական ուժով շատ հաճախ պատվար են հանդիսացել Ասորեստանի համար Հայկական լեռնաշխարհի խորքերը թափանցելու առումով: Քանի որ գրավոր աղբյուրները ոչինչ չեն հայտնում շուբարիական և նաիրյան երկրների միջև եղած փոխհարաբերությունների մասին, ուստի ընդամենը կարելի է ենթադրել, որ ըստ ամենայնի նվազագույնը դրանք կրել են առևտրատնտեսական բնույթ: Որևէ տեղեկություն չի պահպանվել նաև հենց Վերին Տիգրիսի ավազանում գտնվող շուբարիական երկրների միջև գոյություն ունեցած փոխառնչությունների մասին: Թուկուլթի-Նինուրթա I-ն իր մեկ այլ արձանագրությունում Մումմեի հետ հիշատակում է նաև Քաշիարիի շրջանը, որից անմիջապես հետո՝ Ալզու երկիրը, ինչն ըստ էության նույն Ալ-

⁹ RIMA, vol. I, A.O.78.5, pp. 244–246.

զին է¹⁰: Այս հաղորդումից, թերևս, կարելի է հասկանալ, որ Թուկուլթի-Նինուրթան նախ նվաճել է Ասորեստանից անմիջապես հյուսիս ընկած երկրները, հասել Քաշիարի լեռների շրջանը, որի մոտ պետք է գտնվեր Մումմի երկիրը, անցել է Քաշիարի լեռները և հասել Ալզի: Սույն հանգամանքը թույլ է տալիս կարծելու, որ Քաշիարի լեռներից անմիջապես հյուսիս ընկած տարածքները պատկանում էին Ալզիին, այսինքն, հենց այս լեռներն են տվյալ ժամանակահատվածում եղել Ալզիի հարավային սահմանը:

Թուկուլթի-Նինուրթա I-ի մեկ ուրիշ՝ քարե սալիկի վրա արված արձանագրությունում վերջինս ներկայացնում է. «Թուկուլթի-Նինուրթա, տիեզերքի արքա.... Ուքումանու և Պասսխու երկրների անհնազանդ ապստամբներին հաղթողը, Կուամուխի երկիրը ջախջախողը, ոչնչացնողը Քուտի երկրի բանակը դժվարին լեռներում (շրջաններում), Շուբարի երկրի գորքերը ամբողջությամբ ցիրուցան անողը, ողջ անհնազանդ Ալզու և Պուրուլումզու երկրները տապալողը...»¹¹:

Այս արձանագրությունից ևս մեկ անգամ կարելի է եզրակացնել, որ ուկումանացիները և բաբխեցիները, նախապես լինելով անհնազանդ, բոլորից անկախ ցեղեր մինչև Ասորեստանի արշավանքները, անշուշտ, հարևան են եղել շուբարիներին, որոնց երկրներից իրենց հզորությամբ առանձնանում են Ալզին ու Պուրուլումզին:

¹⁰ St' u RIMA, vol. I, A.0.78.8, էջ 250:

¹¹ RIMA, vol. I, A.0.78.17, pp. 265: Նույնաբովանդակ կամ կրկնվող հաղորդումներ պարունակող արձանագրությունների համար տե՛ս նաև՝ RIMA, vol. I, A.0.78.2, էջ 241, A.0.78.6, էջ 247:

Թուկուլթի-Նինուրթա I-ի՝ Կար-Թուկուլթի-Նինուրթա ըաղաքի կառուցման վերաբերյալ արձանագրության մեջ նա ասում է. «Իմ ինքնակալության սկզբում, իմ կառավարման սկզբում, ես 28800 խեթեր տեղահանեցի Սիրիայից (Եփրատի մյուս ափից) և իմ երկիր բերեցի: Ես նվաճեցի Պապխի և Ուքումանի երկրները մինչև Շարնիդա և Մեխրի: Նրանց երկրի հարկը և նրանց լեռների արդյունքը ես կանոնավորապես ստանում էի ամեն տարի: Կուտմուխու, Բուշշու, Ալզու, Մադանու, Նիխանու, Ալայա, Թեպուրզու, Պուրուլումզու երկրները և Շուբարու ամբողջ լայնատարած երկիրը ես երասանով կառավարեցի: Թագավորներին՝ նրանց առաջնորդներին, ես հպատակեցրի իմ ոտքերի առջև և նրանց վրա կոռ սահմանեցի: Հզոր լեռները և ծայրահեղ դժվարին լեռնաշղթաները, որոնց արահետները ոչ մի այլ արքա չգիտեր, իմ անգերազանցելի հզորության ուժով ես հաճախ անցա: Ես նրանց լեռները կտրեցի բրոնզե կացիներով և լայնացրի դրանց անանցանելի արահետները: Ես ճակատամարտ տվի Նաիրի երկրների 40 թագավորների հետ և պարտության մատնեցի նրանց զորքերին: Նրանց բոլոր երկրներին ես տիրեցի: Նաիրի երկրների այդ նույն թագավորների պարանոցներին ես բրոնզե վզակոճղեր հագցրի, ես նրանց բերեցի Էկուր՝ մեծ լեռը, իմ աջակցության տաճարը, Աշշուրի՝ իմ տիրոջ դիմաց: Ստիպեցի նրանց երդում տալ երկնքի և ստորերկրայքի հզոր աստվածներով, նրանց վրա հավիտյանս հարկ ու տուրք սահմանեցի.....»¹²:

¹² RIMA, vol. I, A.O.78.23, pp. 272.

Ինչպես երևում է հետևյալ արձանագրությունից, Թուկուլթի-Նինուրթա I-ը վերոնշյալ 28.800 խեթական բնակչությանը տեղահանել և վերաբնակեցրել է ասորեստանյան տարածքներում, այնուհետև պարտության մատնել բաբելոնցիներին և ուկումանացիներին, ովքեր ըստ երևույթին ներխուժել էին Հյուսիսային Միջագետք։ Հաղթանակ տանելով վերջիններիս նկատմամբ, ինչպես նաև Շարնիդա և Մեխրի երկրներում՝ Ասորեստանի արքան հարկատու է դարձնում նրանց։ Սակայն Թուկուլթի-Նինուրթա I-ն այդքանով չի բավարարվում։ Նա հրի է մատնում շուբարիական երկրները՝ այդ թվում և Ալզին և նրանց թագավորներին հպատակեցնում իրեն։ Այնուհետև նա անցնում է Հայկական Տավրոսը և մարտնչում Նաիրի երկրի թագավորների դեմ։ Ինչպես հասկացվում է արձանագրությունից, Հայկական Տավրոսից հարավ ընկած բոլոր երկրները համարվում են շուբարիական, մինչդեռ այս լեռներից անմիջապես հյուսիս տարածվում էին լայնատարած Նաիրի երկրները։ Ըստ էության Հայկական Տավրոսը եղել է շուբարիական և նաիրյան երկրների բնական սահման-պատնեշը։ Պարտության մատնելով Նաիրի երկրների 40 թագավորներին՝ Թուկուլթի-Նինուրթան գերեվարում է նրանց, բերում Աշշուրի տաճար և ստիպում հնազանդության երդում տալ։ Այսպիսով, այս ամենից, թերևս, կարելի է գալ այն հետևությանը, որ Ասորեստանի արքան, ըստ երևույթին, նվաճել էր Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածները, և հնազանդեցնելով այդ տարածքներում գտնվող երկրները, հարկատու դարձրել իրեն։

Կար-Թուկույթի-Նինուրթա քաղաքի կառուցման մասին երկրորդ արձանագրությունից հասկացվում է, որ բացի բաբ-խեցիներից և ուկումանացիներից Ասորեստանի արքան նաև մարտնչել է ռազմատենչ կուտիների դեմ, նվաճել Էլխունիա, Շարնիդա և Մեխրի երկրները: Այնուհետև հաղթելով Բաբ-խիին՝ Թուկույթի-Նինուրթան նվաճել է շուբարիական երկր-ները, հաղթահարել Նաիրիի լեռները և հնազանդեցրել քա-ռասուն թագավորներին և նրանց զորքերը¹³:

Ամփոփելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգում-ները: Եթե Ալզին դեռևս Ք.ա. XIV դ. անկախ ու հզոր թագա-վորություն էր, որին փորձում էին իրենց կողմը գրավել տա-րածաշրջանի հզորագույն տերությունները, մասնավորապես, Խաթին ու Միտաննին, ապա Ք.ա. XIII դ. այն ամբողջությամբ հայտնվում է ասորեստանյան ռազմաքաղաքական ճամբա-րում: Այդ քաղաքական կողմնորոշումը պետք է որ լուրջ և հիմնավոր պատճառներ ունենար, և առաջին հերթին դա Ասորեստանի շեշտակի հզորացումն էր ու խեթամիտաննա-կան ճամբարի թուլացումը: Միտաննիի դեմ պատերազմում Ալզին թեև հաղթողների ճամբարում էր և տիրացել էր մի-տաննիական տարածքների մի մասին, այդուհանդերձ, այն ենթարկվում է ասորեստանյան ռազմա-քաղաքական նվաճո-ղականությանն ու ամբողջովին դառնում Ասորեստանին են-թակա, հարկատու թագավորություն: Ավելին, ըստ էության, Թուկույթի-Նինուրթան իր գահակալման սկզբում քայքայում է Ալզիի քաղաքական դաշնակցությունը հարևան մանր

¹³ RIMA, vol. I, A.O.78.5, pp. 244.

միավորումների հետ և այդպիսով վերջ դնում այդ երբեմնի հզոր թագավորության գոյությանը: Չնայած ժամանակ առ ժամանակ բռնկվող ապստամբություններին՝ Ասորեստանը կարողանում է ոչ մեծ դժվարությամբ ճնշել դրանք և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան երկրները պահել իր ազդեցության ոլորտում, ինչն իր հերթին խաղաղ և կայուն թիկունք է ապահովում ասորեստանցիների համար՝ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններ ներխուժելու և արշավանքներ իրականացնելու տեսանկյունից: Այսպիսին էր ռազմաքաղաքական իրավիճակն ընդհանուր առմամբ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում, մասնավորապես, Ալզիում Ք.ա. XIII դ. ըստ ասորեստանյան սեպագիր աղբյուրների:

Арутюн О. Худанян, *Институт истории НАН РА, Первые упоминания об Алзи в ассирийских клинописных источниках (XIII век до н.э.)*.

Страна Алзи расположенная в бассейне Верхнего Тигра Армянского нагорья (историческая провинция Агдзник Великой Армении) и известной еще из хеттских клинописных текстов XIV в. до н.э., впервые упоминается в ассирийских клинописных надписях конца XIII в. до н.э., в частности, во время правления ассирийского царя Тукульти-Нинурта I (1243–1207 гг. до н.э.). До падения Хеттской империи и царства Митанни страна Алзи была либо на стороне хеттов, либо на стороне Митанни. Тем не менее, уже в 13 в. до н.э.

Тукульти-Нинурта I вторгается в другие территории и уничтожает также Алзи, которая становится вассалом недавно созданной Ассирийской империи.

Harutyun H. Khudanyan, *Institute of History of the NAS RA, The first mentions of Alzi in Assyrian cuneiform sources (13th century BC).*

The land of Alzi situated in the Upper Tigris Basin of the Armenian Highland (historical Aghdznik province of Great Armenia) and still known from the Hittite cuneiform texts dated the 14th c. BC, is firstly mentioned in the Assyrian cuneiform inscriptions of the end of the 13th c. BC, in particular during the reign of the Assyrian king Tukulti-Ninurta I (1243–1207 BC). Before the fall of the Hittite Empire and the Mitanni kingdom, the land of Alzi, was either on the side of the Hittites or Mitanni. Nevertheless, already in the 13th c. BC, Tukulti-Ninurta I among other lands invades and destroys Alzi, too, which becomes a vassal state to the newly created Assyrian Empire.

ՎԱՀԵ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

«Էրեբունի» ՊՀԱԹ

**Կ.Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՌԻՊՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝**

Քանայի բառեր՝ Նաիրի, Ուրարտու, Ասորեստան, Տիգրիսի թունել, արձանագրություն, Կ. Ֆ. Լեման-Հաուպտ, Վ. Բելք, Թիգլաթ-պալասար I, Սալմանասար III, արշավանք:

Գերմանացի ականավոր արևելագետ, ուրարտագետ Կ.Ֆ. Լեման-Հաուպտը 1898–1899 թթ. Հայկական լեռնաշխարհում և Հյուսիսային Միջագետքում կատարած իր ճանապարհորդության ժամանակ հետազոտեց նաև Տիգրիսի թունելը¹: Ըստ հետազոտողի՝ վայրն այս արքաներն Ասորեստա-

¹ Հոդվածը պատրաստվել է «Էրեբունի» ՊՀԱԹ-ին ՀՀ ԿԳՄՍ Գիտության կոմիտեի կողմից տրամադրած «Ուրարտագիտական հետազոտությունների սեկտոր» խորագրով ենթակառուցվածքի պահպանման և զարգացման դրամաշնորհային գիտական ծրագրի շրջանակներում:

¹ Արդանայի ձախ օժանդակ վտակ Չիրենեն՝ Դիրենեն, ակունքից ոչ շատ հեռու անցնում է բնական թունելով. որը Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունների շնորհիվ մասնագիտական գրականությունում հայտնի է որպես Տիգրիսի թունել: Այն հետազոտելու համար Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Լճե եկավ 23.05.1899 թ. և այնուհետ մինչև 02.06.1899 թ. հետազոտեց տեղանքը՝ ինը օր նաև զիշերելով հենց Տիգրիսի թունելի հարևանությամբ (տե՛ս Lehmann-Haupt C.F., Armenien einst und jetzt (այսուհետև՝ AEJ). Bd. I. Berlin-Leipzig. 1910. էջ 438): Նրա ուղեկից՝ արշավախմբի անդամ Վ. Բելքը, որոշ հանգամանքներով պայմանավորված, Կ.Ֆ. Լեման-Հաուպտից հետո հետո նույնպես հետազոտեց այն (տե՛ս Belck W., Aus den Berichten über die armenische Expedition: die Quellgrotte des Tigris, Zeitschrift für Ethnologie, Berlin, 1899, Bd. 31, էջ 248):

նի համարել են Տիգրիսի ակունքը, կամ՝ ակունքներից մեկը և իրենց արշավանքների ժամանակ ձգտել են հասնել այնտեղ: Դա, հավանաբար, պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Ասորեստանի մայրաքաղաքներ Աշշուրի, Կալախի և Նինվեի «պատերը ողողող» Տիգրիս գետի ջրերը, այստեղ հոսում էին ժայռերի միջից: Զոհաբերությունները, որոնք ասորեստանյան արքաներն, ըստ արձանագրությունների, կատարում էին իրենց աստվածների պատվին, համարվել են նվիրված նաև գետի և աղբյուրի աստծուն²:

Տիգրիսի թունելի արձանագրությունները դեռևս 1862 թ. հայտնաբերել էր Ա. Թեյլորը³: Այստեղ այնուհետ հետազոտություններ են կատարել ինժեներ Կ. Սեստերը, Է. Նյումանը: Նրանք, սակայն ի տարբերություն Կ. Ֆ. Լեման-Հաուպտի, մասնագիտացած չէին արևելագիտության և ասորագիտության ասպարեզում: Վերոնշյալ հետազոտողների՝ արձանագրությունները տեղում ընթերցել չկարողնալու, ինչպես նաև արտապատճենների աղճատված լինելու հանգամանքով պայմանավորված, Սալմանասար III-ի (Ք.ա. 858–824 թթ.) արձանագրությունները վերագրվում էին Թուկուլթի-Նինուրտա II-ին (890–884 թթ.) և Աշուրնաճիրապալ II-ին (Ք.ա. 883–

² S^tu Grayson A. K., Assyrian Rulers of the Early First Millennium BC II (858–745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III, Toronto-Buffalo-London, 1996, (այսուհետև՝ RIMA), A.O.102.6 ii 34–40, A.O.102.8: 20'–23', A.O.102.14: 67–72: Lehmann-Haupt C. F., AEJ, Bd. I, էջ 434:

³ S^tu Taylor J. G., Travels in Kurdistan, with Notices of the Eastern and Western Tigris, and Ancient Ruins in their Neighbourhood, Journal of the Royal Geographical Society, vol. 35, 1865, էջ 41–42:

859 թթ.)⁴: Նման եզրակացության համար նաև, որպես կովան, ծառայել էր այն հանգամանքը, որ Ասորեստանի արքա Աշշուրնաժիրապալ II-ն իր տարեգրությունում հաղորդում է, որ գահակալության II տարում *Սուբնատ* գետի ակունքի շրջանում թողել է իր պատկերը (իմա՝ արձանը) հոր՝ Թուկուլթի-Նինուրտա II-ի, ինչպես նաև Թիգլաթպաասար I-ի արձանների կողքին⁵:

Հարկ է նաև նշել, որ Տիգրիսի ավազանին պատկանող այս վտակը ճանապարհորդները կոչում են Ս/Չեբեն-սու: Ելնելով այն հանգամանքից, որ Տիգրիսի թունելում գտնվում էր նաև Թիգլաթպալասար I-ի արձանագրությունը՝ իր պատկերով, իսկ Սուբնատ ու Չեբեն-սու (Չիբենե) գետերի անունները միմյանց պարզապես նման են, վերջիններս հանիրավի նույնացվեցին: Սույն գործոններով պայմանավորված՝ Թուկուլթի Նինուրտա II-ի և Աշշուրնաժիրապալ II-ի արձանագրությունները՝ արքայական պատկերներով հանդերձ, նույնպես տեղորոշվեցին այստեղ⁶:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտն իր հետազոտություններով դեռևս XIX դարավերջին փաստեց, որ Տիգրիսի թունելում առկա են միայն Թիգլաթպալասար I-ի և Սալմանասար III-ի արձանագ-

⁴ St'u մանրամասն Schrader E., Die Keilinschriften am Eingang der Quellgrotte des Sebeh-Su, Abhandlungen der Königlischen Akademie der Wissenschaften in Berlin, Berlin, 1885, էջ 27–30: Naumann E., Vom Goldenen Horn zu den Quellen des Euphrats, München-Leipzig, 1893, էջ 309: Lehmann-Haupt C. F., AEJ, Bd. I, էջ 434, 439):

⁵ St'u Grayson A. K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I(1114-859BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. II, Toronto-Buffalo-London, 1991, Ashurnasirpal II A.O. 101.1, i104–105: Lehmann-Haupt C. F., AEJ, Bd. I, էջ 434:

րությունները: Հետազոտողը տեղորոշում էր նաև արձանագրություններում հիշատակվող Սուբնատ վտակը Հյուսիսային Միջագետքում՝ Բաբիլ բնակավայրի մոտ⁷: Կ.Ֆ. Լեման--Հաուպտի առաջարկած սույն տեղորոշումը, սակայն մնաց հանիրաքի անտեսված, և բիայնագիտությունում հիմնականում շարունակեց զարգացվել Սուբնատը Զիբենեի հետ նույնացնելու տեսակետը⁸:

Տիգրիսի թունելում առաջինը Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114–1076 թթ.) թողած արձանագրությունն է՝ արքայի դեպի աջ շրջված պատկերով⁹: Արձանագրությունում նշվում է, որ արքան՝ նվաճողը Ամուրրու երկրի մեծ ծովի (Միջերկրական) և Նաիրի երկրի ծովի (Վանա լիճ), *երրորդ* անգամ արշավանք է կատարել Նաիրի¹⁰: Ուշագրավ է, որ Կ.Ֆ. Լեման--

⁶ St'u Schrader E., նշվ. աշխ., էջ 20–21: AEJ, Bd. I, էջ 441–442:

⁷ St'u մանրամասն Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Berlin 1907, էջ 19–22, AEJ, Bd. I, էջ 442, նաև՝ Меликишвили Г.А., Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 51: Bagg A. M., Subnat, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie (այսուհետև՝ RLA), Berlin, 2011–2013, Bd. 13, էջ 238:

⁸ Նույնացման համար տե՛ս Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985, էջ 170–171 և հղված գրականությունը: RIMA. vol. II, էջ 61 և այլն: Որոշ հետազոտողներ Սուբնատը նաև նույնացրել են Արևելյան Խաբուրի հետ (տե՛ս Ադոնց Ն., Քննական պատմություն Հայոց, հ. Դ., Երևան, 2009, էջ 95 և հղված գրականությունը):

⁹ Արձանագրությունները գտնվում են գետի հոսանքի ուղղությամբ՝ աջ կողմում՝ թունելի վերջում (տե՛ս Lehmann-Haupt C.F., AEJ, Bd. I, էջ 433–434):

¹⁰ Կ. Ռադներն արձանագրությունը թվագրում է 1104–1097 թթ.՝ ելնելով երրորդ անգամ Նաիրի արշավելու հանգամանքի հիշատակությունից այլ արձանագրություններում (տե՛ս մանրամասն Schachner A., Assyriens Könige an einer der Quellen des Tigris. Archäologische Forschungen im Höhlensystem von Birkleyn und am sogenannten Tigris-Tunnel. Mit Beiträgen von Karen Radner, Upur Dopan, Yvonne Helmholtz, Birgül Öpüt (Istanbuler Forschungen 51), Tübingen, 2009, էջ 177, 199):

Հաուպտի արշավախմբին հաջողվեց Թիգլաթպալասար I-ի թողած մեկ այլ արձանագրություն հայտնաբերել Մանազկերտի մերձակա հատվածում՝ Խոտանլուում: Արձանագրությունն այստեղ թողել է ասորեստանյան արքան, իր հաղթանակը նաիրյան ժողովուրդների հանդեպ հավերժացնելու համար՝ Նաիրյան երկրները նվաճելուց հետո¹¹: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ուղեկից Վ. Բելքը, դեռ մինչ այս արձանագրության հայտնաբերումը երկու կողմերի միջև եղած ճակատամարտի վայրը տեղորոշում էր այստեղ: Ըստ Վ. Բելքի և վերջինիս տեսակետին հետևող Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ասորեստանյան արքայի երթուղին անցել է Տիգրիսի թունելով¹², Տիգրիսի և Արածանու միջև ընկած լեռներով, այնուհետ՝ Թիգլաթպալասար I-ը Մանազկերտի մոտ միավորված նաիրյան ուժերի դեմ մղել է հաղթական ճակատամարտ՝ նրանց հետապնդելով մինչև Վանա լիճը: Թիգլաթպալասար I-ի արձանագրություններում

¹¹ Տե՛ս **Lehmann-Haupt C. F.**, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, էջ 17–18, նույնի՝ AEJ, Bd. II/1, Berlin-Leipzig, 1926, էջ 115–117: RIMA, vol. II, A. 0.8 7.15: Ի. Դյակոնովը, սակայն կարծում է, որ նաիրյան «արքաների» դեմ ճակատամարտը բնավ Մանազկերտի մոտ տեղի չի ունեցել, քանի որ արշավանքն ընթացել է դեպի Արևմտյան Եփրատի ավազան և սույն արձանագրությունը վկայում է. որ Թիգլաթպալասար I արքան կամ այս, կամ մեկ այլ արշավանքի ժամանակ է անցել Մանազկերտի մոտով (տե՛ս **Дьяконов И.М.**, Предыстория армянского народа. Ереван, 1968, էջ 126, ծն.128):

¹² Արշավանքի նկարագրությունում նշվող նաիրյան երկրների շարքում երկրորդը Թունուրուն է, որն ըստ Ն. Ադոնցի Սալմանասար III-ի հիշատակած Թունիբունին է՝ (տե՛ս ստորև) Տիգրիսի թունելից ոչ շատ հեռու գտնվող Տավրոսի լեռնանցքներից մեկը՝ Կապույտ լեռնանցքը (տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 83): Վերջինս Շուարիայում գտնվող դեպի Ուրարտու տանող երեք լեռնանցքներից կենտրոնականն է, որն անցնելով Բյուրակն լեռների շրջանով հասնում էին Արածանիի հովիտը (տե՛ս **Schachner A.**, Bilder eines Weltreichs. kunst- und kulturgeschichtliche Untersuchungen zu den Verzierungen eines Tores aus Balawat (Imgur-Enlil) aus der Zeit von Salmanassar III, König von Assyrien. "Subartu" 20, Turnhout, 2007, 232):

Վերին ծով (Սև ծով) հասնելու հիշատակությունը¹³ Կ.Ֆ. Լեման-Հաուպտը պայմանավորում է ասորեստանյան զորքի՝ Դայաէնի հասնելու հանգամանքով այս արշավանքի ժամանակ: Դայաէնին, թերևս, նրանց պատկերացումների համաձայն, ձգվում էր մինչև Սև ծովի ափը: Ելնելով՝ Թունուբու և Թունիբունի երկրների նույնացումից, ենթադրելի է, որ Թիգլաթպալասար I-ը, Տիգրիսի թունելում թողնելով իր արձանագրությունն ու պատկերը՝ կրոնաժեսական գործողություններ է իրականացրել, հայցելով աստվածների բարեհաճությունը և շարժվել հյուսիս՝ Մանազկերտի ուղղությամբ¹⁴: Դատելով արձանագրությունից, այն թողել են արշավանքի սկզբում՝ նշելով միայն արքայի մինչ այդ կատարած նվաճումների աշխարհագրությունը: Թիգլաթպալասար I-ին արքայի թողած սույն երկու արձանագրություններից ելնելով ենթադրելի է, որ Նաիրին նրա օրոք տարածվում էր Տավրոսից մինչև Արածանի՝ ներառելով առնվազն Վանա լճի ավազանի որոշ շրջաններ¹⁵:

Տիգրիսի թունելում՝ Թիգլաթպալասար I-ի արձանագրությանը հաջորդում է Սալմանասար III-ի արձանագրությունը՝ արքայի պատկերով¹⁶: Արձանագրության ներածական

¹³ RIMA, vol. II, A.O.87.1, iv 43 – v 21:

¹⁴ Վ. Մայերը, սակայն կարծում է, որ այս՝ 3-րդ տարվա, արշավանքի ժամանակ ասորեստանյան զորքը հասել է մինչև Վանա լճի հարավային շրջաններ, այնուհետև արշավանքը շարունակվել է Մելիդի ուղղությամբ (տե՛ս Mayer W., Politik und Kriegskunst der Assyrier, Münster, էջ 237, նաև՝ տե՛ս և հմմտ. Дьяконов И.М., նշվ. աշխ, էջ 127, ծն.128):

¹⁵ Տե՛ս Salvini M., Nairi, Na'iri, RLA, Bd. 9-1/2 Lief., էջ 88:

¹⁶ Դա, ինչպես Թիգլաթպալասար I-ի արձանագրության պատկերը «նայում» է գետի հոսանքի ուղղությամբ: Մինչ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի

հատվածից հետո դարձյալ նշվում է, որ արքան նվաճողն է Վանա լճից մինչև Միջերկրական ծովն ընկած շրջանների՝ Խեթերի երկիրը, Մելիդու, Դայանու, Սուխմու երկրներն, Արամու Ուրարտացու արքայական քաղաք Արգաշկուն, Գիլգանու և Խուբուշկիա երկրները՝ Տիգրիսի ակունքից մինչև Եփրատի ակունքը¹⁷:

Թունելի խորքում՝ սույն արձանագրությունից ոչ հեռու, դաձյալ գտնվում է Սալմանասար III-ի թողած ևս մեկ արձանագրություն¹⁸: Ըստ սույն արձանագրության՝ արքան մուտք է գործել Էնզու¹⁹ լեռնանցքով, նվաճել է Սուխմու, Դայանու, Ուրարտու երկրները, անցել Գիլգանու երկրով, ստանալով հարկն ու երրորդ անգամ արշավելով Նաիրի, Տիգրիսի ակունքին գրել իր անունը:

Տիգրիսի թունելից մոտ 40 մետր վերև՝ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հիշատակած վերին քարայրի մուտքի մոտ ևս Սալ-

հետազոտությունները սույն արձանագրությունը վերագրվում էր Թուկուլթի-Նինուրտա II արքային (տե՛ս *Lehmann-Haupt C.F.*, *Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens* 31–44, *AEJ*, Bd. I, էջ 436. 440–441):

¹⁷ Արձանագրության ստորին հատվածի տողերը վերջում թեքվում են վերև: Սալմանասար III-ի՝ Աշշուրից գտնված որոշ արձանագրություններ նույնպես ունեն նման առանձնահատկություն. այս հանգամանքը, թերևս վկայում է, որ ասորեստանյան արքան իր հետ արշավանքի է տարել նաև քարտաշին (տե՛ս *Lehmann-Haupt C.F.*, *AEJ*, Bd. I, էջ 441): Ինչպես նշվեց. Սալմանասար III-ի տարեգրությունների համաձայն՝ Տիգրիսի թունելից հետո ասորեստանյան զորքը Թունիքունի լեռնանցքով շարժվել է առաջ՝ հայտնվելով Արամու Ուրարտացու իշխանության սահմաններում (տե՛ս *RIMA. A.O.102.6 iii 34–45, 102.10 iii 26–33a*):

¹⁸ Սույն արձանագրությունը վերագրվում էր Աշուրնաձիրապալ II-ին և Սալմանասար III-ին (տե՛ս *Lehmann-Haupt C.F.*, *AEJ*, Bd. I, էջ 436):

¹⁹ Վկայված է Էնզատե, Էնզիտե և Ալզու, ինչպես նաև՝ Ամադանի տարբերակներով (տե՛ս մանրամասն *Schachner A.*, *Assyriens Könige an einer der Quellen des Tigris*, էջ 184, նաև՝ *Арутюнян Н.В.*, *Топонимика Урарту*, էջ 256):

մանասար III արքան թողել է երկու արձանագրություն՝ դարձյալ արքայի պատկերով, որը, սակայն «նայում» է դեպի անձավի խորքը²⁰: Արքայի այս երկու արձանագրությունները, գրեթե նույնաբովանդակ են Տիգրիսի թունելի արձանագրությունների հետ:

Ելնելով արձանագրությունների հաղորդած տվյալներից՝ Կ.Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ Սալմանասար III-ին հաջողվել է կասեցնել հալական լեռնաշխարհի լեռնականներին և նրանց հետ միավորված գործող արամեացիներին, և կանխել ասորեստանյան «միջնաբերդի» վրա կախված վտանգը: Արամե Ուրարտացու դեմ կատարված արշավանքերը նախորդում են Դամասկոսի, Համաթի և նրանց դաշնակիցների դեմ ուղղված արշավանքներին: Հետագոտողը հակված էր կարծելու, որ բիայնական արքաներն արևմուտքում Ասորեստանի թշնամիների, հատկապես հյուսիսային Սիրիայի արամեական իշխանությունների հետ, միշտ կապեր և դաշինք են ունեցել²¹:

²⁰ Ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի՝ արքայի այս պատկերը ևս ուղղված է եղել դեպի քարայրի ստորին հատվածով հոսող ջուրը: Ուշագրավ է, որ Կ. Ֆ. Լեման Հաուպտի թուրդ ուղեկիցը դեպի վերին քարայր տանող ճանապարհին ցույց է տվել Ալեքսանդր Մակեդոնացու (Չուկարնային) ոտնահետքը: Առաջավոր Ասիայում Գիլգամեշի՝ անմահության հետ կապված պատկերացումները հելլենիստական ժամանակաշրջանում գոգորդվեցին Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ (տե՛ս **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 22–23: Արձանագրության հետազոտությունից պարզ դարձավ, որ այստեղ գտնվում են երկու տարբեր արձանագրություններ և թողել է ոչ թե Աշուրնաձիրապալ II-ն, այլ՝ Սալմանասար III-ը (տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, AEJ, Bd. I, էջ 440):

²¹ Մ. Մավինիի առաջարկած վարկածը, ըստ որի Արամու ուրարտացին կարող էր լինել արամեացի, ում հաջողվել է միավորել Հայկական լեռնաշխարհի

Ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի՝ Սալմանասար III-ը, մինչ Ուրարտուի հասնելը, պետք է Տիգրիսի ակունքի հատվածում նաիրյան ժողովուրդների շրջաններով անցներ: Ելնելով նույն նախն լեռնանցքով մուտք գործելու վկայությունից հետագոտողը Տիգրիսի թունելը տեղորոշում է Էնգիտեում²²: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը նաև կարծում է, որ Թիգլաթպալասար I-ի և Սալմանասար III-ի արշավանքների ժամանակ այս կարևոր կիրճն անպաշտպան չէր²³: Տիգրիսի թունելի վերևում գտնվել է նախապես «նաիրցիներ»-ի հիմնադրած, իսկ հետագայում՝ բիայնացիների կողմից նվաճված և ձևափոխված²⁴ ժայռակերտ ամրոց²⁵:

որոշ ցեղերի՝ ստեղծելով ամրոցների պաշտպանական շղթա. ըստ էության Կ.Ֆ. Լեման-Հաուպտի տեսակետի փաստարկումն է (տե՛ս **Salvini M.**, *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995, էջ 26–27):

²² Հետագոտողը Լջեից դեպի Տիգրիսի թունել տանող ուղին համարում է արձանագրությունում նշվող լեռնանցքի մուտքը (տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, *AEJ. Bd. I.* էջ 444): Կ. Ռադները, սակայն ենթադրում է, որ արձանագրությունում վկայված է Արդանայի լեռնանցքը. ասորեստանյան գործը, թերևս, Տիգրիսի թունել շարժվել է Եփրատի շրջաններից, և անցնելով լեռնանցքը շարժվել դեպի հյուսիս, այնուհետ՝ Տիգրիսի հոսանքով հարավ՝ վերադառնալով հայրենիք (տե՛ս **Schachner A.**, *Assyriens Könige an einer der Quellen des Tigris*, էջ 184, 200):

²³ Սալմանասար III-ի տարեգրությունների համաձայն՝ Տիգրիսի թունելից հետո ասորեստանյան գործը Թունիթունի լեռնանցքով շարժվել է առաջ՝ հայտնվելով Արամու Ուրարտացու իշխանության սահմաններում (տե՛ս RIMA. A.O.102.6 iii 34–45, 102.10 iii 26–33a): Կ.Ֆ. Լեման-Հաուպտի մատնանշած ամրոցն ըստ այդմ հսկում էր սույն լեռնանցքը (Վ. Ս.):

²⁴ Այստեղ ուրարտական մշտական ներկայության մասին, թերևս, հնարավոր է ենթադրել միայն Սարդուրի II-ի գահակալության տարիներից սկսած (Վ. Ս.):

²⁵ Բիայնական ամրոցներին բնորոշ հատկանիշներից հեղինակը համարում է ժայռասանդուղքների առկայությունը, իսկ վերջինիցս դեպի ձախ՝ դեպի երկու փոքր ժայռե սենյակներ տանող դուռը: Ձախ սենյակից մի անցք տանում է դեպի գետը՝ արձանագրությունների ուղղությամբ: Մյուս սենյակից. ուղին ըստ հետագոտողի տարել է դեպի վեր՝ ժայռակերտ ամրոց (տե՛ս

Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Սալմանասար III-ի չորս արձանագրությունների առկայությունը Տիգրիսի թունելում նախապես փորձում էր բացատրել նրանց՝ արքայի տարբեր արշավանքների տարիներին թողած լինելու հանգամանքով: Սալմանասար III-ի արձանագրությունները վկայում են, որ նա հասել է Տիգրիսի ակունքների շրջան գահակալության 7-րդ տարվա արշավանքի ժամանակ՝ 852 թ. և 15-րդ՝ 844 թ. և իր պատկերներն ու արձանագրությունները թողել այնտեղ²⁶:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտը սակայն Սալմանասար III-ի արձանագրությունները թվագրելու համար ենթադրեց, որ ըստ ժամանակագրական հերթականության են վերջիններս գտնվում թունելում և վերին քարայրում: Ըստ այդմ, Կ.Ֆ. Լեման-Հաուպտը, վերջում գտնվող արձանագրությունները, որոնցում հիշատակվում են Սալմանասար III-ի՝ *երրորդ* անգամ Նաիրի արշավելը համարեց ավելի ուշ շրջանում կազմված²⁷: Սալմանասար III-ը, երբ երրորդ անգամ արշավել է, իր հաջողության մասին մեկ արձանագրությունը բավարար չի եղել, և երկու արձանագրություն էլ թողել է արդեն գոյություն ունեցողների մոտ: Երրորդ անգամ Նաիրի արշավելն, ինչպես նշվեց, ունի իր զուգահեռը Թիգլաթպալասար I արձա-

Lehmann-Haupt C.F., AEJ, Bd. I. էջ 444–446): Տիգրիսի թունելի շրջանում Ա. Շախների կատարած հետազոտություններով հաստատվում է Կ.Ֆ. Լեման-Հաուպտի կոսիումը. այստեղ գոյություն է ունեցել ամրոց ինչպես երկաթեղարյան ժամանակաշրջանում, այնպես էլ՝ ուշ անտիկ և միջնադարյան. հետազոտողը ժայռե սանդուղքները վերագրում է հետուրարտական ժամանակաշրջանին (տե՛ս **Schachner A.**, *Assyriens Könige an einer der Quellen des Tigris*, էջ 61–72):

²⁶ Տե՛ս RIMA, A.O.102.6, ii 34–40, A.O.102.8, 20'–23'a, 47b–51, A.O.102.10, ii 26–30, A.O.102.14, 67–72, A.O.102.31: **Lehmann-Haupt C.F.**, AEJ, Bd. I, էջ 453:

նագրությունում²⁸, սակայն երրորդ արշավանքն աղերսվում է ոչ թե անմիջապես Տիգրիսի ակունքի շրջանին, այլ Նաիրիին: Թունելի և վերին այրի սկզբում գտնվող երկու «վաղ» թվագրվող արձանագրություններում սակայն նաև նշվում է, որ արքան արշավել է քաղդեացիների դեմ, որն առաջին անգամ իրականացվել է Սալմանասար III-ի գահակալության իններորդ տարում: Հետևաբար, ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի, սույն արձանագրությունները թվագրել արքայի գահակալության յոթերորդ տարով, անհիմն է²⁹: Ինչպես նշվեց, իր գահակալության 15-րդ տարում Սալմանասար III-ը Նաիրի արշավել է չորրորդ անգամ, սակայն տիգրիսյան արձանագրություններում նշվում է երրորդ արշավանքի մասին: Սույն հակասությունը, սակայն Կ.Ֆ. Լեման-Հաուպտը հակված էր մեկնաբանելու այն հանգամանքով, որ Սալմանասար III-ը 7-րդ տարում արշավել է ոչ թե Նաիրի այլ, միայն արևմուտքում՝ նաիրյան շրջաններից դուրս, հարկ է ստացել վերջինիցս: Ըստ այդմ, Կ.Ֆ. Լեման-Հաուպտը եզրակացրեց, որ թունելի և այրի սկզբի արձանագրությունները ներկայացնում են արքայի հաջողությունները արևմուտքում և հյուսիսում, որոնք և պատկված են արքայի պատկերով, իսկ արդեն Տիգրիսի ավազանում կատարված իրադարձությունները՝ ներխուժումը Էնզի-

²⁷ Տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, AEJ, Bd. I, էջ 455:

²⁸ Սալմանասար III-ը կամեցել է դրանով ցույց տալ իր հավասարությունը՝ քանի որ նա Թիգլաթպալասար I-ից հետո այն եզակի ասորեստանյան արքան էր, ով դարձյալ արշավեց դեպի վերին Տիգրիսի. Արածանիի ու Վանա լճի ավազան (տե՛ս **Schachner A.**, *Assyriens Könige an einer der Quellen des Tigris*. էջ 198–199):

²⁹ Տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, AEJ, Bd. I, էջ 453:

տենե և թունելի շրջան, հանդիսանում են շարունակությունները: Վաստակաշատ բիայնագետի նման մոտեցումը՝ արձանագրությունների թվագրման առումով, սակայն ոչ մի կերպ չի հաստատվում և քննդատվել և հերքվել է դեռ Նախորդ դարասկզբին³⁰: Ուշագրավ է, որ Կ.Ֆ. Լեման-Հաուպ-

³⁰ Սալմանասար III-ի 7-րդ տարվա արշավանքի կապակցությամբ, սակայն նշվում է, որ արքան այցելել է նաև Տիգրիսի ակունքի շրջան, որը Կ.Ֆ. Լեման-Հաուպտը, թյուրիմացաբար, նույնացնում էր Արդանա վտակի հետ: Հետագոտողը նման եզրակացության էր եկել նաև, համեմատելով արձանագրությունների հաղորդած տվյալները՝ 7-րդ և 15-րդ տարիների վերաբերյալ «այն վայրը, որտեղից ջուրը հոսում է», «Տիգրիսի ակունքում՝ վտակի վրա՝ լեռնային ապառաժին, որտեղից հոսում է նրա ջուրը» (տե՛ս RIMA, A.O.102.6, ii 34-40, iii 34-45): Ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի միայն 15-րդ տարվա կապակցությամբ է վկայված Տիգրիսի թունելը: Նա նաև նշում է, որ Բալավաթյան դարպասների՝ 7-րդ տարվա իրադարձությունները պատկերված են ժայռերից հեռու թխող աղբյուրի մոտ և պատկերված է արձանագիր կոթող՝ արքայի պատկերով (տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, AEJ, Bd. I, էջ 455-456): Խնդրին անդրադարձած այլ հետազոտողները, սակայն կարծում են, որ 7-րդ տարվա իրադարձությունների կապակցությամբ պատկերված են Տիգրիսի թունելը և վերին քարայրն ուղղանկյուն մուտքով, վերջինիս վերին հատվածում՝ ամրոց, գուցե անգամ տաճար: Կ. Ռադները կարծում է, որ Տիգրիսի թունելի մոտ ասորեստանյան արքան թողել է կոթող, որը մեզ չի հասել, իսկ ըստ Ա. Շախների՝ քանի որ ասուրերենում պատկեր և կոթող բառերը նույնական են, այդ իսկ պատճառով, պատկերը նաև եզերվել է (տե՛ս **Billerbeck A., Delitzsch F.**, Die Palasttore Salmanassars II. aus Balawat (Beiträge zur Assyriologie VI/I), Leipzig, 1908, էջ 55, 58: **Schachner A.**, Assyriens Könige an einer der Quellen des Tigris, էջ 199, 220): Է. Ունգերն «այն վայրը, որտեղից ջուրը հոսում է» համարում է թունելն, իսկ «Տիգրիսի ակունքում... լեռնային ապառաժին»՝ վերին այրը. նա 852 թ. արշավանքի նկարագրությունում հիշատակվող արձանի կերտման և վերջինիս վրա արձանագրություն թողնելու հիշատակությունը՝ համադրում է Բալավաթյան դարպասի պատկերների հետ՝ արձանագրության կերտում վերին քարայրում, արքայի պատկերի՝ Տիգրիսի թունելում: Արձանագրությունների համեմատությամբ է. Ունգերը նաև եզրակացրել է, որ կրկնօրինակ արձանագրությունները փորագրել են երկու տարբեր քարտաշներ: Սալմանասար III արքայի 7-րդ տարվա արշավանքի ժամանակ թունելում կերտվել է արքայի պատկերն ու քանի վերջինիս կից հատվածը հարմար չէր քիչ ավելի հեռվում՝ արձանագրությունը, իսկ վերին այրում, ինչպես պատկերված է. արձանագրություն: Հաջորդ արշավանքի ժամանակ՝ վերին այրում արքան թողել է հիմնական արձանագրությունը և

տի առաջարկած սույն թվագրությունը տարածում ստացավ առավելապես խորհրդային ուրարտագիտությունում³¹:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտը, հետևելով իր ուղեկից Վ. Բելքին, նույնպես ենթադրում է, որ մինչ թունելի առաջացումը՝ գետի վերին հոսանքի շրջանում եղել է լիճ³²: Թերևս, հենց այս երկրաբանական իրավիճակի արտացոլումն է ընկած եղել նաև Պլինոսի հաղորդման հիմքում³³: Ուշագրավ է, որ Պլինոսի հաղորդման համաձայն Տիգրիսը սկզբնավորվում է հարթավայրում գտնվող Էլեգոսին³⁴ անունով աղբյուրից, այնուհետ հոսում է Արետիսա անունով լիճը, չխառնվելով վերջինիս հետ³⁵: Անցնելով Տավրոսը մտնում է քարանձավ և լեռան

հավելվել է արքայի պատկերը, իսկ թունելում, քանի որ այն արդեն հանդիսանում էր կրկնօրինակ, առանց ավելորդ ջանքեր ներդնելու՝ անհարթ մակերեսին շարադրվել է արձանագրությունը (տե՛ս Unger E., Zum Bronzefor von Balawat. Beiträge zur Erklärung und Deutung der assyrischen Inschriften und Reliefs Salmanassars III., Leipzig, 1913, էջ 53–73, նաև՝ տե՛ս Schachner A., Assyriens Könige an einer der Quellen des Tigris, էջ 201, 219):

³¹ Տե՛ս օրինակ Меликишвили Г.А., նշվ. աշխ.. էջ 190–193, Пиотровский Б.Б., Вавилонское царство (Урарту), Москва, 1959, էջ 56:

³² Տե՛ս Belck W., Die Keil-Inschriften in der Tigris-Quellgrotte, Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte, 1900, էջ 459: Lehmann-Haupt C.F., Die älteste Kunde über Armenien, Հանդես Ամսորեայ, Վիեննա, 1927, թիւ 11/12, էջ 802:

³³ Տե՛ս Naumann E., Vom Goldenen Horn zu den Quellen des Euphrats, էջ 330:

³⁴ Ծովք լճից հարավ-արևմուտք ինչատակվում է Էլեգիա անունով ամրոց (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 53):

³⁵ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը նշում է, որ Պլինոսի այս հաղորդումը հաստատվում է Է. Հանդիգթոնի հետազոտությունների միջոցով (տե՛ս Huntington E., The Historic Fluctuations of the Caspian Sea, Bulletin of the American Geographical Society, vol. 39, No. 10, 1907, էջ 593–594): Է. Հանդիգթոնը հաղորդում է, որ Ծովք լճի վերաբերյալ տեղացի հայերը պատմում են, որ 500–600 տարի առաջ այստեղ լիճ չի եղել, այլ գետն այստեղ հոսելով հարթավայրով այնուհետ անցել է ստորգետնյա հունով: Ծովք լճի ջուրը մինչ 1879 թ. աստիճանաբար սկել է հոսել դեպի Տիգրիս և ստորեկրյա հունը գտնվում է լճի

տակից՝ հակառակ կողմով դուրս գալիս Զորանդա վայրում, այնուհետ անցնելով Տոսալիտես լճով, նորից հոսում է ստորերկրյա հունով: Ըստ Կ.Ֆ. Լեման Հաուպտի՝ այս հաղորդումը ևս վկայում է Տիգրիսի վերին հոսանքների երկու ստորերկրյա հատվածների մասին:

Տիգրիսի երկու ստորգետնյա հոսքերի մեկ միասնական ջրային համակարգին պատկանելու պատկերացումը, ինչպես հետագայում Կ.Ֆ. Լեման-Հաուպտը ենթադրեց, իր արտացոլումն է գտել «Գիլգամեշ» էպոսի բաբելոնյան տարբերակում³⁶: Էպոսում նշվող Մաշու լեռները Կ.Ֆ. Լեման-Հաուպտը համարում է Տավրոսի հնագույն անվանումը³⁷: Գիլգամեշը սույն լեռների դարպասներով անցնում է խավարով³⁸ և հայտնվում աստվածների այգում: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը են-

արևելյան հատվածում: Քանի որ ըստ Է. Հանդիգթոնի հաղորդման՝ Ծովը լիճն ունեցել է ստորգետնյա հուն կամ թունել, Տիգրիսի երկու թունելները ասորեստանցիների կողմից միմյանց հետ շփոթվել և նույնացվել են: Այս տեղեկությունը ծագում է հավանաբար Պլինոսից դեռ շատ ավելի վաղ՝ Ք.ա. 6–5-րդ դդ. հույն ճանապարհորդների և լոգոգրաֆների շրջանում, որոնք շատ ավելի լավ գիտեին Առաջավոր Ասիայի հյուսիսային շրջանները, քան՝ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակիցները: Մալմանասար III-ի օրոք Տիգրիսի մասին եղած պատկերացումների մասին կարելի է եզրակացնել նաև Հեկատեոս Միլեթացու հաղորդած տեղեկությունների հետ համադրությունից. Արևելյան և Արևմտյան Տիգրիսներն ընկալվում են մեկ ջրային համակարգի մեջ, որից նաև ոռոգվում է Վանա լիճը (տե՛ս Подосинов А.В., Плиний Старший. Естественная история. Книга VI. Перевод с латинского и комментарии под общей редакцией А.В. Подосинова (Москва), Вестник древней истории, 2018, 2(78) էջ 460: Lehmann-Haupt C.F., AEJ, Bd. I, էջ 459–461):

³⁶ Տե՛ս Lehmann-Haupt C.F., Die älteste Kunde über Armenien, էջ 803–804:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 799–800, նաև՝ Das Gilgamesh-Epos, Neu übersetzt von Arthur Ungnad und gemeinverständlich erklärt von Hugo Gressmann, Göttingen, 1911, էջ 42–43:

³⁸ Ուշագրավ է, որ Գիլգամեշի ուղին ցերանցնում լեռների վրայով, այլ՝ միջով և այստեղ, թերևս, ազդեցություն են ունեցել նաև շումերական

թաղրում է, որ Մաշու (Մասիուս) լեռները և խավար ուղին ոչ թե հեքիաթային երկրում են, այլ հանդիսանում են հենց Հայաստանում գոյություն ունեցող իրականություն՝ աղերսվելով Տիգրիսի թունելին: Տիգրիսի թունելը եղել է պաշտամունքային վայր. դա վկայում է նաև այստեղից ոչ շատ հեռու՝ Դիարբեքիի մոտ գտնված Նարամ-Սուենի պատկերով արձանագրված կոթողը³⁹: Այն նաև ընկալվել է, որպես անդրաշխարհի մուտք, կամ հենց անդրաշխարհ⁴⁰: Տիգրիսի թունելն իրենից ներկայացրել է նաև միջազգային բնույթի մի բնական սրբավայր, որի շնորհիվ, թերևս, Շուբրիան պահպանում էր իր գոյությունն Ասորեստանի և Ուրարտուի հակամարտության ընթացքում⁴¹:

Այսպիսով, դեռևս 19-րդ դարավերջին Կ.Ֆ. Լեման-Հաուպտն իր հետազոտություններով փաստեց, որ Տիգրիսի թունելում գտնվում են միայն ասորեստանյան արքաներ Թիգ-

պատկերացումները (տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, *Die älteste Kunde über Armenien*, էջ 799–800):

³⁹ Հետազոտողը նման եզրահանգման էր եկել նաև. ելնելով այն հանգամանքից, որ թունելում Սալամանասար III-ի արձանագրության վրա արված են բազմաթիվ խաչեր. ինչն ըստ նրա վկայում է նաև այստեղ բրիտոնեական շրջանում պաշտամունքային կենտրոն լինելու մասին: Չարմանկիորեն. սակայն Կ. Ֆ. Լեման-Հաուպտի. սույն վկայությունը հեռու է իրականությունից (տե՛ս **Lehmann-Haupt C.F.**, *AEJ. Bd. I*, էջ 462, նույնի՝ *Die älteste Kunde über Armenien*, էջ 799–800: **Մովսիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 32–43, 155–156):

⁴⁰ Տե՛ս **Ավետիսյան Պ., Բորոխյան Ա.**, Տիգրիսի և Եփրատի ակունքներն ուստ Աստվածաշնչի. Աստվածաշնչական Հայաստան: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. Երևան. 2005, էջ 85:

⁴¹ Տե՛ս **Schachner A.**, *Assyriens Könige an einer der Quellen des Tigris*, էջ 218, **Radner K.**, *Between a rock and a hard place: Muṣaṣir, Kummē, Ukku and Subria – the buffer states between Assyria and Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007, “Acta Iranica”*, 51, Peeters, 2012, էջ 263–264:

լաթապալասար I-ի և Սալմանասար III-ի արձանագրությունները՝ արքաների պատկերներով: Ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող Սուբնատ վտակը, որը նույնացվում էր Զիբենեի հետ, հետագուտողն իրավացիորեն տեղորոշեց Հյուսիսային Միջագետքում: Նրա արշավախմբին հաջորդեց նաև գտնել Թիգլաթապալասար I-ի արձանագրությունը Մանագկերտի մոտ, որի շնորհիվ նաև փաստարկվեց ասորեստանյան բանակի արշավանքի երթուղին: Ուշագրավ է, որ Կ.Ֆ. Լեման-Հաուպտն առաջին հետազոտողն է, ով ենթադրեց, որ Տիգրիսի ակունքները եղել են սրբազան վայր Ասորեստանի արքաների համար և վկայված են անգամ «Գիլգամեշ» էպոսում:

**Ваге С. Саргсян, «Эребуни» ИАМЗ, Об исследовании
ассирийских надписей Армянского нагорья К.Ф. Леманом-
Гауптом.**

Выдающийся немецкий востоковед К.Ф. Леман-Гаупт во время своего путешествия в 1898–1899 гг. по Армянскому нагорью и Северному Междуречью провел исследования также в Тигрисском тоннеле. Его изыскания явствуют о том, что в Тигрисском тоннеле находятся лишь надписи ассирийских царей Тиглатпаласара I и Салманасара III с их изображениями. Упомянутый в ассирийских надписях приток Субнат, идентифицируемый с Зибене, ученый локализовал в Северном Междуречье. Его экспедиционной группе удалось также найти неподалеку от Маназкерта надпись Тиглатпаласара I, благодаря которой был установлен также маршрут ассирийской армии во время похода. Примечательно, что К.Ф. Леман-Гаупт является первым исследователем, сделавшим предположение о том, что истоки Тигра являлись священным местом для ассирийских царей, и это засвидетельствовано даже в эпосе Гильгамеш.

Vahe S. Sargsyan, "Erebuni" HAMR, On the study of Assyrian inscriptions in the Armenian Highland by C. F. Lehmann-Haupt.

The outstanding German orientalist C. F. Lehmann-Haupt during his travels in 1898-1899 in the Armenian Highland and the Northern Mesopotamia, conducted research also in the Tigris tunnel. His studies reveal that in the Tigris tunnel there are only inscriptions of the Assyrian kings Tiglath-Pileser I and Shalmaneser III with their images. The Subnat tributary mentioned in the Assyrian inscriptions, identified with the Zibene, was localized by the scholar in the Northern Mesopotamia. His expedition team also managed to find an inscription of Tiglath-Pileser I near Manazkert, thanks to which the route of the Assyrian army during the campaign was also clarified. It is noteworthy that C. F. Lehmann-Haupt is the first researcher to suggest that the sources of the Tigris were a sacred place for the Assyrian kings, and this is attested even in the Epic of Gilgamesh.

ՄԻՔԱՅԵԼ Ս. ԲԱԴԱԼՅԱՆ

«Էրեբունի» ՊՀԱԹ, պ.գ.թ.

**«ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՕՂԵՐԸ» ... ԳԻՐԸ ՈՐՊԵՍ
ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԿԱՅՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐ ԶԱՓՈՐՈՇԻՉ¹**

Բանալի բառեր* Հայկական լեռնաշխարհի, Ուրարտու, Ասորեստան, Նաիրի, ավար, սեպագիր, Վերին Անձավ, օղեր:

Բ.ա. 9-րդ դարի կեսերին Հայկական լեռնաշխարհում ստեղծված ուրարտական պետությունն ընդամենը մի քանի տասնամյակ հետո վերածվելու էր կայսրության՝ դառնալով Հին Մերձավոր Արևելքի հզորագույն խաղաղոյններից մեկը:

Ինչպե՞ս և ինչու՞ ստեղծվեց Ուրարտուն (Բիայնա, Արարատյան թագավորություն) և այնուհետև ուրարտական կայսրությունը¹: Ի՞նչն է նույնականացվում «ուրարտական»-ի հետ և որո՞նք են այն բնորոշող չափորոշիչները:

“ Հոգվածը պատրաստվել է «Էրեբունի» ՊՀԱԹ-ին ՀՀ ԿԳՄՍ Գիտության կոմիտեի կողմից տրամադրած «Ուրարտագիտական հետազոտությունների սեկտոր» խորագրով ենթակառուցվածքի պահպանման և զարգացման դրամաշնորհային գիտական ծրագրի շրջանակներում:

Հոգվածի պատրաստման բնթացքում ցուցաբերած խորհուրդների, քննադիմումների և աջակցության համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Վ. Սարգսյանին: Ցուցաբերած տեխնիկական աջակցության համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Հ. Դանիելյանին, Ե. Վասիլյանին և Ա. Թորոսյանին:

¹ Ուրարտական կայսրության վերաբերյալ տե՛ս օրինակ **Zimansky P.**, *Urartu as Empire: Cultural Integration in the kingdom of Van, Biainili-Urartu. The*

Այս հարցերին որոշակիորեն տրվել և հետագայում էլ տրվելու են պատասխաններ²: Այս համատեքստում, նույնիսկ, իրար խիստ հակասող տեսակետներ կարող են շատ մոտ լինել ճշմարտությանը: Սույն հոդվածը փորձ է անդրադառնալու վերը նշված հարցադրումներին: Այս առումով, մեզ համար խիստ կարևոր են դրանց առնչվող մոտեցումները: Մենք հակված ենք կարծելու, որ ուրարտական տերության ստեղծման պատճառներն ու հանգամանքները որոշակիորեն հասկանալու համար կարևոր են ճիշտ հաջորդականություն ունեցող կապակցված հարցադրումներն ու մոտեցումները: Այս առումով, չափազանց մեծ նշանակություն ունի կոնտեքստը:

Սույն հոդվածում փորձել ենք ներկայիս Վանից 11 կմ էյուսիս-արևելք գտնվող Վերին Անձավ ուրարտական ամրոցից հայտնաբերված նվիրատվական արձանագիր օղերից բաղկացած շղթաների (տե՛ս ստորև) կոնտեքստի օրինակով ցույց տալ բիայնական պետության կայսրություն դառնալու մի քանի առանցքային հանգամանքներ:

Մեր կարծիքով, ուրարտական կայսրության ստեղծումը պետք է դիտարկել Հայկական լեռնաշխարհում ուշ բրոնզավաղ երկաթեդարյան ժամանակաշրջաններում տեղի ունեցող սոցիալական, քաղաքական, ինչպես նաև մշակութային զար-

Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007, S.Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf, P. Zimansky(eds.), Acta Iranica 51, Leuven, 2012, էջ 101–110:

² Տե՛ս օրինակ Zimansky P., Urartian Material Culture As State Assemblage: An Anomaly in the Archaeology of Empire, Bulletin of the American Schools of Oriental Research, The American Schools of Oriental Research, 299/300, 1995, էջ 103–115, Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա XI–VI դարերում, Երևան, 2016, էջ 3–7:

գացումների համատեքստում: Հատկապես. Վաղ երկաթի դարում (Ք.ա. 12-9-րդ դդ.) Հայկական լեռնաշխարհում նկատելի են մշակութային միասնականությունն ու հասարակության ռազմականացումը³:

Հնագետ Ա. Բոբոխյանը բավական համոզիչ վերլուծությունների հիման վրա մատնանշել է, որ Հայկական լեռնաշխարհում կարելի է առանձնացնել երեք հիմնական պատմամշակութային գոտիներ: 1.Արևմտյան, որը ներառել է Վերին Եփրատի ավազանը (պատմական Ծոփք նահանգը և Փոքր Հայքը) և, որին բնորոշ են եղել աշխույժ առնչություններ կենտրոնական Փոքր Ասիայի և Սիրիայի հետ: 2. Հարավային, որը ներառել է Վանա լճից հարավ ընկած շրջանները (Աղձնիք և Կորդուք նահանգներ) և որին բնորոշ են եղել պատմամշակութային կապեր հյուսիսային Սիրիայի և Միջագետքի ուղղությամբ: 3. Կենտրոնական-հյուսիսարևելյան՝ մի քանի ենթագոտիներով (Այրարատ, Բարձր Հայք, Մոկք, Տուրուբերան, Տայք, Սյունիք, Ուտիք, Գուգարք, Փայտակարան, Պարսկահայք և Վասպուրական նահանգներ), որոնց առավել բնորոշ է եղել փոխառնչությունների ու կապերի կովկասյան ուղղությունը⁴:

Վաղ երկաթի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի հատկապես արևմտյան և հարավային գոտիները պարբերա-

³ Տե՛ս **Բոբոխյան Ա.**, Վասպուրականը Հայկական լեռնաշխարհի քրոնո-երկաթեդարյան մշակութային զարգացումների համակարգում. Հայաստանի մայրաքաղաքները. Գիրք I, ՎԱՆ, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբեր 2010 թ.) նյութերի ժողովածու (այսու հետև՝ Վան I), Երևան, 2013, էջ 31:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

բար ենթարկվում էին ասորեստանյան տերության արշավանքներին⁵: Այս երկու գոտիները և, ամենայն հավանականությամբ, Վան և Ռիբմիա լճերի միջև ընկած տարածքները կարելի է որոշակիորեն նույնացնել ասորեստանյան աղբյուրներում բազմիցս հիշատակվող Նաիրի երկրների աշխարհագրական տարածքի հետ⁶:

Ասորեստանյան տարբեր գահակալներ հիշատակում են Նաիրի երկրների արքաների դեմ տարած հաղթանակների մասին⁷:

Ասորեստանյան ագրեսիան, անկասկած, պետք է լիներ Նաիրի երկրների և նրանց արքաների միավորման կարևորագույն պատճառներից մեկը: Սակայն, մյուս կողմից Նաիրյան ցեղերին միավորել են նաև այլ ընդհանրություններ: Դրանք կարող էին լինել ոչ միայն քաղաքական կամ մասամբ էթնիկական, այլ նաև՝ սոցիալական և մշակութային:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական-հյուսիս-արևելյան գոտու առնվազն մեծ մասը (պատմական Հայաստանի Այրարատ, Գուգարք, Այունիք, մասամբ, Արցախ նահանգներ), ամենայն հավանականությամբ, զերծ է մնացել ասորեստանյան ծավալապաշտական նվաճումներից: Այս տարածքը

⁵ Այդ մասին տե՛ս օրինակ **Арутюнян Н.В.**, Биайнили-Урарту, Санкт-Петербург, 2006, էջ 13–108:

⁶ Տե՛ս **Գրեկյան Ե.**, Տուշպա քաղաքը և բիայնական (ուրարտական) պետության կազմավորման որոշ հարցեր, Վան I, էջ 56, 11. Քարտեզ: ... :

⁷ Տե՛ս օրինակ **Salvini M.**, Nairi, Na'iri, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, 9·1./2., Berlin, 1998, էջ 87–91:

կարելի է նույնացնել հետազայում ուրարտական աղբյուրներում հիշատակվող էթիունի համադրաշնության հետ⁸:

Նաիրյան գոյրին

Ուրարտական պետության մեզ հայտնի ամենավաղ արձանագրությունը, ըստ երևույթին, թողնվել է Սարդուրի I-ի (մոտ Ք.ա. 840-830-ական թթ.) կողմից: Վերջինս է կառուցել Վանա ժայռի ստորոտին տեղակայված շինությունը և դրա պատերին աստուրերեն լեզվով թողել վեց նույնիմաստ արձանագրություններ⁹: Դրանցում ներկայացված է Սարդուրիի տիտղոսաշարը, որտեղ նա անվանվում է «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, Նաիրի երկրների արքա, ով չունի հավասարը, զարմանալի հովիվ, ով չի վախենում մարտից, արքա, ով հնազանդեցնում է անհնազանդներին»¹⁰: Արձանագրությունների վերջում Լուծիպրիի որդի Սարդուրին տեղեկացնում է վերը հիշված շինությունը Ալնիունու երկրից բերված քարերով կառուցելու մասին¹¹ :

Սարդուրի I-ի վերը նշված արձանագրությունները խիստ կարևոր նշանակություն են ունեցել: Դրանք փաստում են, որ ուրարտական նորաստեղծ պետության միապետը փոխ էր առել ասորեստանյան սեպագիր համակարգն ու լեզուն: Այս պարագայում գրային համակարգի կիրառումը լեռնաշխար-

⁸ Էթիունիի տարածքի մասին տե՛ս օրինակ Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985, էջ 262–263:

⁹ St'u Salvini M., Corpus Dei Testi Urartei, vol. I, Le Inscrizioni su Pietra e Roccia, Documenta Asiana VIII/I(այսուհետև՝ CTU), Roma, 2008, A 1A–1F:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ St'u նույն տեղում:

հում նոր չափորոշիչներ ունեցող տերության հեռանկարներ էր բացելու:

Սարգուրի I-ից հետո մեզ հայտնի հաջորդ ուրարտական միապետը Իշպուինիին է (Ք.ա. մոտ 830–810 թթ.): Վերջինս, կարծես թե, նույնացվում է ասորեստանյան գահակալ Շամշի-Ադադ V-ի (Ք.ա. 823–811 թթ.) արձանագրություններից մեկում¹² հիշատակված Ուշաինայի հետ¹³: Ասորեստանյան միապետը հաղորդում է դեպի Նաիրի կատարած իր արշավանքի մասին: Տեքստում նշվում է, որ վերջինիս ներքինի Մութարիծ-Աշշուրը ծովից (Ուրմիա լիճ) դեպի արևմուտք նվաճել է Մեդքիարայի որդի Շարծինայի երեք հարյուր քաղաքները, տասնմեկ ամրացված քաղաքներ՝ Ուշաինայի երկու հարյուր քաղաքների հետ միասին, այնուհետև վերցրել ավար՝ նրանց ունեցվածքը, աստվածներին, որդիներին և դուստրերին¹⁴:

Ամենայն հավանականությամբ արևմտյան և հարավային գոտիները մեծապես ազդվել էին ասորեստանյան արժեհամակարգից: Ըստ երևույթին, ակտիվ փոխհարաբերություններ էին հաստատվել վերը նշված երկու գոտիների և սիրիա-միջագետքյան աշխարհի միջև: Ասորեստանյան արքաներից (հավանաբար, Սալմանասար III-ին (Ք.ա 858–824 թթ.) վերաբերող մի տեքստում, դեպի Ուրարտու կատարած

¹² St'u Grayson A.K., The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, vol. III: Assyrian Rulers of the Early First Millennium B. C. II (858–745 B.C.) (այսուհետև՝ RIMA), Toronto 1996, A. O. 103, ii 16b–34a:

¹³ St'u Арутюнян Н.В., նշվ. աշխ., էջ 109, ծան. 160: СТУ I, էջ 23: Գրեկյան Ե., նշվ. աշխ., էջ 55:

¹⁴ St'u RIMA III, A. O. 103, ii 16b–34a:

արշավանքի համատեքստում, վկայված է ապագա ուրարտական կայսրության հռչակավոր կենտրոն Տուրուշպա (ուրարտական սեպագիր աղբյուրների Տուշպա) քաղաքից մեծաքանակ հարկ ստանալու վերաբերյալ հաղորդում¹⁵: Իսկ ասորեստանյան տարբեր արքաներ իրենց թողած մի շարք արձանագրություններում հիշատակում են Նաիրի արքաներից տուրք ստանալու մասին¹⁶: Հավելենք, որ նույն ասորեստանյան միապետների թողած որոշ սկզբնաղբյուրներ վկայում են, որ Նաիրի երկրների տիրակալների ժառանգներին վերցրել են որպես պատանդ¹⁷: Կարելի է ենթադրել, որ պատանդները պետք է դաստիարակվեին ասորեստանյան ոգով և արժեհամակարգով: Չի բացառվում, որ նրանցից շատերը վերադարձել են և դարձել Նաիրիի տարբեր երկրամասերի «արքաներ»: Այս և նման այլ իրողություններ, կարծես թե փաստում են, որ վերը նշված գոտիները որոշակիորեն եղել են Ասորեստանի ազդեցության ներքո:

Իշպուինի արքան, հավանաբար, Նաիրի երկրի արքաներից մեկն էր:

Ընդ որում, վերջինիս տիրապետության տակ գտնվող նախնական տարածքները կարելի է տեղորոշել մերձուրմյան արևմտյան ավազանում: Ինչպես մատնանշել է ուրարտագետ Ե. Գրեկյանը, սկզբական փուլում Տուշպա քաղաքը չի

¹⁵ Տե՛ս **Գրեկյան Ե.**, նշվ. աշխ., էջ 49:

¹⁶ Տե՛ս օրինակ, RIMA III, A. O. 102.6, էջ 37, A. O. 103.1, էջ 183:

¹⁷ Տե՛ս օրինակ **Grayson A.K.**, The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, vol. II.; Assyrian Rulers of the Early First Millennium B. C. II (1114–859 B.C.), Toronto, 1991, էջ 22:

գտնվել Իշպուինիի տիրապետության տակ¹⁸: Այնուհետև, վերջինիս հաջողվել է նվաճել և կամ իր ազդեցության տակ միավորել Նաիրյան գոտու առնվազն մի հատվածը: Հենց Իշպուինիի օրոք էլ, կարծես թե, ասորեստանյան կայսերական մի շարք ստանդարտներ փոխ են առնվում և դառնում ապագա կայսրության ստեղծման կարևոր չափորոշիչներից: Դրանց մեջ առանցքային դեր էր վերապահված խորհրդանշական իշխանության կարևոր բաղադրիչ հանդիսացող գրին և կրոնին:

Պարմում են օղերը...

Վերին Անձավից հայտնաբերված հինգ օղերից բաղկացած արձանագիր շղթան) Մեր կողմից ներկայացվելիք երկու առարկաներից առաջինը վերաբերում է հենց Իշպուինի արքային: Խոսքը Վերին Անձավ հնավայրից, այսպես կոչված, «Ընդունելությունների մեծ դահլիճից» գտնված հինգ օղերից բաղկացած արձանագիր բրոնզե շղթայի մասին է (նկ. 1, 2, 3): Երկրաչափական բնույթի նախշերով զարդարված արձանագիր այդ օղերը պարունակում են աստուրերեն հետևյալ տեքստը. «Խալդի աստծո ստվերը, Իշպուինին՝ Սարդուրիի որդին, մեծ արքան, հզոր արքան, տիեզերքի արքան, Նաիրի երկրների արքան, այս նվիրատվական առարկան վերցրեց Ուիտերուխիի քաղաքի պահես-

¹⁸ Տե՛ս Գրեկյան Ե., նշվ. աշխ., էջ 51–52:

տից և իր տեր Խալդիին նվիրաբերեց՝ իր բարի ողջության համար»¹⁹:

Դատելով արձանագրության տեքստից կարելի է եզրակացնել, որ Իշպուինի կողմից տեղի է ունեցել արշավանք դեպի Ուիտերուխի երկիր, որտեղ օղերով շղթան վերցվել է որպես ավար, այնուհետև դրանք արձանագրվել և նվիրաբերվել են Խալդի աստծոն՝ ամենայն հավանականությամբ վերջինիս տաճարական համալիրին:

Արձանագրության արքայի տիտղոսշարում մի շարք տիտղոսների հետ Իշպուինին իրեն կոչում է «Խալդի աստծո ստվերը»: Սա ուրարտական արքաներին վերաբերող դեռևս մեզ հայտնի միակ նման բնորոշումն է: Իրեն նման տիտղոս վերագրելով ակնհայտ է, որ Իշպուինի կողմից արվել էր կարևոր կրոնաքաղաքական քայլ: Ընտրվել էր գերագույն աստված, ում հետ նույնանում էր ուրարտական միապետը: Այսինքն, Իշպուինին առնվազն տերության վերնախավի կողմից ընկալվելու էր որպես «երկրային Խալդի», որի յուրաքանչյուր գործողություն բխելու էր «աստվածային կամքից»: Բնականաբար, իր ընտրյալ և հովանավոր աստծո պաշտամունքի տարածումը դառնալու էր Իշպուինի արքայական գաղափարախոսության կարևորագույն առանցքներից մեկը: Խալդի աստվածը և նրա երկրային մարմնավորում արքան խորհրդանշելու էին տերության հզորությունն ու բարո-

¹⁹ Belli O., Dinçol A., Dinçol B., Bronze Votive Rings with Assyrian Inscriptions found in the Upper Anzaf Fortress in Van, Colloquium Anatolicum/Anadolu Sohbetleri VIII, 2009, էջ 104:

րությունը²⁰: Իշպուինին ընկալվելու էր որպես «Խալդի աստծո տեղապահ»: Ըստ ամենայնի, նման կրոնաքաղաքական քայլը հակակշիռ էր ասորեստանյան մոդելին, որտեղ միապետները իրենց համարում էին Աշշուր աստծո տեղապահներ²¹: Ըստ երևույթին, Ուրարտուի և Ասորեստանի պայքարն այսուհետ ընթանալու էր նաև «Խալդիի և Աշշուրի» միջև:

Նորից շղթայի օղեր) Նույն Վերին Անձալի պեղումների ընթացքում, տաճար տանող մուտքի մոտ, գտնվեցին խիստ վնասված բրոնզե շղթայի օղեր (նկ. 4, 5): Հետագայում՝ Ստամբուլի համալսարանի լաբորատորիայում իրականացված հետազոտությունների ժամանակ, պարզ դարձավ, որ օղերն արձանագիր են և ունեն հետևյալ տեքստը. «Խալդի աստծուն՝ տիրոջը, նվիրեցին Իշպուինին՝ Սարդուրիի որդին, Մենուան Իշպուինիի որդին և Ինուշպուան՝ Մենուայի որդին, երբ նրանք երկիրն Ամուշա քաղաքի նվաճեցին»²²:

Այս օղերն իրենց արձանագրությամբ կարելի է համարել խիստ կարևոր սկզբնաղբյուր: Այն կարծես թե փաստում է,

²⁰ Տե՛ս **Բաղայան Մ.**, Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը (պաշտամունք, խորհրդանշաններ, պատկերագրություն) ըստ հնագիտական սկզբնաղբյուրների, ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅՈՒՆ, Է.00.03 «հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2015, էջ 32:

²¹ Տե՛ս **Բաղայան Մ.**, Խալդիի պաշտամունքը, կերպարներն ու «տարածույթները». Բ.ա. IX դ. վերջին քառորդից մինչև Բ.ա. VIII դ. առաջին քառորդը, Բիայնիլի-Ուրարտու. Աստվածներ, տաճարներ, պաշտամունք (Գրեկյան Ե., Բաղայան Մ., Տիրացյան Ն., Պետրոսյան Ա.), Երևան, 2018, էջ 116–117:

²² **Dinçol A.M., Dinçol B.**, Die neuen Inschriften und beschrifteten Bronzefunde aus den Ausgrabungen von den urartäischen Burgen von Anzaf, Fs. Houwink ten Cate, Istanbul, 1995, էջ 30–31:

որ Իշպուինիի և Մենուայի հետ մեկտեղ վերջիններիս կողմից մեծ դեր էր հատկացվել նաև Մենուայի որդի Ինուշպուային: Չի բացառվում, որ Ինուշպուան կարևոր պաշտոն և դերակատարություն ունեցած լիներ այդ ժամանակաշրջանի Վանի թագավորության կյանքում: Շղթայի օղերի արձանագրությունը վկայում է Ամուշա քաղաքի երկրի նվաճման մասին: Հետաքրքիր է, որ այս տեղանունը հիշատակվում է նաև ավելի ուշ ժամանակաշրջանի միապետ՝ Արգիշթի II-ի՝ Թանահատի արձանագրության տեքստում²³: Ըստ ամենայնի, Ամուշա քաղաքը պետք է տեղադրել ներկայիս Սյունիքի և/կամ Արցախի տարածքում²⁴: Ամենայն հավանականությամբ, վերը նշված օղերն էլ ավար են վերցվել Ամուշա քաղաքի երկրից և նվիրաբերվել տերության գերագույն աստված Խալդիին ու վերջինիս տաճարին:

Վերը նշված երկու արտեֆակտերի համատեքստում հետաքրքիր է ևս մեկ առարկա: Խոսքը գնում է ներկայումս Վանի թանգարանում պահվող մի արձանագիր ուլունքահատիկի մասին, որի տեքստում Արգիշթի արքան հաղորդում է այն Էրիախի երկրից վերցնելու և Ռիարուբանիին նվիրաբերելու մասին²⁵: Քանի որ ուլունքահատիկի հնագիտական համատեքստի մասին մեզ ոչինչ հայտնի չէ, դժվար է համակողմանի ենթադրություններ անել այս առարկայի վերաբերյալ: Սակայն, ակնհայտ է, որ ուլունքահատիկը, որպես

²³ St'u CTU I, A 11–3 vo:

²⁴ St'u օրինակ **Dan R.**, A Study of the Toponyms of the Kingdom of Bia/Urartu, Serie Orientale Roma, n.s. 19, Roma, 2020, էջ 128:

²⁵ St'u օրինակ **Dinçol A. M., Kavakli E.**, Van bölgesinde bulunan yazıtlı bir Urartu boncoğu, AnAr. VII, 1982, էջ 231–235:

ավար, վերցվել է Էրիախի երկրից՝ (ներկայիս Շիրակի տարածք) և, այնուհետև, արքայի կողմից նվիրաբերվել Ռիարուքանի աստվածուհուն: Ամենայն հավանականությամբ, ուլունքի արձանագրությունում խոսքը գնում է Արգիշթի I-ի մասին, քանի որ հենց վերջինս է հայտնի դեպի Էրիախի կատարած իր մի քանի արշավանքներով²⁶:

Վերլուծելով վերը հիշատակված երեք իրերի կոնտեքստը՝ կարելի է եզրակացնել, որ դրանք վերցվել են որպես ավար, այնուհետև արձանագրվել ու նվիրաբերվել աստվածության, ամենայն հավանականությամբ, պահվելով նրանց ծիսապաշտամունքային կառույցներում: Ըստ երևույթին, նման ավարների նվիրաբերումը յուրատեսակ զոհաբերություն էր աստվածությանը՝ այս կամ այն երկրի նվաճման համար:

Էթիունին շրջափակելու քաղաքականություն

Ինչպես արդեն նշել ենք, Վերին Անձավից հայտնաբերված օղերի արձանագրությունները պատմում են Իշպուինի արքայի կողմից Ուիտերուխի քաղաքի նվաճման մասին: Ուիտերուխին, ամենայն հավանականությամբ պետք է տեղորոշվի Արաքսի հովտում՝ Ալաշկերտի և/կամ Կաղզվանի մերձակայքում²⁷: Իշպուինիի և իր որդի Մենուայի համատեղ գահակալության տարիներին վերաբերող արձանագրությունում հիշատակվում է Ուիտերուխի, ինչպես նաև՝ Լուշա և Կատարգա երկրների նվաճման մասին: Համաձայն արձա-

²⁶ CTU I, A 8-1, A 8-2, A 8-3 I:

²⁷ Տե՛ս օրինակ **Dan R.**, նշվ. աշխ., էջ 83-84:

նագրության՝ այս ցեղային միություններին օգնության են հասնում էթիունյան արքաները²⁸: Նույն Իշպուինիի և Մենուայի գահակալության ժամանակաշրջանում տեղի է ունենում արշավանք դեպի ներկայիս Նախիջևանի տարածք: Այդ մասին է վկայում Նախիջևանի Օձասար լեռան վրա վերջիններիս թողած արձանագրությունը²⁹:

Այս համատեքստում, կարծիքներից մեկի համաձայն, Նախիջևանի շրջանի գրավմամբ ուրարտական միապետները փորձել են Լուշա երկրի գլխավորած դաշնակցությունը զրկել էթիունյան հարավ-արևելյան իշխանությունների օգնությունից³⁰: Ըստ ուրարտագետ Վ. Սարգսյանի՝ դեպի արևելք շարժվելով բիայնական արքաները լուծում էին ռազմավարական խնդիր՝ հյուսիսային շրջանների հետ կապված հետագա քաղաքականության հարցում, որն էլ կարող էր հանգեցնել գուցե նրանց նախահարձակ լինելուն³¹:

Այս համատեքստում, մենք հակված ենք կարծելու, որ դեպի Ուիտերուխի, Լուշա, Կատարգա և Նախիջևանի ու Սյունիքի տարածաշրջան ուրարտական պետության արշավանքների գլխավոր թիրախն էթիունին արևմուտքից և հարավ-արևելքից օղակելն էր: Բիայնական տերության միապետների համար խիստ կարևոր էր թուլացնել Հայկական լեռնաշխար-

²⁸ CTU I, A 3-4 Ro., A 3-4 vo:

²⁹ CTU I, A 3-8:

³⁰ Տե՛ս Իգումնով Վ.Ա., Կարագյոզյան Հ.Հ., Հմայակյան Ս.Գ., Օձասարի սեպագիր արձանագրությունը, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, 1997, էջ 200:

³¹ Տե՛ս Սարգսյան Վ., Սյունիքն ըստ սեպագիր արձանագրությունների. «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ». Երևան, 2019, էջ 107:

հում կայսրություն ստեղծելու համար ամենահզոր ախոյան հանդիսացող էթիունի ցեղային համադաշնությանը:

**Գիրն «ուրարտաֆիկացման» կարևոր չափորոշիչ:
Կայսրության ստեղծման ճանապարհին**

Բիայնական տերության արքաների կողմից ավար վերցված իրերի վրա արձանագրություն թողնելը և այն աստվածություններին նվիրաբերելու հանգամանքը կարելի է համեմատել նույն բիայնական արքաների կողմից նվաճված տարածքներում սեպագիր արձանագրություններ թողնելու գործընթացի հետ: Նորաստեղծ Արարատյան տերության միապետների համար գիրը պետության և այն մարմնավորող արքայի խորհրդանշական իշխանությունը տարածող կարևորագույն չափորոշիչներից մեկն էր հանդիսանալու: Տարածքը նվաճելուց հետո սեպագիր արձանագրություն թողնելու քաղաքականությունը, կարծես, այն օրինականացնելու յուրատեսակ «վնիք» հանդիսանար: Որպես կանոն, նվաճված երկրներում կերտված արձանագրությունները գլխավորապես նվիրածված են եղել Խալդի աստծուն: Հենց գիրն ինքնին ուներ աստվածային ծագում: Այս միտումը կարևոր քայլ էր կայսրության ստեղծման ճանապարհին: Օրինակ, էթիունյան հասարակ մահկանացուները իրենց երկրամասերում պարբերաբար տեսնելու էին ուրարատական միապետների թողած սեպագիր արձանագրությունները: Նույնիսկ չհասկացվող բևեռագրերը լուրջ ազդեցություն էին թողնելու տեղի բնակչության վրա՝ բերելով բոլորովին նոր իշխանության համակարգի չափորոշիչներ:

Այս համատեքստում լավագույն օրինակներից մեկը կարող է հանդիսանալ Արգիշթի I-ի կողմից թողած Գառնու արձանագրությունը³²: Ուրարտական տերության միապետը արձանագրությունը թողնում է վիշապ քարակոթողի վրա: Ինչ որ տեղ «վիշապի արձանագրումը» կարելի է համարել «էթիունյան աշխարհի» նվաճման («ուրարտաֆիկացման») խորհրդանիշ «նաիրի-ուրարտական»՝ հարավ-արևմտյան գոտու կողմից: Գառնիի վիշապ քարակոթողը ևս դառնում էր «ավար», իսկ Գառնիի տարածաշրջանը՝ նվաճված: Ըստ երևույթին, այս փուլում, ուրարտական աշխարհի տերերն առավել կազմակերպված և ռազմունակ էին՝ կայսրության ստեղծելու համար:

Վերը նշված իրերի քննարկման օրինակը փաստում է, որ բիայնական տերության միապետների կողմից արձանագրված յուրաքանչյուր իր չէ, որ պետք է դիտարկել որպես բուն ուրարտական ծագման երևույթ: Ավելին, նման իրերից շատերի գտնվելու վայրն անգամ ստույգ հայտնի չէ, և դրանք զուրկ են հնագիտական կոնտեքստից³³: Հավելենք, որ օրինակ,

³² Այդ մասին տե՛ս **Bobokhyan A., Gilibert A., Hnila P.**, The Urartian God Quera and Metamorphosis of the 'Vishap' Cult, Over the Mountains and Far Away, Studies in Near Eastern history and archaeology, presented to Mirjo Salvini on the occasion of his 80th birthday (edited by P. Avetisyan R. Dan and Y. Grekyan), Arcaaeopress Archaeology, էջ 102–103:


³³ Տե՛ս օրինակ **Բաղայյան Մ.**, Ուրարտանին, Բագբարթուն (Բագմաշթուն) և Օձասարի արձանագրությունում հիշատակված «Խալդիի կինը», Հայոց պատմության և մշակույթի նվիրյալը (Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ընտրանի, նվիրված անվանի պատմաբան, թանգարանագետ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի ծննդյան 80-ամյակին), Երևան, 2018, էջ 116–117:

ուրարտական կայսրության կարևորագույն հոգևոր կենտրոններից մեկը համարվող Արդինի-Մուծաձիրի Խալդի աստծո տաճարում, ըստ ասորեստանյան աղբյուրի, եղել են Ասորեստանից, Խաբիսիից և Թաբալից տարատեսակ թանկարժեք առարկաներ³⁴:


Եվ/ կամ հենց բուն ուրարտական մշակույթին բնորոշ արտեֆակտներ են գտնվել կայսրության տարածքից դուրս (օրինակ՝ Օսերիա)³⁵, սակայն դժվար է կարծել, որ այդ առարկաները տարվել են ուրարտական աշխարհի ներկայացուցիչների կողմից: Այս պարագայում դրանք կարող էին լինել ընծաներ, իսկ ավելի հավանական է՝ հենց ավար:

³⁴ Տե՛ս օրինակ՝ Mayer W., Assyrien und Urartu I: Der Achte Feldzug Sargons II. im Jahr 714 V.Chr. (Alter Orient und und Altes Testament), Münster, 2013, էջ 133–137:


³⁵ Առարկաներից մեկն ուրարտական սաղավարտ է, որը կրում է Արգիշթի արքայի արձանագրությունը: Այդ մասին տե՛ս օրինակ Castelluccia M., Urartian Metalwork in Caucasian Graves, Studies in Caucasian Archaeology II, Tbilisi, 2014, էջ 88–89:



Նկար 1. Իշպուհնիի կողմից որպես ավար վերցված և Խաղիի աստծուն ծոնված օղերով նվիրատվական շղթան՝ Վերին Անձավ ամրոցից հայտնաբերվելու պահին: Belli O., Dinçol A., Dinçol B., նշվ. աշխ., էջ, 111, fig. 7.





Նկար 2. Նույն շղթայի համար N 1 օղը: Belli O., Dinçol A., Dinçol B., նշվ. աշխ., էջ, 114, fig. 8.




Նկար 3. Նույն շղթայի համար N 1
օղը: Գծանկար: Belli O., Dinçol A.,
Dinçol B., նշվ. աշխ., էջ, 115, drawing
3.

Նկար 4. Իշպուինիի, Մենուայի և
Ինուշայուայի անունները կրող
արձանագիր բրոնզե շղթայի N 2.
օղը: Գծանկար: CTU IV, էջ 25:





№ 5



Նկար 5. Իշպուիների, Մենուայի և Ինուշպուայի անունները կրող արծանագիր քրոնգե շղթայի N 3 օղը: Գծանկար: CTU IV, էջ 25:

Микаэл С. Бадалян, «Эребуни» ИАМЗ, к.и.н., «Рассказывают кольца»... Письменность как важный стандарт для образования урартской империи.

Находки двух цепей, состоящих из вотивных колец с клинописными надписями, обнаруженных в урартской крепости Верхний Андзав, могут служить предметным исследованием некоторых аспектов формирования урартского государства и империи. Первая цепочка с вотивными кольцами - важный источник для изучения царской и религиозной политики царя Ишпуини. Вторая упоминает последнего вместе с сыном Менуа и внуком Инушпуа. Контекст надписей свидетельствует о том, что они были взяты как трофеи, потом на них поставили надписи с клинописью с посвящением верховному богу Халди. Это важный пример процесса «урартофикации», связанного с созданием империи, который иллюстрирует политику создания урартских клинообразных надписей на завоеванных землях. Письменность была одним из важнейших инструментов для легитимизации пропаганды символической власти урартского монарха и его имперской идеологии.

Miqayel S. Badalyan, “Erebuni” HAMR, Candidate of Sciences in History, “The rings are telling”... The writing as an important standart for the formation of the Urartian empire.

The context of two chains consisting of inscribed votive rings discovered from the Urartian fortress of Upper Andzav may serve for a case study of some aspects of the formation of the Urartian state to empire. The first chain with votive five rings is an important source for the study of the royal and religious policy of the Urartian king Ishpuini. The second one mentions the latter along with his son Menua and grandson Inushpua. The context of the inscriptions testifies that they were taken as a booty, then inscribed and dedicated to the supreme god Haldi. It is a good example of “Urartification” process, concerning with the establishment of empire. It can be associated with the policy of creation of the cuneiform inscriptions in the conquered lands. The writing was one of the most important tools for the legitimization of the propaganda of the Urartian monarchs’ symbolic power and their imperial ideology.

ԳԵՎՈՐԳ Է.ԿԵՍՈՅԱՆ

ՀԱԱ, պ.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Միջազգային ճանաչում, դիվանագիտական ներկայացուցիչ, Հայաստանի առաջին Հանրապետություն, հյուպատոս, փոխհյուպատոս, հյուպատոսական գործակալ:

Միջազգային հարաբերությունները և դիվանագիտական փոխշփումները յուրաքանչյուր անկախ պետության կայացվածության, ինքնիշխանության ու ճանաչելիության կարևոր ապացույցներից են: Հայաստանի առաջին Հանրապետությունը, ծնունդ առնելով դժվարին պայմաններում ու թշնամական միջավայրում, կարողացավ հաղթահարել ներքին դժվարությունները, կայունանալ և դիվանագիտական հարաբերություններ հաստատել տասնյակ պետությունների ու միջազգային կառույցների հետ՝ հաստատելով համագործակցային և, գերազանցապես, բարեկամական հարաբերություններ:

Հայաստանի առաջին Հանրապետության մասին գրվել են բազմաթիվ աշխատանքներ, սակայն դիվանագիտական ներկայացուցչությունների ուսումնասիրման ուղղությամբ համապարփակ աշխատանք չի ստեղծվել: Որոշ չափով լու-

սաքանված են Վրաստանի, Ուկրաինայի և Ռուսաստանի ոչ խորհրդային ուժերի հետ ՀՀ դիվանագիտական փոխշփումները, իսկ մյուս երկրների առումով անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ³⁶։ Անկախության հռչակումից անմիջապես հետո Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարությունը ձեռնամուխ է լինում հարևան երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, ինչը և՛ կենսական անհրաժեշտություն էր, և՛ Բաթումի պայմանագրի պահանջ։ Առաջինը դիվանագիտական հարաբերություններ են հաստատվում Վրաստանի հետ, որը կամուրջ է դառնում ոչ միայն Վրաստանի, այլ նաև՝ արտաքին աշխարհի հետ հարաբերվելու հարցում։ 1918 թ. հուլիսի 24-ին³⁷ Արշակ Զամալյանը նշանակվում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Թիֆլիսում³⁸ և պաշտոնավարում մինչև նույն տարվա վերջը, քանի որ 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսված հայ-վրացական պատերազմի պատճառով դադարում է ներկայացուցչության գործունեությունը։ Կարևորելով Վրաստանի դերը շրջափակումից խուսափելու և արտաքին աշխարհի ելք

³⁶ Հոդվածում ներկայացվելու են ՀՀ դիվանագիտական ներկայացվածության աշխարհագրությունը, դիվանագիտական ներկայացուցիչները (որպես այդպիսիք դիտարկվելու են դեսպանները, ընդհանուր հյուպատոսները, հյուպատոսները, փոխհյուպատոսները (Եիայն այն վայրերը, որտեղ ավելի բարձր աստիճանի ներկայացուցիչ չի եղել), հյուպատոսական գործակալները) և նրանց նշանակման-ազատման ժամանակագրությունը։ Դիվանագիտական ներկայացուցիչների գործունեության ներկայացում սույն հոդվածում չենք կատարել՝ հաշվի առնելով ծավալի սահմանափակ լինելը։

³⁷ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (սյուսկետս)՝ ՀԱԱ), ֆ. 275, ց. 5, գ. 26, թ. 8։

³⁸ 1918 թ. սեպտեմբերի 28-ին կազմված Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ծառայողների ցուցակում պաշտոնավարման սկիզբը նշվում է հուլիսի 15-ը (ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 40, թ. 15)։

ունենալու առումով՝ արդեն 1919 թ. մարտի 6-ին³⁹ վերականգնված դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար է նշանակվում Լևոն Եվանգույանը⁴⁰, որին 1920 թ. ապրիլի 2-ին փոխարինում է Տիգրան Բեկզադյանը⁴¹: Արտաքին աշխարհի հետ հարաբերվելու գործում մեծ էր հատկապես Վրաստանի ծովափնյա քաղաքների դերը: 1918 թ. կեսերից ՀՀ հյուպատոսություններ են հաստատվում Վրաստանի մի շարք ծովափնյա քաղաքներում: 1918 թ. օգոստոսի 19-ին հյուպատոսություն է հիմնվում Սուխում քաղաքում⁴². հյուպատոս է նշանակվում Տիգրան Գյուզալյանը, որը պաշտոնավարում է մինչև 1919 թ. մարտ ամիսը⁴³: 1919 թ. նոյեմբերի 1-ի ՀՀ կառավարության որոշմամբ նրան փոխարինում է Վաղարշակ Սահակյանը⁴⁴, ով հյուպատոսության կազմավորման սկզբից զբաղեցրել է քարտուղարի պաշտոնը, իսկ 1919 թ. մարտից եղել է հյուպատոսի պաշտոնակատար: Նա պաշտոնավարել է մինչև 1920 թ. նոյեմբերը: ՀՀ գոյության վերջին մեկ ամսում Սուխումիում հյուպատոսի պարտականությունները կատարում է Վահրամ Ղասապյանը⁴⁵: Վրաստանի հաջորդ շրջանը, որտեղ հաստատվել է հայկական հյուպատո-

³⁹ Դիվանագիտական ներկայացուցչության գործունեության դադարի այս շրջանում կարևոր նշանակություն է ձեռք բերում Միքայել Թումանյանի գործունեությունը, ով կարողանում է ապահովել կապը Հայաստանի և Վրաստանի միջև, ինչպես նաև կարևոր դերակատարում ունենալ ներկայացուցչության վերականգնման գործում:

⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 75, թ. 27:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, գ. 139, թ. 76:

⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 33, թ. 62:

⁴³ Տե՛ս նույն տեղում, թ. 47:

⁴⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 62, թ. 10:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 572, թ. 22:

սություն, Բաթում քաղաքն էր: 1919 թ. փետրվարի 1-ին Բաթումում հյուպատոս է նշանակվել Գևորգ Եղիզարյանը⁴⁶, նրան 1919 թ. սեպտեմբերի 11-ին փոխարինել է Հարություն Չմշկյանը⁴⁷, վերջինիս՝ 1920 թ. մայիսի 10-ին՝ Միքայել Աթաբեկյանը⁴⁸, ով պաշտոնավարել է նաև Հայաստանի խորհրդայնացումից հետո:

Վրաստանի հետ գրեթե միաժամանակ դիվանագիտական ներկայացուցչություն է հաստատվում Օսմանյան կայսրությունում: 1918 թ. հուլիսին Կ. Պոլսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Ֆերդինանտ Թախթաջյանը⁴⁹, որը պաշտոնավարում է միջև Հայաստանի առաջին Հանրապետության անկումը⁵⁰: Թախթաջյանը, գործելով բավականին բարդ պայմաններում, կարողացել է ՀՀ ղեկավարությանը փոխանցել արժեքավոր տեղեկություններ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև ունեցել է միջնորդի դեր Հայաստանի Հանրապետության և մյուս պետություններում ՀՀ ներկայացուցիչների միջև:

Ադրբեջանի մուսավաթական կառավարության հետ երկարատև քննարկումներից հետո պաշտոնապես դիվանագիտական հարաբերություններ են հաստատվում Ադրբեջանի և

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 151, թ. 5:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 38:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 638, թ. 213:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 145, թ. 1ա:

⁵⁰ 1919 թ. փետրվարի 23-ին Արշակ Ջամալյանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 115, թ. 10) . իսկ 1920 թ. օգոստոսի 10-ին Հովհաննես Քաջազնունին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 415, թ. 152) նշանակվում են Կ. Պոլսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ սակայն պաշտոնավարման քնն անցնում:

Հայաստանի Հանրապետությունների միջև: 1918 թ. հոկտեմբերի 4-ին Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Տիգրան Բեկզադյանը⁵¹, ում թեկնածության դեմ մուսավաթական կառավարությունը չունեի առարկություններ: 1920 թ. փետրվարի 2-ին Բեկզադյանին փոխարինում է Մարտիրոս Հարությունյանը⁵², ով պաշտոնավարում է մինչև Առաջին Հանրապետության անկումը: 1920 թ. Բաքվում բացվել է նաև հյուպատոսություն: Հյուպատոս է նշանակվել Ներսես Ներսեսյանը⁵³, որը որպես ՀՀ Պարենավորման նախարարության լիազոր Բաքվում գործում էր 1918 թ. դեկտեմբերի 30-ից⁵⁴:

Հայաստանի առաջին Հանրապետությունը իր հարավային հարևանի՝ Պարսկաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատում է փոքր-ինչ ավելի ուշ: 1919 թ. հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի և Պարսկաստանի կառավարությունների միջև տեղի ունեցած գրագրության արդյունքում ձեռք է բերվում համաձայնություն Թեհրանում ՀՀ ներկայացուցիչ ունենալու հարցում⁵⁵: Այդ պաշտոնում նշանակվում է ռազմական և պետական նշանավոր գործիչ Հովսեփ Արղությանը⁵⁶, որը նոյեմբերի 1-ին Երևանից ճանապարհվում է Թեհրան և տեղ հասնում 1920 թ. հունվարի սկզբին: 1920 թ. վերջին Թավրիզում հիմնվում է նաև հյուպա-

⁵¹ Տե՛ս ՀԱՄ. ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 4:

⁵² Տե՛ս ՀԱՄ. ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 21:

⁵³ Տե՛ս նույն տեղում, գ. 198, թ. 258:

⁵⁴ Տե՛ս ՀԱՄ. ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 14:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 197, թ. 19:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 25:

տոսություն և հյուպատոսական գործակալ է նշանակվում Մուշեղ Տեր-Չաքարյանը⁵⁷:

1918 թ. վերջից ակտիվ դիվանագիտական հարաբերություններ են հաստատվում Ուկրաինայի հետ, որտեղ կար հոծ հայկական համայնք, ինչպես նաև՝ մեծ թվով գաղթականներ, գերիներ և անհրաժեշտ էր զբաղվել նրանց խնդիրների լուծմամբ: 1918 թ. հոկտեմբերի 22-ին Ուկրաինայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Գրիգոր Զամոյանը⁵⁸, ով գործուն քայլեր է ձեռնարկում Ուկրաինայում ՀՀ դիվանագիտական ցանցը ընդլայնելու ուղղությամբ: Հյուպատոսություններ են հիմնվում Ուկրաինայի մի շարք հայահոծ քաղաքներում: 1918 թ. սեպտեմբերին Ուկրաինայի հայկական կոլլեգիայի կողմից Օդեսայում հյուպատոս է նշանակվում Մակար Պոպովը⁵⁹: Նրա նշանակումը դիվանագիտական ներկայացուցիչ Զամոյանի կողմից հաստատվում է 1919 թ. սկզբին և հունվարի 13-ին նրան է փոխանցվում ընդհանուր հյուպատոսի հավատարմագիրը⁶⁰: 1919 թ. ապրիլի 5-ին՝ խորհրդային ուժերի առաջխաղացումից և Օդեսսան գրավելուց հետո Զամոյանը և Պոպովը հեռանում են այդտեղից⁶¹: Օդեսայում հյուպատոսի պաշտոնակատար է նշանակվում

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 545, թ. 52:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 73, թ. 78. տե՛ս նաև **Պետրոսյան Գ.**, Ուկրաինայում Հայաստանի առաջին Հանրապետության հյուպատոսական մարմինների գործունեության պատմությունից «Հայոց պատմության հարցեր». հ. 3, Երևան, 2002, էջ 136:

⁵⁹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 148, թ. 58:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 217, թ. 512:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, թ. 8:

Եղիշե Մելիքյանը⁶², որն այդ կարգավիճակում մնում է մինչև Հայաստանի առաջին Հանրապետության անկումը:

1918 թ. հոկտեմբերի 7-ին հարկովում հյուպատոս է նշանակվում Բժիշկ Մկրտիչ Մելիքյանը⁶³: Հյուպատոսությունը գործում է մինչև 1919 թ. հունվարի 10-ը⁶⁴, երբ խորհրդային ուժերը մտնում են հարկով և արգելում կառույցի գործունեությունը: 1919 թ. ապրիլի 15-ին Ուկրաինայի խորհրդային իշխանության Արտաքին գործերի ժողկոմատը Մ. Մելիքյանից պահանջում է հեռանալ հարկովից⁶⁵: Հունիսի սկզբին Մելիքյանը ժամանում է Երևան⁶⁶: Հուլիսի 4-ին նորից վերականգնվում է հարկովում ՀՀ հյուպատոսության գործունեությունը⁶⁷ և հյուպատոս է նշանակվում Ռուբեն Յուզբաշյանը՝ պաշտոնավարելով մինչև 1920 թ. փետրվար ամիսը⁶⁸: 1918 թ. հոկտեմբերից նա նաև ՀՀ պարենավորման նախարարության լիազորն էր հարկովում⁶⁹:

1918 թ. նոյեմբերին հյուպատոսություն է հիմնվում նաև Կիևում: Հյուպատոս է նշանակվում Ուկրաինայի հայկական կոմիսարիատի կուլեգիայի նախագահ գնդապետ Միքայել Լոմիձեն: Կիևի հյուպատոսական հիմնարկը դադարեցնում է

⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 2, գ. 1, թ. 29:

⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 380, թ. 13:

⁶⁴ Տե՛ս **Պետրոսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 143:

⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 380, թ. 3:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 13:

⁶⁷ Տե՛ս **Պետրոսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 143:

⁶⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 89, թ. 14:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 73, թ. 52:

իր գործունեությունը 1919 թ. դեկտեմբերի 16-ին, երբ քաղաքը խորհրդայնացվում է⁷⁰:

Հյուպատոսություն է հաստատվել նաև Սևաստոպոլում: Այստեղ հյուպատոսներ են եղել Արամ Թեֆեյանը⁷¹ և Հովհաննես Սաղաթեյանը⁷²:

Շարունակվում էին Ռուսաստանի հետ ավանդաբար զարգացող հարաբերությունները: 1919 թ. կեսերից ներկայացուցչություններ են հաստատվում Ռուսաստանի տարածքում գործող գրեթե բոլոր կազմավորումներում՝ ընդհանուր 9 քաղաքներում: Սկզբից հարաբերությունները զարգանում էին «սպիտակների» ճամբարում գտնվող ուժերի հետ: 1919 թ. մայիսի 23-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, Ալեքսանդր Ասրիբեկյանը հյուպատոս է նշանակվում Թերեքի շրջանում⁷³, հետագայում՝ հոկտեմբերի 15-ին, նրան փոխարինում է Հակոբ քահանա Սառիկյանը⁷⁴, ապա՝ 1920 թ. նոյեմբերի 3-ին Պետրոս Հովհաննիսյանը⁷⁵: Կառավարության նույն որոշմամբ Դոնի Ռոստովում դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Գրիգոր Չալխուշյանը⁷⁶: 1919 թ. մայիսի 23-ին Եկատերինոդարում՝ Դենիկինի մոտ, դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվել Հովհաննես Սաղաթեյանը⁷⁷: Հան-

⁷⁰ Տե՛ս Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 144–145:

⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 6, թ. 1:

⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 258:

⁷³ Տե՛ս նույն տեղում. գ. 43, թ. 109 շրջ.:

⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 4, գ. 7, թ. 1:

⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 465, թ. 40:

⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 109 շրջ.:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում: Տեղի դիվանագիտությանն ուղղված ՀՀ ԱԳՆ 1919 թ. փետրվարի 17-ի գրության մեջ արդեն տեղեկացվում է, որ Սաղաթեյանը

րապետության գոյության վերջին 2 ամիսներին նրան փոխարինում է Բախչի Սառայցը⁷⁸: 1919 թ. հուլիսի 1-ին Սիբիրում դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Ձամոյան Գրիգորը⁷⁹: Վերջինս պաշտոնավարում է մինչև 1920 թ. կեսերը և օգոստոսի 16-ին վերադառնում է Երևան⁸⁰: 1919 թ. կեսերից հյուպատոսություն է հաստատվում նաև Արմավիր քաղաքում: Հյուպատոսներ են նշանակվել նախ Ներվիլյանը, ապա՝ Յուրի Տամամշյանը⁸¹: Հյուպատոսություններ են գործել նաև Ստավրոպոլ, Պետրովսկ, Կրասնովոդսկ (ներկայումս Թուրքմենստանի կազմում է գտնվում) քաղաքներում՝ համապատասխանաբար հյուպատոսներ են եղել Արսեն Բալանթարը⁸², Բախչի Աթայանը⁸³, Քրիստաֆոր Կարապետովը⁸⁴:

1920 թ. կեսերին՝ Լևոն Շանթի գլխավորած ՀՀ պատվիրակության Մոսկվա կատարած պաշտոնական այցից հետո, դիվանագիտական հարաբերություններ են հաստատվում նաև խորհրդային ուժերի հետ: 1920 թ. օգոստոսի 17-ին Մոսկվայում դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Եղիազար Եղիազարյանը⁸⁵:

նշանակվում է ներկայացուցիչ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 342, թ. 3), սակայն կառավարության որոշումը լինում է ավելի ուշ:

⁷⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 258 շրջ.:

⁷⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 210, թ. 2:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 610, թ. 14:

⁸¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 258 շրջ.:

⁸² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 594, թ. 14: Ա. Քալանթարը պաշտոնավարել է 1920 թ. հունվարի 16-ից մինչև նույն տարվա կեսերը: 1920 թ. հունիսի 19-ին բնակարանի խուզարկությունից հետո ձերբակալվել է խորհրդային իշխանության կողմից:

⁸³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 258 շրջ.:

⁸⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 545, թ. 52:

⁸⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 249, թ. 545:

Միջազգետքում հավաքված հայ գաղթականության խնդիրների լուծման, ինչպես նաև նրանց Հայաստան վերադարձը կազմակերպելու համար, 1919 թ. հունիսի 5-ին Իրաքում Բաղդադ քաղաքում, դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Արսեն Կիտուրը⁸⁶: Մեկ տարի անց՝ 1920 թ. հունիսի 18-ին, նրան այս պաշտոնում փոխարինում է Լևոն Շաղոյանը⁸⁷, որը պաշտոնավարում է մինչև Առաջին Հանրապետության անկումը:

1920 թ. հունվարի 19-ին Հայաստանի առաջին Հանրապետության փաստացի ճանաչումը նոր հնարավորություններ է ստեղծում դիվանագիտական հարաբերությունների զարգացման և դիվանագիտական ներկայացվածության աշխարհագրության ընդլայնման համար: Նոր ներկայացուցչություններ են բացվում եվրոպական մի շարք պետություններում: Նախ նշենք, որ 1918 թ. Բեռլին և Փարիզ էին ուղարկվել պատվիրակություններ, համապատասխանաբար, Համո Օհանջանյանի և Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Համո Օհանջանյանի՝ Բեռլինից Փարիզ տեղափոխվելուց հետո, Բեռլինում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Զեյնա Գրինֆիլդը՝ պաշտոնավարելով մինչև Առաջին Հանրապետության անկումը⁸⁸: Բեռլինում հիմնվում է

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 355, թ. 402:

⁸⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 469, թ. 161:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 68, թ. 33: 1920 թ. հոկտեմբերի 30-ից նա համարվել է նաև ՀՀ ներկայացուցիչը Ավստրիայում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում (տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. I, գ. 420, թ. 53):

նաև հյուպատոսություն և հյուպատոս է նշանակվում Ավետիս Ավետիսյանը⁸⁹:

1920 թ. ապրիլի 16-ի Ավետիս Ահարոնյանի առաջարկության հիման⁹⁰ վրա ապրիլի 17-ին ՀՀ արտգործնախարարությունը ներկայացուցիչներ է նշանակում եվրոպական մի շարք քաղաքներում: Ֆինլանդիայում՝ Հելսինգֆորս քաղաքում, ընդհանուր հյուպատոս է նշանակվում Միքայել Տեր-Ասատուրովը⁹¹, որը 1920 թ. հոկտեմբերին, հյուպատոսի պաշտոնով, տեղափոխվում է Յալթա, իսկ Հելսինգֆորսում ընդհանուր հյուպատոս է նշանակվում Սիդնիկոֆ Չմշկյանը⁹²: Բուլղարիայում՝ Սոֆիա քաղաքում, դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Կարո Պալյանը⁹³, որին նոյեմբերի 8-ին փոխարինում է Լիպարիտ Նազարյանը⁹⁴: Սոֆիայում գործել է նաև ՀՀ հյուպատոսություն: 1920 թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ ԱԳՆ-ն, բավարարելով Հակոբ Մավյանի՝ 1920 թ. հունիսի 1-ի իրեն ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ խնդրագիրը⁹⁵, վերջինիս նշանակում է ընդհանուր հյուպատոս⁹⁶: 1920 թ. ապրիլի 17-ին Շվեյցարիայում՝ Ժնև քաղաքում, հյուպատոս է նշանակվում Լևոն Նևրուզը⁹⁷, մարտի 2-

⁸⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 420, թ. 4:

⁹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 80:

⁹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 577, թ. 1:

⁹² Տե՛ս նույն տեղում, գ. 545, թ. 52:

⁹³ Տե՛ս նույն տեղում, գ. 432, թ. 12:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 26:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 19:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 25:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 537, թ. 2:

ին Հռոմում դիվանագիտական ներկայացուցիչ⁹⁸ է նշանակվել Միքայել Վարանդյանը⁹⁹:

1920 թ. փետրվարի 2-ից մինչև հանրապետության անկումը Լոնդոնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ է եղել Հովհաննես (Խան) Մասեհյանը¹⁰⁰: Հոկտեմբերի 29-ին Մանչեստր քաղաքում հյուպատոս է նշանակվել Հ. Ղամբերյանը¹⁰¹:

1920 թ. կեսերին ներկայացուցչություն է հիմնադրվում Ռումինիայում: Հունիսի 12-ին Բուխարեստում ընդհանուր հյուպատոս է նշանակվում տեղի հայոց ազգային միության նախագահ Հարություն Խնդիրյանը¹⁰²: «Ցանկանալով կանոնադրել և ավելի սերտ յարաբերության մեջ լինել Ռումանեայի հալ գաղութի հետ, մօտիկից ծանօթանալ նրա պետքերի և մանաւանդ նկատի ունենալով գաղութի շահերի պաշտպանության անհրաժեշտութիւնը Կառավարութիւնը ընդառաջ գնալով Միութեանդ խնդիրքին, որոշեց Բուխարեստում հաստատել Հայաստանի Ընդհանուր հիւպատոս....», - կարդում ենք: Խնդիրյանին ուղղված ՀՀ կառավարության գրության

⁹⁸ ՀՀ կառավարությունը իր 1919 թ. դեկտեմբերի 29-ի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 90, թ. 140) և 1920 թ. փետրվարի 2-ի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 21) նիստերի ընթացքում քննարկել էր Հռոմում դիվանագիտական ներկայացուցիչ ունենալու և դրա վերաբերյալ Իտալիայի կառավարության համաձայնության հարցերը ու արժանացրել հավանության:

⁹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 481, թ. 41:

¹⁰⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, թ. 21: Մասեհյանի դիվանագիտական արտոնագիրը տրվել է միայն 1920 թ. օգոստոսի 11-ին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 609, թ. 4):

¹⁰¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 609, թ. 8:

¹⁰² Տե՛ս նույն տեղում, գ. 404, թ. 8:

մեջ¹⁰³: Նրան նույնների 8-ին փոխարինում է Գրիգոր Սայանը¹⁰⁴: Ռումինիայի Սամոշիվար (Արմենոպոլիս) քաղաքում հոկտեմբերի 29-ին հյուպատոս է նշանակվում Գուստավ Պապը¹⁰⁵: 1920 թ. օգոստոսի 30-ին Աթենք քաղաքում դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Տիգրան Չայյանը¹⁰⁶: 1920 թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ ԱԳՆ-ն ներկայացուցիչներ են նշանակվում հետևյալ քաղաքներում. Բելգրադ (Հարավսլավիա)՝ փոխհյուպատոս Սավա Գեորգիևիչ¹⁰⁷, Միլան (Իտալիա)՝ Կարապետ (Կարբիս) Դիլսիզյան¹⁰⁸, Անվերս (Բելգրադ) հյուպատոս Տիգրան Չամքերթեն¹⁰⁹, Մարսել (Ֆրանսիա)՝ հյուպատոս Տիգրան Միրզայան¹¹⁰: Մինչ այդ՝ 1920 թ. օգոստոսին, Փարիզում ընդհանուր հյուպատոս էր նշանակվել Գրիգոր Սնապյանը¹¹¹:

«... ՀՀ շահերը ներկայացնելու և փոխառությանը աջակցելու նպատակով Ճապոնիայի Յոկոհամա քաղաքում 1920 թ. հուլիսի 22-ին հյուպատոս է նշանակվում այստեղ մեծ ճանաչում ունեցող Դիանա Աբգարը¹¹², ով դառնում է աշխարհում առաջին կին դիվանագիտական ներկայացուցիչը: ՀՀ արտգործնախարարության ֆինանսների նախարարությանն ուղղված գրության մեջ Դ. Աբգարի նշանակման հիմնավորում է ներ-

¹⁰³ Նույն տեղում, թ. 6:

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 432, թ. 26:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 492, թ. 260:

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 616, թ. 3:

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 492, թ. 258:

¹⁰⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 119, թ. 8:

¹⁰⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 492, թ. 261:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 262:

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 616, թ. 3:

կայացվում այն, որ «Համաձայն մեր ստացած տեղեկությունների, ծայրագոյն Արեւելքում, ուր Տ. Աբգարը ունի մեծ հոչակ, այս թոպէիս գտնւում են մեծ քանակութեամբ հարուստ հայեր,- ասվում է գրության մեջ,- մինիստրութիւնս այն կարծիքին է, որ այդ երկու անձնատրութիւնները (խոսքը նաև մեծահարուստ Գորոյանի մասին է, ով պետք է փոխանցեր Աբգարի հավատարմագիրը – Գ.Կ.) կարող են մեծ աջակցութիւն ցույց տալ մեր փոխառութեան պարտաթղթերը տարածելու գործում»¹¹³:

ՀՀ ներկայացուցչություններ են հիմնվել նաև Աֆրիկա և Ամերիկա աշխարհամասերում: Հաշվի առնելով հոծ հայ համայնքի գոյությունը՝ ներկայացուցիչներ են նշանակվել Եգիպտոսում և Եթովպիայում: Հիմք ընդունելով Եգիպտոսի հայոց ազգային միության և «Յուսաբեր» լրագրի խմբագրի գրությունները ՀՀ վարչապետին՝ 1920 թ. օգոստոսի 7-ին Կահիրեում դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Խոսրով Զոհրապը¹¹⁴: «Յուսաբեր»-ի խմբագիրը ներկայացուցչի նշանակումը հիմնավորում է այսպես. «.... անյապաղ ներկայացուցիչ մը ուղարկել Եգիպտոս զբաղվելու համար հայ քաղաքացիներու արձանագրութեանց, նրանց ճանապարհորդութեան, ժառանգական և այլ նման գործերու հետ, որովհետև 20,000-ի մօտեցող մեր գաղութին մէջ ամենօրեայ են նման գործեր, իսկ ներկայացուցիչ ունենալը անհրա-

¹¹² Տե՛ս նույն տեղում, գ. 492, թ. 173:

¹¹³ Նույն տեղում, գ. 610, թ. 1:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 587, թ. 9:

ժեշտ»¹¹⁵: Այդ պաշտոնում Խ. Ջոհրապի թեկնածության մասին նշում է. «Գալով անձնավորութեան, Ազգային միութեան այժմու նախագահը, որու մասին կը գրեմ Ձեզ, Խոսքով Ջոհրապն է, իրավաբան և ծանօթ օտար և տեղական լեզուներու, արևմտահայ և առհասարակ բոլոր հոսանքներէ յարգուած մարդ մը, որ ամեն կերպով կրնայ օգտակարապէս վարել իրեն յանձնուելիք ներկայացուցիչի կամ քաղաքական գործակալի պաշտօնը»¹¹⁶: 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Եգիպտոսի դիվանագիտական շրջանի մեջ է մտցվում նաև Սուդան քաղաքը: 1920 թ. ապրիլի 17-ին Ջիբութի քաղաքում (ներկայումս անկախ պետություն է) դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Մարտիկ Կևորկովը (Գևորգյան)¹¹⁷, իսկ Ադիս Աբեբայում՝ փոխիյուպատոս Հայկ Պատարբանը¹¹⁸: Նույն ժամանակ Վաշինգտոնում (ԱՄՆ) դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվել Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարոն)¹¹⁹, իսկ Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա)՝ Իգնատիուս Էթյանը (Էթիեն Բրազիլ)¹²⁰: Նրա դիվանագիտական շրջանի մեջ էին մտնում նաև Արգենտինան և Չիլին:

Ցավոք, այնպես է ստացվել, որ ՀՀ ներկայացուցիչներ են նշանակվել նաև հայկական տարածքներում: Այսպես. 1918 թ. սեպտեմբերի 4-ին Ալեքսանդրապոլում Օսմանյան բանակին

¹¹⁵ Նույն տեղում, թ. 3-4:

¹¹⁶ Նույն տեղում, թ. 5:

¹¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, թ. 80:

¹¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 578, թ. 1:

¹¹⁹ Տե՛ս Նույն տեղում, գ. 431, թ. 77:

¹²⁰ Տե՛ս Նույն տեղում, գ. 507, թ. 1:

կից ՀՀ ներկայացուցիչ է նշանակվում Գրիգոր Խոյեցյանը¹²¹, դեկտեմբերի 20-ին Կարսում՝ Ալեքսանդր Տեր-Հակոբյանը¹²², 1919 թ. ապրիլի 2-ին Շուշիում՝ Միքայել Արզումանյանը¹²³:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը դիվանագիտական ներկայացուցիչներ է ունեցել 4 աշխարհամասերի 23 պետությունների 48 քաղաքներում (ներառյալ հայկական 3 քաղաքները)՝ ընդհանուր թվով 69 ներկայացուցիչ, որից դիվանագիտական ներկայացուցիչներ (դեսպաններ)՝ 25 քաղաքում 28 ներկայացուցիչ, ընդհանուր հյուպատոս՝ 6 քաղաքում, 9 ընդհանուր հյուպատոս, հյուպատոս՝ 20 քաղաքում, 26 հյուպատոս, փոխհյուպատոս՝ 3 քաղաքում, 3 փոխհյուպատոս, հյուպատոսական գործակալ՝ 2 քաղաքում, 2 ներկայացուցիչ: Եղել են նաև հյուպատոսի 2 պաշտոնակատարներ, որոնք պաշտոնավարել են բավական երկար ժամանակ, բայց հյուպատոս չեն նշանակվել:

Դիվանագիտական ներկայացուցիչների հիմնական գործառույթներն էին ՀՀ շահերի ներկայացումն ու իրենց պաշտոնավարման պետությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, հայկական պահանջատիրության ներկայացումը, հայերի ցուցակագրումն ու թվաքանակի արձանագրումը, ՀՀ քաղաքացիներին ու ՀՀ մեկնողներին անձնագրերի տրամադրումը, հայ գաղթականների շահերի պաշտպանությունը, նրանց հայրենիք վերադարձի կազմակերպումը, հայերի սեփականության ժառանգության իրավունքի պաշտ-

¹²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 126, թ. 1:

¹²² Տե՛ս նույն տեղում, գ. 92, թ. 13, 15:

¹²³ Տե՛ս նույն տեղում, գ. 243, թ. 79:

պանությանը նպաստելը, ապրանքների գնումների իրականացումն ու դրանց Հայաստան տեղափոխման կազմակերպումը և նմանատիպ այլ հարցեր:

ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկել նաև դիվանագիտական ներկայացուցիչների աշխատանքների կարգավորումը իրավական հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Այդ նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր՝ «Հայաստանի Հանրապետության հյուպատոսական կանոնադրությունը», «Երկրու երկրների միջև հյուպատոս նշանակելու մասին պայմանագրի ձևը», «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիաների ընդհանուր հյուպատոսների մասին», «Դիվանագիտական գրագրության իրականացման մասին հրահանգները», «Հյուպատոսական գանձումների մասին տարիֆը», հաստատվում է «ՀՀ արտասահմանյան անցագրի» ձևը և այլն:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, աստիճանաբար ճանաչվելով մյուս պետությունների ու միջազգային կառույցների կողմից, կարողանում է ստեղծել դիվանագիտական ներկայացուցիչների լայն ցանց: Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին ու բացթողումներին՝ աստիճանաբար կայունանում և կայանում է միջազգային փոխշփումների ոլորտը:

Геворг Э. Кесоян, НАА, к.и.н., Дипломатическое представительство первой Республики Армения.

Несмотря на тяжелейшие условия первая Республика Армения (1918-1920 гг.) смогла добиться международного признания и иметь дипломатических представителей в разных уголках мира. Начиная с установления дипломатических отношений с соседними государствами, она постепенно распространила их по всему миру: от Японии до Соединенных Штатов Америки и Аргентины, от Эфиопии до Сибири. Всего на 4 континентах было назначено 70 представителей – в 48 городах 23 государств.

Gevorg E. Kesoyan, NAA, Candidate of Sciences in History, Diplomatic representation of the First Republic of Armenia.

The first republic of Armenia, despite the most difficult conditions, was able to achieve international recognition and have diplomatic missions in different parts of the world. Starting with the establishment of diplomatic relations with neighboring countries, it gradually spread to distant territories, from Japan to the United States and Argentina, from Ethiopia to Siberia. A total of 70 representatives were appointed in 48 cities in 23 countries on 4 continents.

ՀԱՄՈՒՄ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳԱՄ պարմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

**ԲԱՔՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-1922 ԹԹ.)**

Բանալի բառեր՝ Միքայել Աթաբեկյան, Իսահակ Դովլաթյան, Բաքու, ներկայացուցչություն, գործունեություն, տնտեսություն, դիվանագիտություն, քաղաքականություն:

1920 թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանի խորհրդայնացումից մինչև 1922 թ. մարտին Անդրկովկասյան Դաշնության և դեկտեմբերին Խորհրդային Միության կազմավորումը, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունն (ՀՍԽՀ) ինքնուրույնության որոշակի տարրեր, որի դրսևորման ձևերից էր արտերկրում սեփական դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների առկայությունը:

1920 թ. դեկտեմբերի 6-ին հրապարակած հրամանով Հայաստանի հեղկոմը լուծարեց նախկին կառավարության դիվանագիտական ու հյուպատոսական մարմինները: Հատուկ սահմանվում էր, որ «խորհրդային հանրապետություններում հայկական միսիաների լիկվիդացիան կատարվելու է

խորհրդային միսիանների անմիջական հսկողությամբ»¹։ Այնուհետև խորհրդային Հայաստանը լիազոր ներկայացուցչություններ և հյուպատոսություններ հիմնեց խորհրդային հանրապետություններում և հարևան ոչ խորհրդային պետություններում։ Լիազոր ներկայացուցիչներ և հյուպատոսներ նշանակելու իրավասությունը Հայիեղկոմն իրեն էր վերապահել։ Այդ իրավասությունը 1921 թ. մայիսին փոխանցվեց ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին։ Ընդգծենք, որ ՀՍԽՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների գործունեության սկզբունքների, իրավասությունների վերաբերյալ խորհրդային Հայաստանի իշխանությունները հատուկ որոշումներ, հրահանգներ չեն ընդունել։ Այս հարցերը կարգավորվել են խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի համապատասխան դեկրետներով ու հաստատած կանոնադրություններով²։

Հայաստանի հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի հրամանի ուժով՝ զբաղեցրած պաշտոնից ազատվողների թվում էր խորհրդային Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը, որը 1920 թ. փետրվարի 27-ին այդ պաշտոնում փոխարինել էր Տիգրան Բեկզադյանին՝ պաշտոնավարելով մինչև դեկտեմբերի 2-ը³։ Այն է՝ նախկին

¹ ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I (1920 թ. նոյեմբերի 29 – 1921 թ. փետրվարի 18), Լեջմիածին, 1921, էջ 7։

² Տե՛ս **Եսայան Ա.Ա.**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920–1922), Երևան, 1967, էջ 376, 390։

³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 275, ց. 6, գ. 16, թ. 10–13, գ. 31, թ. 133–137, 146, գ. 38, թ. 195։

կառավարության ներկայացուցիչներին աշխատանքից ազատելու հրամանի հրապարակումից առաջ Մ. Հարությունյանը, փաստացի, աշխատանքից ազատված էր:

Խորհրդային Հայաստանի արտերկրյա ներկայացուցչություններից առաջինը հիմնվել է Բաքվի լիազոր ներկայացուցչությունը: Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող առաջին օրերին հայտնի հեղափոխական գործիչ Միքայել Աթաբեկյանը նշանակվեց Ադրբեջանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ: Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության անցումը տեղի է ունեցել սահուն կերպով: Ամենայն հավանականությամբ, Մ. Հարությունյանին աշխատանքից ազատել և Մ. Աթաբեկյանին պաշտոնի է նշանակել Հայհեղկոմի փոխնախագահ Ալեքսանդր Բեկզադյանը, որը Հայաստանի խորհրդայնացման պահին (02.12.1920 թ.) գտնվում էր Բաքվում: Նա Երևան ժամանեց դեկտեմբերի 9-ին և արդեն հաջորդ օրվանից սկսեց իրականացնել արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի պարտականությունները⁴:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նոր իշխանություններն ունեին երկու կարևոր խնդիր. ամրապնդել խորհրդային վարչակարգը և երկիրը դուրս բերել սոցիալ-տնտեսական ծանր կացությունից: Խորհրդայնացված Հայաստանում փոքր թիվ էին կազմում կոմունիստական կու-

⁴ Տե՛ս Մուքիսայան Հ. Կ., ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմավորման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ. Միջազգային հարաբերություններ. քաղաքագիտություն», Երևան, 2010, N 130.6, էջ 57–58:

ասկցության անդամները: Բանն այն է, որ 1920 թ. մայիսյան ապստամբության օրերին մասամբ ձերբակալվել, արտաքսվել, մասամբ էլ Հայաստանից հեռացել էին քիչ թե շատ հայտնի հայ կոմունիստները⁵: Ուստի, ՀԿ(Բ)Կ կենտկոմն անմիջապես ձեռնամուխ եղավ մյուս խորհրդային հանրապետություններից կոմունիստ գործիչների հավաքագրմանը:

Խորհրդային Հայաստանի պետական իշխանության տարբեր ոլորտներում պաշտոնավարելու համար, հատկապես, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին շաբաթներին, կոմունիստ կադրեր հավաքագրելու ու նրանց Հայաստան ուղարկելու գործում զգալի աշխատանք կատարեց Ադրբեջանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը: Հայտնի են 1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. հունվար ամիսներին Բաքվից Երևան ուղևորվող տասնյակ գործիչներին լիազոր ներկայացուցչության կողմից տրված մանդատներ, որտեղ նշված է, որ վերջինները մեկնում են Երևան՝ «ՀԿ(Բ)Կ կենտկոմի տրամադրության տակ»⁶:

Հայաստանում խորհրդային իշխանության գոյության առաջին ամիսներին երկրի իշխանությունները Բաքվի ներկայացուցչության միջոցով էին Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի ղեկավարներին տեղեկություններ փոխանցում ՀՍԽՀ-ում առկա դրության և, ի մասնավորի, նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ: 1921 թ. հունվարի 21-ին Մ. Աթաբեկյանին ուղղված հեռագրում

⁵ Տե՛ս **Ալիխանյան Ս.Տ.**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Երևան, 1966, էջ 271–272:

⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 29, թ. 25–84, գ. 147, թ. 1–46:

ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմի փոխանորդ Ասքանազ Մռավյանը տեղեկացնում էր Ալեքսանդրապոլում ու շրջակայքում թուրքերի կատարած թալանի, բռնությունների մասին, անդրադառնում հանրապետության տնտեսական վիճակին: «Մեր դրությունը կրիտիկական է», -նշում էր Ա. Մռավյանը և խնդրում արագացնել անհրաժեշտ մթերքների փոխադրման գործը⁷: Բաքվի ներկայացուցչությունն իր գործունեությունը շարունակեց նաև 1921 թ. փետրվարի 18-ին Երևանում կատարված իշխանափոխությանը հաջորդող օրերին:

Լիազոր ներկայացուցչությունը զբաղվում էր նաև Հայաստանին առնչվող գիտակրթական ու մշակութային ամենատարբեր խնդիրներով: Այս առումով հետաքրքրական է ականավոր հայագետ Հակոբ Մանանդյանի՝ Բաքվում գտնվող անձնական գրադարանը Երևան տեղափոխելու հարցը: Ձեռնամուխ լինելով գրադարանի տեղափոխությանը՝ Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը 1921 թ. մայիսի 6-ին Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությանն ուղղված գրությամբ տեղեկացնում էր, որ հայագետի եղբայրը՝ Արսեն Մանանդյանը, լիազորված է կազմակերպելու գրադարանի փոխադրումը և խնդրում է «ըստ ամենայնի աջակցություն ցույց տալ» այդ հարցում: Նշվում էր, որ գրքերը Հ. Մանանդյանին անհրաժեշտ են իր աշխատությունների շարադրման համար⁸: Սակայն որոշ խոչընդոտներ

⁷ Հեղափոխական կոմիտեները Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), կազմող՝ Մ. Մ. Մահրադյան. Երևան, 1974, էջ 113:

⁸ ՏՆԿ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 44, թ. 3:

էին առաջացել գրադարանի տեղափոխման ժամանակ, ուստի լիազոր ներկայացուցիչ Մ. Աթաբեկյանը ստիպված է եղել միջամտել: Հունիսի 15-ին ՀՍԽՀ արտգործժողկոմատին վերջինս հայտնում է, թե ինքը պայման է դրել, որ գրքերը Երևան տեղափոխվելուց հետո պետք է գտնվեն արտգործժողկոմատի իրավասության տակ: Հունիսի 28-ին լուսժողկոմատին ուղղված գրությամբ, որին կից ուղարկվում է նաև Մ. Աթաբեկյանի՝ հունիսի 15-ի գրությունը, արտգործժողկոմատը տեղեկացնում է գրադարանի՝ Բաքվից Երևան հաջող տեղափոխության և Հ. Մանանդյանի համաձայնությամբ Երևանի համալսարանին հանձնելու մասին⁹:

1921 թ. հունիսի վերջերին Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչի պաշտոնում Մ. Աթաբեկյանին փոխարինեց ներքին գործերի նախկին ժողկոմ Իսահակ Դովլաթյանը: Այդ նշանակման մասին արտգործժողկոմ Ա. Մռավյանը 1921 թ. հունիսի 21-ին հեռագրով տեղեկացրեց Խորհրդային Ադրբեջանի արտգործժողկոմ Միրզա-Դավուդ Հուսեյնովին¹⁰: Պրոֆ. Ա. Եսայանը գրում է, թե «Սովետական Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը Ադրբեջանի հեղկոմին կից սկսեց գործել 1921 թ. հուլիսից»¹¹: Հեղինակը, փաստորեն, ՀՍԽՀ կառավարության կողմից նոր ներկայացուցչի նշանակումը շփոթել է ներկայացուցչության ստեղծման հետ, որը, ինչպես տեսանք, շատ ավելի վաղ էր տեղի ունեցել:

⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 10–11:

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 45, թ. 29:

¹¹ Եսայան Ա.Ա., նշվ. աշխ., էջ 382:

Ի. Դովլաթյանի պաշտոնավարման շրջանում ՀՍԽՀ Բաքվի ներկայացուցչությունը դարձավ առավել սերտ կապող օղակ Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի կառավարությունների միջև: ՀՍԽՀ արտգործոժողկոմատը ադրբեջանական իշխանություններին տարբեր հարցերի վերաբերյալ տեղեկություններ էր փոխանցում Բաքվի իր լիազոր ներկայացուցչի միջոցով: Այսպես՝ ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմատը 1921 թ. օգոստոսի 16-ին արտգործոժողկոմատին տեղեկացրեց Դիլիջանի շրջանում ադրբեջանցի քոչվորների կատարած անկարգությունների մասին: Օգոստոսի 19-ին, հեռագրով այդ մասին հայտնելով Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ի. Դովլաթյանին, արտգործոժողկոմ Ա. Մռավյանը հրահանգում է Ադրբեջանի ղեկավարներից պահանջել ազդելու քոչվորների վրա¹²:

Ներկայացուցչության գործունեության ուղղություններից մեկն էլ Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև գոյություն ունեցող ամենից խնդրահարույց հարցի՝ սահմանագծային խնդիրների վերաբերյալ քննարկումներին մասնակցությունն էր: Խնդիրն այն է, որ ՀՍԽՀ հյուսիս-արևելյան սահմանահատվածում (Նախկին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառ) հայկական և ադրբեջանական սահմանակից գյուղերի միջև առկա հողային-անտառային-ջրային վեճերը 1921 թ. սեպտեմբերից սրվել էին: Սահմանաշերտում ադրբեջանցի գյուղացիների կողմից սահմանի խախտման և հայկական գյուղերում կատարած թալանի, վի-

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 98, թ. 60–61:

ճելի հողամասերի բռնագավթման վերաբերյալ հայկական կողմի բողոքների մի մասը ՀՍԽՀ արտգործժողկոմատը Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությանը փոխանցում էր Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ի. Դովլաթյանի միջոցով¹³:

Լիազոր ներկայացուցչության և մասնավորապես Ի. Դովլաթյանի գործունեության կարևոր ուղղություններից էր նաև Խորհրդային երկու պետությունների միջև նախկինում եղած տնտեսական կապերի վերականգնմանն ու առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանը նպաստելը: Մասնավորապես. 1921 թ. աշնանը Ի. Դովլաթյանը ջանքեր գործադրեց ադրբեջանական «Ազտյուզ» ընկերության միջոցով աղաղման նյութեր ձեռք բերելու նպատակով, որն անհրաժեշտ էր Խորհրդային Հայաստանում կաշվի վերամշակման ծավալները վերականգնելու համար: Երկրի նավթամթերքների սուր պակասը լրացնելու համար առաջնային խնդիր էր «Ազնեվթ» ընկերության հետ համագործակցությունը, որը հնարավոր դարձավ արդեն 1922 թ. գարնանը¹⁴:

Համագործակցություն հաստատելու փորձեր եղան նաև Բաքվի հայ մեծահարուստների հետ: Նրանցից որոշները (Հ. Քոչարով, Ա. Տեր-Կարապետով, Օգանեզով, եղբայրներ և

¹³ Տե՛ս Խաչատրյան Կ.Հ., Սուքիասյան Հ.Կ., Բաղայան Գ.Մ., Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920–1930-ական թվականներին, Երևան, 2020, էջ 68–69:

¹⁴ Տե՛ս Բալասանյան Գ., Խորհրդային հանրապետությունների հետ ՀՍԽՀ առևտրատնտեսական առնչությունների պատմությունից (1921–1922 թթ.), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 10, Երևան, 2009, էջ 247–249:

ուրիշներ) ներկայացուցչությանն ուղղված դիմումներում պատրաստականություն էին հայտնել գյուղատնտեսական գործիքներ արտադրելու նպատակով (ինչի պահանջարկը ՀՍԽՀ-ում մեծ էր) իրենց պատկանող գործարանները, հաստոցները Խորհրդային Հայաստանի կառավարության տրամադրության տակ դնել՝ դրանց տնօրեններ աշխատելու պայմանով: Նրանց շահագրգրվածությունն առաջին հերթին պայմանավորված էր միանգամայն տեղին մտավախությամբ, որ իրենց ունեցվածքը Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից կպետականացվի: Չնայած գործադրված ջանքերին՝ այս համագործակցության փորձերը հաջողությամբ չպսակվեցին¹⁵:

1921 թ. երկրորդ կեսին սկսված Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորման գործընթացի պայմաններում Մոսկվայի համար այլևս աննպատակահարմար էր դառնում այդ հանրապետություններում փոխադարձաբար դիվանագիտական ներկայացուցիչներ պահելը: ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյից ստացած հրահանգով՝ ՀՍԽՀ ժողկոմխորհը 1921 թ. նոյեմբերի 16-ին որոշեց լուծարել խորհրդային հանրապետություններում գործող ՀՍԽՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները: Բացառություն էր արվում միայն Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության դեպքում: Թիֆլիսում և Բաքվում գործող ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունները

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 245–246:

պետք է լուծարվեին մեկ ամսվա ընթացքում¹⁶։ Դեկրետի մասին արտգործոժողկոմատը տեղեկացրեց իր ներկայացուցչություններին։ Ինչպես այս առնչությամբ միանգամայն դիպուկ նշում է պրոֆ. Վ. Ղազախեցյանը, «Հայաստանի արտաքին հարաբերությունների բնագավառում միավորիչ գործընթացները զարգացան այնքան արագ, որ նրա համապատասխան գերատեսչությունները դադարեցին գործելուց ավելի վաղ, քան կկազմավորվեին Անդրկովկասյան դաշնությունը և ԽՍՀՄ-ը»¹⁷։ Ընդգծենք, որ ներկայացուցչությունների լուծարման գործընթացը սահմանվածից ավելի երկար տևեց։

Խորհրդային Ադրբեջանում և, մասնավորաբար, Բաքվում բնակվող մեծաթիվ հայության ֆինանսատնտեսական հնարավորությունները Խորհրդային Հայաստանի վերաշինման օգտին ծառայեցնելու նպատակով 1922 թ. փետրվարի 25-ին, Ի. Դովլաթյանի ջանքերով ու նախագահությամբ, Բաքվում հիմնվում է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասնաճյուղ։ Բաքվի ՀՕԿ-ի առաջին նիստը տեղի է ունեցել 1922 թ. փետրվարի 28-ին¹⁸։ ՀՕԿ-ի մասնաճյուղն իր գործունեությունն իրականացնում էր վարչա-ֆինանսական, քարոզչական-կազմակերպչական և գաղթականական հանձնաժողովների միջոցով։ ՀՍԽՀ բնակչությանն օժանդակելու նպատակով Բաքվում զանազան միջոցառումներ էին կազմակերպվում։ Մասնաճյուղը գործեց մինչև 1925 թ. հուլիս ամիսը՝

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 27, թ. 21, ֆ. 114, ց. 1, գ. 65, թ. 43, գ. 126, թ. 17։

¹⁷ Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 254։

¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 1, թ. 32–34։

որոշակի ներդրում ունենալով Խորհրդային Հայաստանի քայքայած տնտեսության վերականգնման գործում¹⁹:

Չնայած Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 16-ի դեկրետի պահանջին՝ Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունն իր գործունեությունը շարունակել է մինչև 1922 թ. փետրվարը՝ աստիճանաբար վերածվելով տնտեսական ներկայացուցչության: Լիազոր ներկայացուցչության լուծարումից հետո Ի. Դովլաթյանը նշանակվեց Ադրբեջանում ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցիչ: Մասնավորապես, 1922 թ. մարտի 21-ին Ադրբեջանի Ժողկոմխորհի նախագահ Ն. Նարիմանովին ուղղված Ա. Մռավյանի հեռագրում, ուր պահանջվում էր Ի. Դովլաթյանին տրամադրել Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության արխիվը, նա հիշատակվում է իբրև Հայաստանի տնտեսական ներկայացուցիչ²⁰:

Այսպիսով՝ 1920 թ. դեկտեմբերին Բաքվում կազմակերպված ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը գործել է մինչև 1922 թ. փետրվարը: Լիազոր ներկայացուցիչներ Միքայել Աթաբեկյանի և Իսահակ Դովլաթյանի առջև խնդիր էր դրված Խորհրդային Ադրբեջանի կառավարության մոտ ներկայացնել Հայաստանի շահերը, նպաստել երկու պետությունների միջև առկա խնդիրների (հատկապես, քոչի և սահմանների) կարգավորմանը, տնտեսական ու մշակութային կապերի վերականգնմանը, Ադրբեջանում ապրող հայության

¹⁹ Տե՛ս Մակարյան Լ.Ա., Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921–1937 թթ.), Երևան, 2018, էջ 159–164:

²⁰ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 114, ց. 1, գ. 222, թ. 15:

տնտեսական ներուժը ներգրավել Խորհրդային Հայաստանի տնտեսական վերաշինությանը: 1922 թ. փետրվարին աշխատանքից ազատված Ի. Դովլաթյանը դարձավ Բաքվում Հայաստանի վերջին դիվանագիտական ներկայացուցիչը. Հայաստանի և Ադրբեջանի միջև այլևս դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին:

Амо К. Сукиасян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент, Из истории деятельности Полномочного представительства Советской Армении в Баку (1920–1922 гг.)*

Организованная в марте 1919 г. в столице Азербайджана Баку дипломатическая миссия Республики Армения после советизации Армении (2 декабря 1920 г.) была распущена. В начале декабря 1920 г. в Баку было создано Полномочное представительство Советской Армении, действовавшее до февраля 1922 г. Полномочными представителями были Микаэл Атарбемян (декабрь 1920 г. – июнь 1921 г.) и Исаак Довлатян (июнь 1921 г. – февраль 1922 г.).

Полномочное представительство Советской Армении в Баку занималось урегулированием проблем между Советской Арменией и Советским Азербайджаном, также вопросами культурного и экономического сотрудничества. Представительство стремилось задействовать экономический потенциал проживающих в Азербайджане армян, для помощи Армении и роста ее экономики.

Hamo K. Sukiasyan, *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History, Associate Professor, From the history of the activities of the Plenipotentiary Representation of Soviet Armenia in Baku (1920–1922)*

In March 1919, the diplomatic mission of the Republic of Armenia organized in Baku, the capital of Azerbaijan, was dissolved after the sovietization of Armenia (December 2, 1920). Instead, the Plenipotentiary Representation of Soviet Armenia was established in Baku in early December 1920, which operated until February 1922. Mikayel Atarbekyan (December 1920 – June 1921) and Isahak Dovlatyan (June 1921 – February 1922) were the plenipotentiaries of Armenia in Baku.

The Plenipotentiary Representation of Soviet Armenia in Baku dealt with the settlement of problems between Soviet Armenia and Soviet Azerbaijan, issues of cultural and economic cooperation, trying to involve the economic potential of the Armenians living in Azerbaijan for the recovery of the Armenian economy.

ՄԱՐԻԱՄ Մ. ՀԱԿՈՔՅԱՆ
ԵՊՀ պարմության ֆակուլտետ

**ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ
ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ
ՋԱՆՔԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.**

Բանալի բառեր՝ ազգային դպրոցներ, թեմական առաջնորդարան, եկեղեցի, ֆինանսական աջակցություն, հոգևորականներ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայաստանյայց առաքելական եկեղեցու սիյուոքյան թեմերը, հոգևոր-կրոնական ծառայություններից բացի, ստանձնում են գաղթական հայության ապաստանության, ինչպես նաև նրանց ազգային կրթության կազմակերպման բարդ աշխատանքը: Ազգային կրթության կարևոր օջախներ են դառնում ազգային դպրոցները (վարժարանները): Վերջիններիս ֆինանսավորման հիմնական դերը վերապահված էր թաղական խորհուրդներին, որոնք թեմական առաջնորդարանի վարչական կառուցվածքի մաս էին հանդիսանում և այդ գումարները փոխանցում էին թեմական առաջնորդարաններին պատկանող ազգային կալվածքներից (խանութներ, կալվածքներ և այլ շինություններ):

Ազգային կրթության կազմակերպումը բուլղարահայոց թեմում) 19-րդ դարավերջից սկսած, Օսմանյան կայսրությունից տարագրված արևմտահայության Բուլղարիայում հաստատվելուց հետո, տեղի համայնքը դառնում է սփյուռքյան ակտիվ կրթամշակութային կենտրոններից մեկը: Թեև, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ ակտիվությունը թուլանում է բուլղարահայ դպրոցների մեծ մասի փակման հետևանքով, սակայն պատերազմի ավարտից հետո իրավիճակը կտրուկ փոխվում է: Արդեն 1922 թ. դպրոցների վերաբացմանը զուգընթաց, գաղթականների նոր հոսքի հետևանքով, դրանց թիվը աճում է՝ հասնելով 16-ի, որոնք ինչպես ազգային, այնպես էլ մասնավոր կարգավիճակ ունեին, քանի որ գործում էին ինչպես համայնքային ղեկավար մարմնի (թեմական առաջնորդարան), այնպես էլ հայ և օտար կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ, ինչպիսիք էին Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), «Գերմանական բարեսիրաց միությունը», «Կարմիր խաչ»-ի տեղական մասնաճյուղը և այլն¹:

Ազգային կրթության կազմակերպման որակի վրա մեծ հետք է թողնում Առաջին աշխարհամարտից հետո Բուլղարիայի սահմանադրության մեջ կատարված կրթական բարեփոխումը, ըստ որի յոթամյա կրթությունը պարտադիր է դառնում, որից հետո, ի տարբերություն սփյուռքյան մի շարք այլ համայնքների, այստեղի հայկական դպրոցները ոչ թե փակվեցին, այլ փոխակերպվեցին պրոգրմնագիտների: Յոթամյա

¹ Տե՛ս Ղասաբյան 2. Մ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի

արողիմնագիաներ բացվեցին Պլովդիվում՝ ի դեմս Ազգային և Մխիթարյան դպրոցների, Սոֆիայում՝ Մեսրոպյան ճեմարանի², որի փակվելուց հետո արողիմնագիայի աստիճան ստացավ Արամյան դպրոցը։ Մնացած դպրոցները չորսամյա էին, և այն ավարտելուց հետո երեխաները ընդունվում էին արողիմնագիա, իսկ նյութապես ապահովվածներն իրենց ուսումը շարունակում էին գիմնագիաներում։

Պլովդիվում գործում էր երկու կրթարան, որից՝ Վարդանանց անունը կրող Ազգային դպրոցը Բալկաններում ամենահին ազգային կրթարաններից մեկն էր³։ Պլովդիվում մեկ այլ երկսեռ վարժարան, իր մանկապարտեզով, գործում էր թե-

պասմության, Երևան, 1986, էջ 191։

² Մեսրոպյան ճեմարանը հիմնվել է 1923 թ. սեպտեմբերի 9-ին Պլովդիվում՝ Գևորգ Մեսրոպի նախաձեռնությամբ։ 1924 թ. այն տեղափոխվել է Սոֆիա, իսկ 1929-1930 թթ. այն վերածվել է գիմնագիայի, իսկ կրթությունը դարձել՝ տասնամյա։ Հարկ է նշել, որ Մեսրոպյան ճեմարանի ուսուցչական կազմում գտնվում էր Էտիրնեի նախկին առաջնորդական փոխանորդ Մեսրոպ քահանա Անտոնյանը, որը վարում էր կրոնի դասերը։ Դպրոցը գործում էր հիմնականում տեղի եկեղեցու բյուջեից, տրամադրվող հասույթներով։ 1930-ական թվականներին վարժարանի տարեկան բյուջեն կազմում էր 210.000 լւ, որից 10.000-ը տրամադրում էր քաղաքապետարանը, 72.000-ը՝ թաղական խորհուրդը՝ 40.000-ը ազգային տուրքերից, 42.000-ը ամսավճարներից, իսկ գումարի մյուս մասնաբաժինը հավաքվում էր տարեվերջյան հանդեսներից, այլ միջոցառումներից ստացված եկամուտներից (տե՛ս **Ղասաբյան Չ. Մ.**, նշվ. աշխ., էջ 196, նաև՝ «Հայրենիք», Բոստոն, 15 ապրիլ, 1930)։

³ Ազգային դպրոցը հիմնադրվել էր 1834 թ.։ Դպրոցը սկզբում նախատեսված է եղել միայն տղաների համար, իսկ հետագայում դրան կից սկսել է գործել նաև աղջիկների համար նախատեսված Վառվառյան դպրոցը։ 1925-1926 թթ. ուս. տարվանից Վարդանանց դպրոցը վերածվել է թերի միջնակարգ դպրոցի։ 1932-1933 թթ. դպրոց հաճախում էր 850 աշակերտ, որից 373-ը տղա, 484-ը աղջիկ։ 1944 թ. այս երկու դպրոցների միավորման արդյունքում ստեղծվում է Վարդանանց-Վառվառյան ազգային վարժարանը։

մական առաջնորդարանի շենքում⁴, որտեղ 1925 թ. սովորում էր 602 աշակերտ: Այս հաստատությունը գործում էր եկեղեցական կալվածքներից ստացված եկամուտների հաշվին: Տեղի եկեղեցին, որպես կալվածք, ուներ նաև 3 տուն, որոնք ձեռք էր բերել տարիների ընթացքում⁵:

Պետք է նշել, որ կրթարաններից շատերը, որոնք առանձին հոգաբարձություն ունեին, հաճախ առճակատման մեջ էին տեղի թաղական խորհրդի հետ, ինչը առաջին հերթին բացասական էր ազդում տվյալ դպրոցի կրթական կյանքի վրա: 1920-ական թվականներին նման խճճված իրավիճակ էր ստեղծվել ամենահին ազգային վարժարաններից մեկի՝ Վառնայի Սահակյան ազգային հաստատության շուրջ⁶: Վարժարանի հոգաբարձությունը բաղկացած էր 5 հոգուց և ընտրվում էր 2 տարի ժամկետով: Կառույցը փորձում էր անկախ և միանձնյա վարել կրթական գործը՝ անտեսելով թաղական խորհրդի լիազորությունները, սակայն թաղական խորհրդին հաջողվում է որոշ ժամանակով դադարեցնել այդ անջատողականությունը և վստահորեն շարունակել իրեն լիազորած գործողությունները: 1922–1923 թթ. ուս. տարվա համար եր-

⁴Բուլղարահայոց թեմական առաջնորդարանը մինչև Սոֆիա տեղափոխվելը գործել է Պլովդիվում:

⁵ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 409, ց. 1, գ. 5075, թ. 7 շրջ.:

⁶ Սահակյան ազգային վարժարանը կառուցվել է 1896–1897 թթ.՝ 1896 թ. մարտի 7-ին հրկիզված վարժարանի վայրում, որին զոհ էր գնացել նաև կաթողիկոսական պատվիրակ Մկրտիչ վարդապետ Տերունյանը: 1930-ականներին վարժարանն ուներ 393 աշակերտ և 11 ուսուցիչ:

կու կառույցները խորհրդակցաբար ընտրում են ուսուցիչների ցանկը⁷:

Ինչ վերաբերում է մայրաքաղաք Սոֆիային, ապա մինչև 1935 թ. այստեղ առաքելապատկան եկեղեցի չկար: Այդ իսկ պատճառով, շատ տոնական արարողություններ կատարվում էին հայկական գերեզմանատան Սբ. Լուսավորիչ մատուռում⁸: Ուստի նման պայմաններում ազգային կրթության կազմակերպման մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Դեռևս 1921 թ., Բուլղարիայի հայոց հոգևոր իշխանության և կառավարության միջոցներով, նոր եկեղեցու շինարարության համար հատկացվել էր 3600 քառ. մ տարածք: Սակայն եկեղեցու շինարարական աշխատանքները լայն թափով չէին ընթանում: Միայն 1935 թ. հունիսի 23-ին՝ Սբ. Էջմիածնի տոնի առիթով կատարվում է շինության հիմնարկեքը⁹: Եռահարկ շինության (հայտնի էր «Ազգային տուն» անվամբ), առաջին հարկը ծառայելու էր բուլղարական եկեղեցի, որտեղ ընդունվելու էր 300-400 հավատացյալ, երկրորդ հարկում գոր-

⁷ Որոշ ժամանակ անց, ֆինանսական խնդիրներով պայմանավորված, այս կառույցների միջև լարված մթնոլորտը կրկին սրվում է (տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 3 ապրիլ, 1930):

⁸ Հայտնի է, որ Սոֆիայում առաջին եկեղեցին կառուցվել է 1673 թ.՝ հայ առևտրական Աբրո Չելեբիի միջոցներով: 1896 թ. Կ. Պոլսի պատրիարքի կողմից բահանա նշանակված Սարգիս Ֆեյիջյանի ջանքերով՝ 30 աշակերտներով սկսում է գործել Արամյան վարժարանը: Առաջին աշխարհամարտի տարիներին փակված դպրոցը վերաբացվում է 1922 թ.՝ 120 երկսեռ աշակերտներով: Վարժարանը հիմնված էր տոհմային կրթության կազմակերպման սկզբունքով, դասավանդվում էին մայրենի լեզու և Հայոց պատմություն, ինչպես նաև բուլղարերեն և ֆրանսերեն, որոնք պարտադիր էին: Ցանկության դեպքում, մասնավոր հիմունքով դասավանդվելու էին նաև անգլերեն և գերմաներեն (տե՛ս «Ալիք», Ֆիլիպե, 21 հոկտեմբեր, 1923):

⁹ Հաստատության հիմքը դնելու հանդիսավոր արարողությունը:

ծելու էր ազգային վարժարանը, երրորդում՝ թեմական առաջնորդարանը¹⁰: Նախնական հաշվարկներով, հետագա շինարարական ծախսերի համար հարկավոր էր 1.700.000 լւա: Յավոք, Բուլղարիայում ազգային-կրթական կյանքով հետաքրքվող և աջակցող բարերարներ չկային: Խնայողության համար դադարում է նաև որպես առաջնորդարան ծառայող շինության վարձակալությունը¹¹: Ինչ վերաբերում է դպրոցի գործունեությանը, Բուլղարիայի հայոց թեմական առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանը, գիտակցելով դրա առաջնայնությունը, վերջինիս համար նվիրաբերում է 200.000 լւա, դրանից հետո վարժարանը, ի պատիվ նրա, կրում է «Հովակիմյան» անունը: 1937–1938 թթ. ուս. տարվա մեկնարկին Հովակիմյան դպրոցը¹² իր առաջին աշակերտներին է ընդունում, իսկ 1937թ.՝ Մեսրոպյան ճեմարանի փակվելուց հետո, սաներից շատերը տեղափոխվում են այստեղ, որից հետո այն վերածվում է պրոգիմնագիայի¹³:

Պրոգիմնագիաններից զատ, հայաբնակ քաղաքներում, առաքելապատկան եկեղեցիներից՝ գրեթե յուրաքանչյուրին կից գործում էին դպրոցներ և նախակրթարաններ, որտեղ կրթության կազմակերպման հիմնական գործը ստանձնում

¹⁰ Ըստ Չ. Ղասաբյանի՝ շինությունը կրել է «Հայկական տուն» անունը, որի շինարարությունը սկսվել է 1933 թ. և եղել է քառահարկ: Առաջին հարկում գործել են մի քանի խանութներ, որոնցից ստացված վարձավճարները հատկացվել են Արամյան վարժարանին, որը գտնվել է երրորդ հարկում: Երկրորդ հարկում Մր. Աստվածածին եկեղեցին էր, իսկ չորրորդում՝ թեմի առաջնորդարանը, թաղական խորհրդի և դպրոցի հոգաբարձության գրասենյակները (տե՛ս **Ղասաբյան Չ.Մ.**, նշվ. աշխ., էջ 40):

¹¹ Տե՛ս ՀԱԱ ֆ. 409, ց. 1, գ. 5118, թ. 7:

¹² Տե՛ս «Նոր լուր», Կ. Պոլիս, 14 հունվար, 1939:

էին տեղի հոգևորականները: Դասերը հիմնականում ընթանում էին եկեղեցուն կից գործող սենյակներից որևէ մեկում, որոնք հաճախ գործում էին վարձակալական հիմունքով:

Սյիվենի եկեղեցապատկան դպրոցը¹⁴ գործում էր դեռևս 1830 թ.՝ հայկական թաղամասում, որը գտնվում էր քաղաքի կենտրոնում: Եկեղեցին կոչվում էր Սբ. Ստեփաննոս, իսկ կից գործող վարժարանը՝ Սբ. Լուսավորիչ: Դասավանդումը կատարվում էր հայերեն (Կ. Պոլսի Ազգային Կենտրոնական վարչության ուսումնական ծրագրով) և բուլղարերեն լեզուներով¹⁵: Դպրոցը պահվում էր Ս. Ստեփանոս եկեղեցու կալվածքներից ստացվող եկամուտներով, որոնք փոքրաքանակ լինելով հանդերձ, այնուամենայնիվ կարողանում էին հոգալ վարժարանի գոյությունը:

1920-ականների սկզբին Բուրգասում գործող Ս. Խաչ եկեղեցին¹⁶ փայտաշեն շինություն է ձեռք բերում, որը ծառայում է որպես ազգային վարժարան: Շինության վերին հարկի վարձակալության տրամադրման արդյունքներից ստացված գումարը կրկին բաշխվում էր եկեղեցու կարիքներին և վարժարանին, որտեղ սովորում էր 150 երկսեռ աշակերտ¹⁷:

¹³ Տե՛ս **Ղասաբյան Չ.Մ.**, նշվ. աշխ., էջ 195:

¹⁴ Տե՛ս «Նոր օր», Սևանիկ, 15 ապրիլ, 1931:

¹⁵ Տե՛ս **Ղասաբյան Չ.Մ.**, նշվ. աշխ., էջ 46–47:

¹⁶ Եկեղեցու կառուցման թվականի վերաբերյալ տարակարծություններ կան: «Բրիստոնյա Հայաստան» հանրագիտականում այն ներկայացվում է 1850-ական թվականների կառույց, իսկ թեմական առաջնորդի տեղեկագրում՝ 1887 թ. կառույց (տե՛ս ՀԱԱ ֆ. 409, ց. 1, գ. 5076, թ. 9 շրջ.–10, «Բրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 185):

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5076, թ. 9, շրջ.–10:

Վառնայում գործող դպրոցը կոչվում էր Սիսակյան, որի նախնական շենքը կառուցվել էր 1863 թ., սակայն հետագայում վերակառուցվել է՝ ճարտարապետ Թորոս Թորամանյանի նախագծով: Եկեղեցին և վարժարանը ևս ունեին իրենց կալվածքները¹⁸:

Այթոսի եկեղեցին միայն կիրակի օրերին էր ծառայում որպես հոգևոր կառույց և ժամերգություն անցկացվում: 1920-ական թվականներին կրթարանի ուսուցիչը տեղի հոգևորական Հովսեփ քահանա Քեոսյանն էր, իսկ վերջինիս՝ Հունաստան տեղափոխվելուց հետո այդ պաշտոնը վարում է Օննիկ Նախնիքյանը¹⁹: Նման սկզբունքով էր գործում նաև Հասկովոյում գործող երկահարկանի շինությունը, որի առաջին հարկը ծառայում էր, որպես եկեղեցի, իսկ երկրորդը՝ դպրոց: Հասկովոյի համայնքում ազգային-կրթական կյանքը, նոր ձևավորված լինելով հանդերձ, լավ էր կազմակերպված: Տեղի ազգային վարժարանի նախակրթարանը ուներ 4 դասարան, որտեղ 1929 թ. դրությամբ սովորում էին 200 աշակերտ²⁰:

1924 թ. Նովա Զագորայում տեղի հոգևորական Հովսեփ քահանա Քերսերյանի ջանքերով դպրոց է բացվում, որը, ցավոք, երկար կյանք չի ունենում և 1930-ականների սկզբին փակվում է:

Հարկ է նշել, որ Բուլղարիայում, բացի եկեղեցապատկան դպրոցներից, գործում էին նաև մասնավոր դպրոցներ, որոնք

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

¹⁹ Տե՛ս Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյանի հավաքածու, *communautes France, Egipte, Bulgaria*:

²⁰ Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 06 հոկտեմբեր, 1929:

հովանավորվում էին տարբեր բարեգործական կառույցների, ազգային կուսակցությունների կողմից և նույնքան մեծ դերակատարում ունեին համայնքային կրթական կյանքի կայացման գործում, որքան թեմական առաջնորդարանի վերահսկողության տակ գտնվող դպրոցները²¹:

Ակնհայտորեն, Առաջին համաշխարհային պատերազմից հետո բուլղարահայ ազգային դպրոցների համար նոր ուղի է բացվում: Բուլղարահայ համայնքում մեծ ավանդ ունեցած ազգային կրթարաններից շատերը վերածվում են պրոգիմնագիաների, իսկ մյուս քաղաքներում եկեղեցիներին կից գործում են դպրոցներ, որտեղ կրթության կազմակերպումն իրականացնում էին հոգևորականները:

Ազգային կրթության կազմակերպումը ռումինահայոց թեմում) Ռումինիայի հայոց թեմի հիմնադրումից հետո (1928 թ.), ենթադրելի էր, որ ռումինահայության ազգային կյանքի բարելավումը պետք է ավելի արագ տեմպերով ընթանար, սակայն դա տեղի չունեցավ: Պատճառն այն է, որ ռումինահայերի թվաքանակը չէր գերազանցում 200.000-ը, ուստի թեմական առաջնորդը Ռումինիայի Ծերակոյտի (սենատ) անդամ չի դառնում, դրանից ելնելով կառավարությունը հայ-

²¹ Նմանատիպ կրթարանների շարքին էր դասվում Ռուսելում գործող Մեսրոպյան վարժարանը: Ծինության տարածքը նվիրաբերել էր Փիլիպոս Բիրոյանը, ճարտարապետը՝ Կարապետ Ալախյանն էր: Վարժարանին կից գործում էր մանկապարտեզ, ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում Կ. Խաչի տեղի մասնաճյուղը, որը աջակցում էր նաև մյուս վարժարաններին: 1923 թ. հոկտեմբերի 15-ից Ստարա Չագորայի տեղական մարմինների ջանքերով, սկսում է գործել Սահակ Մեսրոպ երկսեռ վարժարանը, որտեղ սովորում էր 68 աշակերտ: Հաստատությունը գործում էր Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ջանքերով, որն ամեն ամիս 2000 լևա էր տրամադրում:

կական համայնքի առջև որևէ պետական հոգածության պարտավորվածություն չի ստանձնում: Այդ իսկ պատճառով հայկական եկեղեցիների և վերջիններիս ենթակա կառույցների հոգածությունը կենտրոնանում է նորաստեղծ թեմական առաջնորդարանի վրա, որը նյութական մեծ պաշարներ չուներ՝ ազգային-եկեղեցական կյանքի գործունեության համար:

Այնուամենայնիվ, առկա խնդիրներով հանդերձ, որոշակի կրթամշակութային առաջընթաց է տեղի ունենում, որը, թերևս, անմիջականորեն պայմանավորված էր թեմական առաջնորդարանի հիմնադրումով:

Դեռևս 1927 թ., Բուխարեստում հայ մտավորականների ջանքերով, հայկական եկեղեցուն կից սկսում է գործել կենտրոնական գրադարան²², որը մեծ ճանաչում է ստանում: Գրադարանի բացումը կատարվում է հոկտեմբերի 9-ին՝ Թարգմանչաց տոնի օրը: Բացման խոսքը վերապահված էր թեմական առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյանին: Գրադարանի առաջին հավաքածուները կազմում են տարիներ շարունակ եկեղեցու վերնահարկում մոռացության մատնված գրքերը, երեսունից ավելի հազվագյուտ ձեռագրերը, կաթողիկոսական կոնդակները²³: Հովսեփի և Վիկտորիա Տուտյան ընտանիքի նվիրատվության շնորհիվ՝ գրադարանին կից բացվում է նաև «Հայ Մշակույթի տուն» անունը կրող թանգա-

²² Աղբյուրներում հաճախ նշվում է նաև կենտրոնական մատենադարան:

²³ Էջմիածին, Ե տարի, 1948, թիվ 5-6, մայիս-հունիս, էջ 71:

րանը²⁴, որը կարճ ժամանակ անց համալրվում է հայ հավաքորդների նվիրատվություններով²⁵:

Առաջնորդարանը քահանաներ հրավիրելու և նրանց նյութական կարիքները հոգալու միջոցներ չունեի²⁶: Այդ հանգամանքով պայմանավորված՝ ռումինահայ հայափոխ քաղաքներից շատ քչերը կարողացան ազգային դպրոցներ ունենալ, քանի որ այդ դպրոցներում հաճախ դասավանդում էին տեղի հոգևորականները²⁷: Ազգային կրթարաններ գործում էին Կոնստանցայում, Բուխարեստում, Կալացում, Բազարչիքում, Սիլիստրայում:

Բուխարեստի ազգային վարժարանը ուներ երկու մասնաճյուղ, որտեղ դեռևս 1920 թ. հաճախում էր ընդհամենը 90 աշակերտ, սակայն գաղթականների ապաստանելուց հետո աշակերտների թիվը զգալի աճում է՝ 1923 թ. հասնելով 263-ի, իսկ 1936–1937 թթ. այդ թիվը հասնում է 370-ի: 1937 թ. դրությամբ վարժարանի բյուջեն կազմում էր 1.178.000 լեյ, որից 407.000-ը տրամադրում էր Բուխարեստի թաղական խորհուրդը՝ առաջնորդարանին պատկանող կալվածքների եկամուտներից, մյուս մասը հատկացվում էր աշակերտների

²⁴ Թանգարանը առավել հարստանում է նշանավոր արևելագետ և հայագետ Հակոբ Սիրունու կառավարման տարիներին: 1940-ական թվականներին թանգարանը դադադարել է գործել և վերաբացվել է 1987 թ.:

²⁵ Տե՛ս Սմբատյան Ն., Վարդանյան Մ., Հայ արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրությունը Ռումինիայում, http://www.armin.am/-images/menus/1947/Smbatyan_Vardanyan.pdf (02.03.2021):

²⁶ Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 24 հունվար, 1935:

²⁷ Տե՛ս Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյանի հավաքածու, Հայ գաղութներ, Ռումինիա, (այսուհետև՝ Հայ գաղութներ, Ռումինիա):

ամսավճարներից²⁸: Դպրոցի սաները, ուսուցիչների հսկողությամբ, ամեն կիրակի այցելում էին եկեղեցի և մասնակցում կիրակնօրյա պատարագներին, ինչը առաքելական հավատքի պահպանության կարևոր գործոն էր²⁹: Բարձր դասարանի աշակերտները նույնիսկ մասնակցում էին եկեղեցական երգեցողությանը³⁰: Դպրոցը ըստ պատշաճի տոնում էր Թեմական խորհրդի կողմից եկեղեցական տոնացույցով կազմակերպած տոները և սգո օրերը, օրինակ՝ Թարգմանչաց և Համբարձման տոները, Ամանորը, Վարդանանց տոնը, Ապրիլի 24-ը, մայիսի 28-ը և այլն³¹: 1936 թ. դպրոցն ուներ 4 նախակրթական և 3 միջնակարգ բաժիններ, և մեկ մանկապարտեզ, իսկ աշակերտների թիվը 400 էր, ուսուցիչների թիվը՝ 14: Տարեվերջյան քննությունների ընթացքում սաները բարձր առաջադիմություն էին ցուցաբերում: Դրա լավագույն ապացույցն այն է, որ 1931 թ. 150 աշակերտներից պետական ավարտական քննությունը անբավարար են ստանում ընդհամենը 4 հոգի³²: Դպրոցը, ինչպես որ ռումինահայ մյուս ազգային դպրոցները, առաջնորդվում էր ինչպես թեմական, այնպես էլ՝ պետական ծրագրերով³³: Դպրոցին մեծ աջակցությամբ

²⁸ Տե՛ս «Յառաջ», Փարիզ, 06 ապրիլ, 1937:

²⁹ Տե՛ս «Հայաստան», Բուքրեշ, 12 ապրիլ, 1931:

³⁰ Տե՛ս Հայ զաղութներ, Ռումինիա:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս նույն տեղում:

³³ Դեռևս 1913 թ. թեմական առաջնորդարան չունենալու պատճառով ազգային վարժարանը հայտնվել է փակման սպառնալիքի տակ, քանի որ շենքային վատ պայմաններ ունենալուց բացի, թաղական խորհուրդը պարտաճանաչորեն չի վճարել կառույցի մոտ 800 ֆրանկ կազմող ամսական ծախսերը. այն դեպքում, երբ ըստ Ուսումնասիրաց ընկերական վարչության

յուն էր ցուցաբերում «Գթության խաչ»-ի Բուխարեստի մասնաճյուղը: Այն, բացի նյութական աջակցությունից, ամառային արձակուրդների ընթացքում աշակերտների համար էքսկուրսիաներ էր կազմակերպում³⁴ :

Սիլիստրայի վարժարանի հիմնադրումը տեղի էր ունեցել դեռևս 17-րդ դարի 50-60-ական թվականներին³⁵: Դարերի պատմություն ունեցող այս կրթարանը Առաջին համաշխարհային պատերազմից հետո կորցնում է իր հայկական դիմագիծը: Շենքը տրամադրվում է ռումինական դպրոցական վարչությանը: Հայ և ռումինացի աշակերտները միայն կեսօրից հետո էին հաճախում դպրոց, և ընդհամենը երկու ժամ էր տրամադրվում մայրենի լեզվի ուսուցմանը: 1931 թ. ռումինացի աշակերտների մուտքը արգելվում է, սակայն դասավանդման տեսանկյունից փոփոխություն չի կատարվում: Դպրոցն ուներ 4 դասարան և մանկապարտեզ: Ընդհանուր առմամբ սովորում էին 10 տղա, 11 աղջիկ: Մնացյալ դպրոցների նման այն առանձին բյուջե չուներ և հասույթներից ամենաշատը

տվյալների, տարեկան եկեղեցական միջոցներից ստացված եկամուտները կազմել են մոտ 25-30.000 ֆրանկ (տե՛ս ֆ. 57, ց. 2, գ. 1936, թ. 1 շրջ.):

³⁴ Տե՛ս «Ցառաջ», Փարիզ, 07 հունվար, 1937:

³⁵ Դպրոցի նախնական կառուցման պատմությունը կապված է Ավետիս վարդապետի անվան հետ, ով Ղրիմի պատերազմից հետո տեղափոխվել է Սիլիստրա և տեղի եկեղեցու բակում դպրոցական շենք կառուցել: Ըստ տեղեկությունների, 1866 թ. Փարիզից ուսուցչություն անելու համար մի հայ ուսուցիչ է ժամանել այստեղ, ով մի կողմ դնելով հոգևոր կրթությունը, փորձել է աշակերտներին դասավանդել եվրոպական կրթական չափորոշիչներով, որը, սակայն, մերժվել է: 1869-1873 թթ. դպրոցի ուսուցիչ է կարգվել Անդրանիկ վարժապետը, ով հետագայում դարձել է Բուքրեշի (Բուխարեստ) հոգևոր հովիվը՝ տե՛ր Հարություն անունով: Նա Սիլիստրայի համայնքի հայապահպանության ուղղությամբ մեծ ջանք ու եռանդ է ներդրել (տե՛ս Հայ գաղութներ, Ռոմինիա):

փոխանցում էր եկեղեցին՝ ազգային կալվածքներից: Պատերազմից հետո՝ մինչև 1931 թ., դպրոցը ունեցել է 75 շրջանավարտ³⁶:

Թաղական խորհրդի ենթակայության տակ գործող հաջորդ դպրոցը գտնվում էր Կոնստանցայում, որը հիմնվել էր 1878 թ.: 1933 թ. դրությամբ Հայկազյան վարժարանը ուներ 186 աշակերտ՝ չորս դասարանով: Ուսուցիչների թիվը վեցն էր, որոնցից երկուսը՝ ազգությամբ ռումինացի: Հայկազյան վարժարանը գործում էր տեղի եկեղեցուն կից: Վարժարանը առանձին հոգաբարձության մարմին չուներ, և ազգային-կրթական ոլորտներին վերաբերող գործերը ամբողջությամբ իրականացվում էին Թաղական խորհրդի միջոցով: Սաների դասագրքերի և գրենական պիտույթների հոգածությամբ զբաղվում էր «Հայ աշակերտական միությունը»³⁷:

1938 թ. դրությամբ աշակերտների թիվը նվազում է՝ հասնելով 136-ի³⁸: Սաների թվաքանակի նվազմանը զուգընթաց դպրոցը շարունակում է ազգային ոգով և նկարագրով կրթության կազմակերպումը: 1938 թ. տարեվերջյան հանդեսին, ահա, թե ինչ խոսքով է դպրոցի տնօրեն Թ. Պետրոսյանը դիմել սաներին. «... Վառ պահեցէք Ս. Մեսրոպալ օճախը և անով բորբոքեցէք հայրենասիրութեան հուրը ձեր գաւակներու հոգիներուն մէջ: Իսկ դուք, սիրելի սաներս, յիշեցէք միշտ դպրոցին մէջ ձեր ստացած հայրենասիրութեան պատ-

³⁶ Տե՛ս «Արագ», Բուրբեշ, 11 օգոստոս, 1932:

³⁷ Տե՛ս Հայ գաղութներ, Ռումինիա:

³⁸ Տե՛ս «Յառաջ», Փարիզ, 18 հունվար, 1933:

գամները, եղէք լաւ գաւակներ ձեր ծնողներուն և լաւ հայորդիներ՝ Հայաստանի համար...»³⁹:

Բազարչիքի մանկապարտեզ-դպրոցում 1930-ական թվականներին սովորում էր 100 աշակերտ, տնօրենի պաշտոնը զբաղեցնում էր տեղի քահանա Հմայակ Զարդարյանը: Վարժարանում դասավանդում էին 3 հայ և 3 ռումինացի ուսուցիչներ: Վարժարանի ֆինանսական կարիքների հոգաժույթունը կատարվում էր հիմնականում ազգային տուրքերից, աշակերտների ամսավճարից, եկեղեցական հասույթներից և այլն⁴⁰:

Թեմական առաջնորդարանին ենթակա 5 ազգային վարժարաններից Կալացինը իր աշակերտների թվով վերջին տեղն էր զբաղեցնում: 1932 թ. դրությամբ դպրոց էին հաճախում 58 աշակերտ, որից 27-ը՝ նախակրթարան: Ֆինանսավորման գործընթացը կազմակերպվում էր մնացյալ վարժարանների նման: Դպրոցի 5 ուսուցիչներից 1-ը ռումինացի էր: Այնուամենայնիվ, համայնքի երեխաները հիմնականում օրթոդոքս, իտալական, գերմանական և այլ դպրոցներ էին հաճախում⁴¹:

Չնայած նյութական սուղ պայմաններին՝ ռումինահայոց թեմական առաջնորդարանը փորձում էր իր ուշադրության կենտրոնում պահել ազգային դպրոցը, թեև դժվարությամբ, բայց ֆինանսական որոշակի սջակցություն ցուցաբերում, ավելին, թեմական առաջնորդի կամ ծխական հոգևորական-

³⁹ «Հայ մամուլ», Բուքրեշ, 25 հուլիս, 1937:

⁴⁰ Տե՛ս «Արագ», Բուքրեշ, 10 օգոստոս, 1932:

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

ների կողմից կազմակերպվող հաճախակի այցելությունների ընթացքում, վերահսկվում էր այդ վարժարանների գործունեությունը:

1935 թ. ուս. տարվա ավարտին Կոստանցայի վարժարան են այցելում կաթողիկոսական պատվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը և թեմական առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Հովսեփյանը, հոգևոր հովիվ Համազասպ քահանան և ծանոթանում դպրոցում առկա խնդիրներին, բացթողումներին⁴²:

Ռումինահայ համայնքի՝ այդ թվում թեմական առաջնորդարանի հանրահոգակման, հայ մշակույթի տարածման, ինչպես նաև ռումինական պետական վերնախավի հետ կապերի ամրապնդման տեսնակյունից անգնահատելի նշանակություն է ունենում 1937 թ. հունիսի 15-ից հուլիսի 25-ը Բուխարեստում կայացած «Հայ արվեստի» ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր հայ և ռումինացի մտավորականների ջանքերով: 15 բաժիններից բաղկացած ցուցահանդեսին իրենց մասնակցություն են ցուցաբերում Բուխարեստի, Սուչավայի, Կոստանցայի, Քիշնևի և այլ շրջանների հայ եկեղեցիները, Եվրոպայի հայ նկարիչների Անի խմբակցությունը, Բուխարեստի ռումինահայ կենտրոնական գրադարանը, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը և այլ կառույցներ ու անհատներ:

Մանրանկարչության բաժնում ներկայացված էին 42 ձեռագրեր, որոնցից առավել հիշարժանը 1331 թ. թվագրվող Դրագարկի Ավետարանն էր, Կեռվայի թանգարանից բերված

⁴² Տե՛ս «Ազդարար», Կոնստանցա, 16 հուլիս, 1935:

4 ավետարանները և այլն: Ճարտարապետության⁴³ բաժնում ցուցադրված էին 81 մեծադիր լուսանկարներ, որոնցում ներկայացված էին Հայաստանի տարբեր եկեղեցիները (Էջմիածին, Ջվարթնոց, Գեղարդ, Սանահին, Անի և այլն) և հայ եկեղեցու ինքնատիպ ձեռագրերը: Տարազների բաժնում ներկայացված էր հայկական եկեղեցական՝ եպիսկոպոսական, քահանայական, սարկավագի, տիրացուի հանդերձանքները և ժողովրդական տարազը: Ցուցահանդեսը աննախընթաց հաջողություններ է գրանցում: Այցելուների թվում են լինում Ռումինիայի Կարոլ Բ թագավորը, Մարիա մայր թագուհին, Բուխարեստի քաղաքապետը, Հռոմի պապի նվիրակը, բազմաթիվ նախարարներ, զինվորականներ և այլ պաշտոնատար անձիք⁴³:

Այսպիսով, ռումինահայոց թեմի ուշ կազմավորման, ինչպես նաև պետական աջակցությունից զուրկ լինելու հետևանքով համայնքային կրթական կյանքը, այդ թվում՝ ազգային դպրոցների գործունեությունը, առանձնակի ակտիվություն չունեցան: Նորակազմ թեմը կայուն ֆինանսական ռեսուրսներից զուրկ էր, ուստի, կարճ ժամանակ անց, դպրոցները հայտնվեցին նյութական անկայուն վիճակում: Այնուամենայնիվ, առկա խնդիրներով հանդերձ, ռումինահայոց թեմական առաջնորդարանը, ստեղծման առաջին օրից սկսած, կարևոր դերակատարում ունեցավ տեղի համայնքի հայեցի դաստիարակության կազմակերպմանն ավելի կանոնակարգված բնույթ տալու համար:

⁴³ Տե՛ս Հայ գաղութներ, Ռումինիա:

Мариам М. Акопян, *Факультет истории ЕГУ, Усилия Болгарского и Румынского армянской епархии по организации национального образования в 1920–1930-х годах.*

Как структуры, координирующие общинную жизнь, представительства Болгарского и Румынского армянской епархии являлись движущей силой для организации национального образования. Финансированиями епархиальных представительств действовали ряд национальных школ, а также строились новые, в действующих при церквях учебных заведениях преподавателями являлись священнослужители.

Организация национального образования в обеих епархиях была не одинаково активной, что было связано с финансовым состоянием епархиальных представительств, а также своеобразными привилегиями, предоставленными им местными властями.

Mariam M. Hakobyan, *YSU Faculty of History, The efforts of the Armenian Dioceses of Bulgaria and Romania in the organization of the national education in the 1920s-1930s.*

The Armenian dioceses of Bulgaria and Romania, as structures coordinating community life, were the driving force behind the organization of national education. A number of national schools operated with the funding of the diocesan representations, as well as new ones were built, and at schools adjacent to the church the teachers were the clergymen.

Obviously, the organization of national education in both dioceses was not going with the same activity, which was due to the financial capacity of the dioceses as well as the unique privileges granted to them by the local authorities.

ԳԱՅԱՆԵ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱԴՐԲԶԱՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ 1947-1953 ԹԹ.

Բանալի բառեր՝ Ադրբեջանական բնակչություն, վերաբնակեցում, Խորհրդային Հայաստան, Խորհրդային Ադրբեջան, Կուր-Արաքսյան հարթավայր, ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ:

1947 թ. դեկտեմբերի 3-ին Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարներ Գրիգոր Հարությունյանը և Միր Զաֆար Բաղիրովը համատեղ նամակով դիմում են ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Իոսիֆ Ստալինին՝ հանդես գալով Հայաստանում բնակվող ադրբեջանական բնակչության վերաբնակեցման առաջարկությամբ¹: Որպես գործընթացի կազմակերպման հիմնավորում ներկայացվում էր Ադրբեջանում, Մինգեչաուրի համակարգի իրագործման հետևանքով, նոր հողատարածությունների յուրացման և բամբակային շրջանների կոլտնտեսություններում աշխատուժի պակասը, ինչպես նաև, այդ շրջաններում բամբակի բերքատվության բարձրացման նպատակով, բնակչության թվաքանակի ավելացման անհրաժեշտությամբ:

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱՄ). ֆ. 1, ց. 27, գ. 47, թ. 137–138:

յունը: Զուգահեռաբար, հայկական կողմի համար վերաբնակեցումը մեծապես կհեշտացներ արտասահմանից վերադարձող հայերի ընդունումը: Ադրբեջանցիների վերաբնակեցման հետևանքով ազատվող հողերը և բնակարանները կարող էին օգտագործվել հայրենադարձվածների վերաբնակեցման համար²:

Նամակի հիման վրա ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1947 թ. դեկտեմբերի 23-ին ընդունեց N 4083 որոշումը՝ «Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ Կուր-Արաքսյան հարթավայր կոլտնտեսականների և այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցման մասին»³: Դրանով նախատեսվում էր 1948–1950 թթ. Հայկական ԽՍՀ-ից վերաբնակեցնել շուրջ 100 հազար ադրբեջանական բնակչություն, որից՝ 1948 թ.՝ 10 հազար, 1949 թ.՝ 40 հազար և 1950 թ.՝ 50 հազար բնակիչ: Որոշումը Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհուրդներին պարտավորեցնում էր բացատրական աշխատանքներ իրականացնել ադրբեջանական բնակչության շրջանում՝ վերաբնակեցման պայմանների և պետության կողմից տրամադրվող աջակցության վերաբերյալ, ապահովել կոլտնտեսականների վերջնահաշվարկը ոչ ուշ քան վերաբնակեցումից 10 օր առաջ, ինչպես նաև ապահովել վերաբնակիչների անձնական օգտագործման ամբողջ ունեցվածքի, անասունների և թռչունների տեղափոխումը: Կուր-Արաքսյան հարթավայր տեղափոխվող վերաբնակիչների համար սահմանվում էին հետևյալ նպաստները. պետության

² Տե՛ս նույն տեղում. թ. 137:

հաշվին իրականացնել վերաբնակիչների անվճար ուղևորափոխադրումը, անասունների և ունեցվածքի տեղափոխումը՝ յուրաքանչյուր ընտանիքի համար մինչև 2 տոննա զանգվածով, վերաբնակվող կոլտնտեսականների վրա տարածել ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1937 թ. նոյեմբերի 17-ի N 115/2043 «Գյուղատնտեսական վերաբնակեցման նպաստների մասին» օրենքը, վերաբնակվող ընտանիքիներին անվերադարձ տրամադրել դրամական աջակցություն 1000 ռուբլու չափով՝ ընտանիքի գլխավորի, և 300 ռուբլու չափով՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, վերաբնակեցման վայրերում տնտեսություններին տրամադրել հացահատիկ՝ ընտանիքի գլխավորի համար 1,5 ցենտ, իսկ յուրանքացյուր անդամին՝ 0,5 ցենտ քանակությամբ³: Աղբբեջանական բնակչությանը թույլատրվում էր ելքի վայրում գնումներ կատարող հատուկ կազմակերպություններին փոխանակման կտրոններով հանձնել գյուղմթերքը (հացահատիկ, կարտոֆիլ) և անասուններին (որոնց տեղափոխումը արգելված էր կարանտինային պայմաններում)՝ վերաբնակեցման վայրերում նույն քանակությամբ սննդամթերք և անասուններ ստանալու իրավունքով⁴: Նույն որոշմամբ, ԽՍՀՄ գյուղատնտեսական բանկին պարտավորեցվում էր վերաբնակվողներին տրամադրել մինչև 20 հազար ռուբլու չափով վարկ՝ բնակելի տների կառուցման համար, մինչև 10 տարի մարման ժամկետով՝ սկսած երրորդ տարվանից, ինչպես նաև վերաբնակիչ-

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 29, գ. 179, թ. 38-40:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 38:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 39:

ներին տրամադրել 3 հազար ռուբլի վարկ՝ անասունների ձեռք բերման նպատակով, մինչև 5 տարի մարման ժամկետով՝ սկսած երրորդ տարվանից:

Հանձնարարականներ էին տրվում նաև Հաղորդակցության ճանապարհների նախարարությանը՝ աղբբեջանական բնակչության, նրանց ունեցվածքի և անասունների տեղափոխման համար հատուկ գնացքակազմեր ապահովելու, Առողջապահության նախարարությանը՝ ելքի վայրերում վերաբնակիչների բժշկական զննումը և ճանապարհին վերաբնակիչների բժշկակա-սանիտարական ծառայությունը կազմակերպելու, ինչպես նաև գնացքակազմերի ուղեկցության համար հատուկ բժշկական անձնակազմ ու դեղամիջոցներ առանձնացնելու համար⁶: ԽՍՀՄ Ֆինանսների նախարարությանը պարտավորեցվում էր Աղբբեջանին տրամադրել միջոցներ՝ աղբբեջանական բնակչության վերաբնակեցումը իրագործելու համար: Որոշման վերջին՝ 11-րդ կետով, Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրվում էր աղբբեջանական բնակչությունից ազատված վայրերը տրամադրել հայրենադարձների բնակեցման համար⁷:

Աղբբեջանական բնակչության վերաբնակեցման վերաբերյալ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի հաջորդ որոշումը ընդունվել է 1948 թ. մարտի 10-ին: Այս որոշմանը նախորդել էր Հայկական ԽՍՀ և Աղբբեջանական ԽՍՀ Նախարարների խորհուրդների 1948 թ. հունվարի 26-ի համատեղ գրությունը ԽՍՀՄ Նախարարների խորհրդի փոխնախագահ, ԽՄԿԿ

⁶ Տե՛ս նույն տեղում:

Կենտկոմի քաղքուրոյի անդամ Լ. Բերիային⁸: Գրութիւնում արձանագրված էր, որ 1947 թ. դեկտեմբերի 23-ի որոշման հիման վրա, Հայաստանի և Ադրբեջանի Նախարարների խորհուրդները, քննարկելով դրա իրագործման միջացառումները, որոշել են «1948 թ. վերաբնակեցնել 10 հազար մարդ Հայաստանի 8 շրջաններից երկու ժամանակամիջոցներում՝ մարտ-ապրիլ, այսինքն, մինչև գյուղատնտեսական աշխատանքների սկիզբը, և սեպտեմբեր-նոյեմբեր, այսինքն գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի հավաքից հետո»⁹: Ինչպես նկատելի է, գրութան մեջ վերաբնակեցման իրականացման ժամանակահատվածը հարմարեցված էր գյուղատնտեսական աշխատանքների հետ: Միաժամանակ նշված էր, որ վերաբնակեցման կապացությամբ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդների կողմից ձեռք է բերվել փոխադարձ պայմանավորվածություն բոլոր հարցերի կապակցությամբ՝ բացառությամբ խառը կոլտնտեսություններից (հայկական և ադրբեջանական բնակչություն ունեցող) վերաբնակվող ադրբեջանցիների կոլտնտեսական ունեցվածքի (անասուններ, ընտանեկան և գումարային ֆոնդ և այլն) փոխանցման հարցի¹⁰: Այդ խնդրի կապակցությամբ ադրբեջանական կողմն առաջարկում էր որոշման մեջ մտցնել հետևյալ կետը. «հաստատել, որ Հայկական ԽՍՀ-ից Կուր-Արաքսյան հարթավայր ամբողջապես

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 40:

⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 29, գ. 179, թթ. 7–8:

⁹ Նույն տեղում, թ. 7:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 8:

չվերաբնակեցված կոլտնտեսությունները պարտավոր են վերաբնակվող կոլտնտեսականներին աշխօրերի վերջնահաշվարկի հետ միաժամանակ հանձնել նաև իրենց հասնող արտադրության հիմնական միջոցները, բնական և գումարային ֆոնդերը(այդ թվում անբաժանելի)»¹¹: Հայկական կողմը առաջարկում էր. «հաստատել, որ այն դեպքերում, երբ վերաբնակվում են կոլտնտեսականների մի մասը, կոլտնտեսություններից նրանց տրամադրվում է ունեցվածքը, անասունները և ապրանքները՝ համապատասխան նպաստերով՝ ըստ 1947 թ. դեկտեմբերի 23-ի N 4083 որոշման 4-րդ կետի»¹²:

Ի վերջո, 1948 թ. մարտի 10-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդին ընդունեց N 754 «Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ Կուր-Արաքսյան հարթավայր կոլտնտեսականների և այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցման միջոցառումների մասին» որոշումը, որը մանրամասնորեն նախագծում էր ադրբեջանական բնակչության վերաբնակեցման կազմակերպական գործընթացը, ադրբեջանական բնակչությանը հատկացվող արտոնությունները, դրամական աջակցությունները¹³: Այդ որոշման համաձայն, ամբողջությամբ վերաբնակեցվող կոլտնտեսություններին թույլատրվում էր իրենց հետ տեղափոխել արտադրության միջոցները (գյուղատնտեսական մեքենաները, գույքը (ինվենտար), բոլոր տեսակի անասունները և թռչունները, մեղվաբնտանիքները,

¹¹ Նույն տեղում թ. 7-8:

¹² Նույն տեղում, թ. 8:

¹³ Տե՛ս նույն տեղում, թ. 41-45:

Փառատոնի շրջանակներում մամուլի ասուլիս Մշակույթի նախարարությունում՝ մասնակցությամբ նախածեղնողներից մեկի՝ Մեսրոպ Արք. Աշոցանի:

628. ԴԵՄԻՐՃՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՅԻ. Կրկին դիտակետում: Անիի Մայր տաճար-1000 //Հայաստանի Հանրապետութ.- 2002.- 25 սեպտ.- էջ 5:

2002 թ. սեպտեմբերի 22-27-ին Օշականում Մեսրոպ Արք. Աշոցանի գլխավորությամբ կայացած գիտական ժողով-հանդիսության մասին:

629. ԴԵՄԻՐՃՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՅԻ. Հավատա՝ հավատալուդ զորությամբ //Հայաստանի Հանրապետութ.- 2001.- 6 դեկտ.- էջ 3:

ՀՀ ԳԱՎ-ում կայացավ միջոցառում «Ուխտագնացություն Տարոնի վանքեր» խորագրով, որը նվիրված էր Մեսրոպ Արք. Աշոցանին:

630. ԴԵՏ-ՇՆՈՐՀԱԲԵՐ Հովուապետական այցելություն եւ օծում Ամենայն Սրբոց Հայոց Առաքելական Եկեղեցւոյ: 1 Յունիս 1990, 6 յունիս 1990 Շիքակօ, Իլլինոյի: [Մասնակցությամբ՝ Մեսրոպ Արք. Աշոցանի]: (Ամերիկահայ կեանք) //Հայրենիք.- Բոստոն, 1989.- 28 յունիսի.- էջ 4-5, 8:

631. ԴՊՐԱՅ ԴԱՍԵՐՈՒ սեմինար եւ արական երգչախմբի սրբազան համերգ: (Ուրբաթ 27 հոկտ.- Կիրակի 29 հոկտ): [Նախածեղնությամբ՝ Մեսրոպ Արք. Աշոցանի]: (Ամերիկահայ կեանք) //Հայրենիք.- Բոստոն, 1989.- 17 նոյեմբ.- էջ 5:

632. ԴՊՐԵՎԱՆԵՑԻ Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցութիւնը Արեւելեան ուղղափառ եւ յոյն ուղղափառ եկեղեցիներու Գ. պաշտօնական հանդիպումին: (23-28 սեպտեմբեր, Շամպեզի, Ջուիցերիա) [Նաև Մեսրոպ Արք. Աշոցանի մասնակցությունը] //Հասկ.- Անթիլիաս, 1990.- թ. 8-12.- էջ 623-624:

633. ԴՊՐԵՎԱՆՔԻ Յիսնամեակին նուիրուած պաշտօնական ճաշկերույթը՝ հայութեան եւ դպրեվանքին երախտագիտութեան

ծությանների յուրացման վարչությանը տրամադրել սարքավորումներ և շինարարական նյութեր և այլն¹⁶:

Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցման վերաբերյալ մյուս որոշումը ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կողմից ընդունվեց 1950 թ. սեպտեմբերի 6-ին¹⁷: Դրանով նախատեսվում էր 1951–1955 թթ. կամավոր սկզբունքով Հայաստանից Ադրբեջանական ԽՍՀ Կուր-Արաքսյան հարթավայրային շրջաններ տեղափոխել 15.000 կոլտնտեսականներ և այլ ադրբեջանական բնակչություն (այդ թվում 1951 թ.՝ 1500 ընտանիք և 1952 թ.՝ 2500 ընտանիք): Նշենք նաև, որ որոշումը թույլատրում էր Ադրբեջանի Նախարարների խորհրդին 1952–1955 թթ. իրականացնել ներհանրապետական վերաբնակեցում՝ հանրապետության լեռնային, նախալեռնային և ավելորդ աշխատուժ ունեցող այլ շրջաններից Կուր-Արաքսյան հարթավայր վերաբնակեցնել 5.000 տնտեսություն: Վերոհիշյալ որոշմամբ վերաբնակիչների վրա տարածվելու էին այն արտոնությունները և պայմանները, որոնք նախատեսված էին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1947 թ. դեկտեմբերի 23-ի և 1948 թ. մարտի 10-ի որոշումներով (բացառությամբ՝ միանվագ գումարային աջակցության և ճանապարհին անվճար սննդի տրամադրման ներհանրապետական վերաբնակեցման դեպքերում): Ներհանրապետական վերաբնակեցման համար գործում էին հետևյալ արտոնությունները. 500 ռուբլի՝ ընտանիքի գլխավորի և 250 ռուբլի՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար միան-

¹⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 42:

639. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ համաշխարհային խորհուրդի վեցերորդ համագումարը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մասնակցութիւնը /Դիտող //Յասկ.- Անթիլիաս, 1983.- թ. 6-12.- էջ 622-630, լուսանկ.

Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատվիրակության կազմում նաև՝ Զյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդ Տ.Մեսրոպ Արք. Աշճյանը:

640. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ եւ վանքերու նորոգութեանց ընթացքը Զայաստանի մէջ [Գլխավորությամբ Մեսրոպ Արք. Աշճյանի]: 1700-ամեակին ընդառաջ: Լուսարծակի տակ //Ասպարէզ.- Գլենդէլ, 1998.- 17 յուլիսի.- էջ 2; 15 օգոստ.- էջ 2, 9:

641. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Կ. Երբ որ բացվեն դռներն հուսո //Երկիր.- 1998.- 28 օգոստ.- էջ 7:

Տ. Մեսրոպ Արք. Աշճյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ ստեղծվել է «ՌՎ, Զայոց աշխարհ» հեռուստաֆիլմը, որը նվիրված է Զայաստանում Քրիստոնեության հռչակման 1700-ամյակին:

642. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՆԱՌԱ. «Երանի եկեղեցի շինողաց...»: (Մշակույթ) //Երկիր.- 1998.- 23 հուլիսի.- էջ 7:

Մեսրոպ Արք. Աշճյանի այցելությունը Քրիստոնեությունը Զայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով Զայաստանի տարբեր մարզերում գտնվող վանքերի և եկեղեցիների վերանորոգման աշխատանքներին ծանոթանալու նպատակով:

643. ԵՆԳՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ. Ոչ միայն հացիվ //Եթեր.- 2002.- 1-7 հուլիսի.- էջ 2, լուսանկ.

Մեսրոպ Արք. Աշճյանի նախաձեռնությամբ Երևանում անցկացված «Զայ գրքի օր» միջոցառման մասին:

644. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ հանդիսաւոր օծում Անթիլիասում //Ալիք.- Թեհրան, 1974.- 12 հունիսի.- էջ 5, 8:

Այժմ քննության առնենք Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցման բնութագրական հատկանիշները: Գործընթացի կամավոր, ոչ բռնի բնույթի մասին է վկայում ժամանակի արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը: Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ կամովին Ադրբեջանի տարբեր շրջաններում վերաբնակեցման ցանկություն հայտնող ադրբեջանական բնակչության և նրանց դիմումների մասին: Դրանց շարքին է դասվում Հայաստանի Նախարարների խորհրդի գործերի կառավարիչ Ա. Ախշարումովից Նախարարների խորհրդին կից վերաբնակեցման վարչությանը ուղղված 1948 թ. մարտի 1-ի գրությունը, որտեղ ներկայացվում են Զանգիբասարի շրջանի և Երևանի Ստալինի շրջանի Չարբախ գյուղի բնակիչների հայտարարությունները իրենց առաջնահերթ կերպով Ադրբեջան վերաբնակեցնելու մասին²⁰: Վերաբնակեցվելու ցանկություն արտահայտում էին նաև ամբողջական կոլտնտեսություններ, ինչպես, օրինակ, Ախտայի շրջանի (ներկայիս Հրազդանի շրջան) Աղվերան գյուղի Ազիզբեկովի անվան կոլտնտեսությունը, որը երաշտի և տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով ցանկանում էր վերաբնակեցվել Ադրբեջանում²¹: Միաժամանակ, ադրբեջանական բնակչությունից դիմումներ կային առ այն, որ նրանք ցանկություն չունեին վերաբնակեցվելու Ադրբեջանում, ինչը Հայաստանի Նախարարների

²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 179, թ. 11:

²¹ Տե՛ս նույն տեղում, թ. 54:

խորհրդային Միության կեդրոն: Գաղութ գաղութ //Հայրենիք.- Բոստոն, 1988.- 24 մարտի.- էջ 1, 3; Ասպարեզ.- Գլենդել, 1988.- 30 մարտի.- էջ 5, լուսանկ

651. «ԵՐԿԻՐ ԵՎ ՄՇԱԿՈՅԹ» կազմակերպության 9-րդ անդրանիկ ժողովը Սան Ֆրանսիսքոյ մէջ: (Ամերիկահայ կեանք) //Ասպարեզ.- Գլենդել, 1996.- 5 ապր.- էջ 6, լուսանկ.

Սան Ֆրանցիսկոյի ազգայիններ ժիրայր Սարգսյանի և իր կնոջ կազմակերպած ընդունելության ընթացքում նաև Մեսրոպ Արք. Աշոյանի խոսքի մասին:

652. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ զոհերու հոգեհանգիստ: Բանըլտ Բեկըն կը ցաւակցի //Ասպարեզ.- Գլենդել, 1988.- 21 դեկտ.- էջ 2, լուսանկ.

1988 թ.-ի Հայաստանյան աշխարհացունց երկրաշարժի առիթով Նյու Յորքի Անգլիկան Ս. Բարթոլոմէոս եկեղեցու հոգեհանգիստը նախագահում էր Մեսրոպ Արք. Աշոյանը:

653. ԵՐԿՈՒ ՕՐ Արագածոտնի թեմում //Քրիստոնյա Հայաստան.- Վաղարշապատ, 2000.- թ. 19.- էջ 2:

Նաև՝ Մուղնու Աթ. Գևորգ եկեղեցու վերասրբագործումը շնորհիվ Մեսրոպ Արք. Աշոյանի:

654. ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՍԱԿ Գարեգին Ա Կաթողիկոսի ծննդյան 70-ամյակը: Հոբելյան //Երկրապահ.- 2002.- 27 օգոստ.- էջ 7:

ԳԱԱ-ում կայացած հանդիսավոր նիստին մասնակցում էր նաև Մեսրոպ Արք. Աշոյանը:

655. ԵՐՈՒՄԱՂԷՍ Եւ ուրիշ տեղեր //Յառաջ.- Փարիզ, 1997.- 25 նոյեմբ.- էջ 2; 26 նոյեմբ.- էջ 2; 27 նոյեմբ.- էջ 2:

Մեսրոպ Արք. Աշոյանի այցելւթյունը Երուսաղեմի Հայոց պատրիարք Տ. Թորգոմ Սրբազանին:

656. ԵՕԹՆՕՐԷՔ՝ Ի հանգիստ Հայաստանի երկրաշարժի զոհերու հոգիներուն: «Հայաստան արիւնքամ է, դարձեալ պիտի

փը հաստատող համապատասխան փաստաթղթային հիմք, չէին կարող հաշվարկել տեղափոխվող կոլտնտեսություններին հատկացվող գումարը: Միաժամանակ, ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը խնդրում էր ադրբեջանական կողմին հրահանգել Ադրբեջանի Նախարարների խորհրդին կից վերաբնակեցման վարչությանը և Գյուլատնտեսության նախարարությանը՝ ճշտել կոլտնտեսությունների պարտքի չափը, և այն ձևակերպել պատշաճ փաստաթղթերով: Նույն խնդրի կապակցությամբ, ՀԽՍՀ Գյուլտնտեսության նախարարության տված բացատագրում նշված է, որ ամբողջապես վերաբնակեցված ադրբեջանական կոլտնտեսությունների տեղում նոր կոլտնտեսություններ չեն կազմակերպվել, այդ պատճառով էլ նրանց թողած անշարժ գույքի արժեքը ոչ մի այլ կոլտնտեսության վրա չի ձևակերպվել²⁵:

Անշուշտ, վերաբնակեցման գործընթացն ընթացել է որոշակի դժվարություններով և խոչընդոտներով: Ինչպես նշում է պատմաբան Ա. Վիրաբյանը, առանձին վայրերում առաջացել են ընթացակարգային խնդիրներ՝ կապված տեղափոխման պայմանները կարգավորող որոշումների, ցուցումների ու հրահանգների հետ²⁶: Միաժամանակ, հարկ է նկատել, որ ադրբեջանական բնակչությունը երբեմն դրսևորում էր անօրինական պահվածք՝ պետությունից անվարձահատույց դրամական աջակցություն ստանալու համար: Այսպես, ըստ արխիվային փաստաթղթերից մեկի, Ադրբեջանական ԽՍՀ փո-

²⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶ Տե՛ս Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. Երևան, 2001, էջ 88:

662. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ հարատևության խորհուրդով: Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի //Հայաստան.- 2002.- 20 սեպտ.- էջ 3:

Գեղարքունիքի մարզի Գավառի առաջնորդական Ս. Աստվածածին եկեղեցին ամերիկահայ բարերար Գրիգոր Մելիքյանի շնորհիվ ի հիշատակ հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհ՝ Հենրիկ Աբրահամյանի, զանգ մվեր ստացավ: Արարողությանը ներկա էր նաև՝ Մեսրոպ Արք. Աշճյանը:

663. ԸՆԿ. ՍԱԳՈ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ Ազգային յուզարկաւորութիւնը եւ թաղումը //Ասպարեզ.- Լոս-Անջելես, 1984.- 29 նոյեմբ.- էջ 1, Հայրենիք.- Բոստոն, 1984.- 6 դեկտ.- էջ 1, 7-8;

Հ.Յ.Դ. Բյուրոյի անդամ Սագո Սարգսյանի թաղման արարողության կատարողներից նաև՝ Մեսրոպ Արք. Աշճյան:

664. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի //Ասպարեզ.- Գլենդեյլ, 1995.- 10 յունիսի.- էջ 1, 8:

Ընտրությունների առաջադրվող թեկնածուների ցանկում նաև՝ Մեսրոպ Արք. Աշճյան:

665. ԹԱՇՃԵԱՆ ՄԵՍՐՈՊ ԱԻ. ՔՅՆՅ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս կը հովանաւորէ Փրովիտեւի Սրբոյ Վարդանանց եկեղեցւոյ 50-ամեակի ճաշկերոյթը [մասնակցությամբ՝ Մեսրոպ Արք. Աշճյանի]: (Ամերիկահայ կեանք) //Հայրենիք.- Բոստոն, 1990.- 22 յունիսի.- էջ 5, 8, լուսանկ.

666. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆԸ Օշականում //Գրակ. թերթ.- 2002.- 18 հոկտ.- էջ 3-4; Քրիստոնյա Հայաստան.- Վաղարշապատ, 2002.- հոկտ.- էջ 3:

Հոկտեմբերի 12-ին Օշականում կայացած տոնի լիագումար նիստում նաև՝ Մեսրոպ Արք. Աշճյանի բացման խոսքի մասին:

667. ԹԵՄԻ ԿՅԱՆՔԻ արտացոլանքը //Շողակն ամսօրյա.- Օշական, 1998.- հուլիս-օգոստոս.- էջ.- 2:

Ադրբեջանի Նախարարների խորհրդին կից վերաբնակեցման վարչության 1951 թ. օգոստոսի գերգաղտնի գրությանը՝ ուղղված Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին, Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանին²⁹: Երկարաժամկալ այս փաստաթղթում ադրբեջանական վերաբնակեցման վարչության նախագահ Ալլախվերդիևը նախ ներկայացնում է իր հաշվարկներով Հայաստան վերադարձած վերաբնակիչների թվաքանակը՝ 217 տնտեսություն, կամ՝ 872 մարդ³⁰: Ապա նշում, որ խնդրի լուծման կապակցությամբ Ադրբեջանը Հայաստան է ուղարկել հատուկ հանձնախումբ, որի նպատակը «Հայաստանի վերաբնակեցման մարմինների և շրջանային կազմակերպությունների հետ ադրբեջանական բնակչության վերադարձի կազմակերպումն է դեպի Ադրբեջանական ԽՍՀ»³¹: Փաստաթուղթը ապացուցում է, որ վերաբնակեցման կազմակերպմամբ հատկապես շահագրգիռ էր հենց ադրբեջանական կողմը: Իր դժգոհությունն արտահայտելով Խորհրդային Հայաստանի ցուցաբերած մոտեցումներից՝

2013, Пашаев А., Геноцид, депортация и территориальные претензии армян к азербайджанскому народу (XIX–XX вв.), Баку, 2013, Исманлов Э., Власть и народ. Послевоенный сталинизм в Азербайджане 1945–1953, Баку, 2003, Исторические факты о десятиях армян на Азербайджанской земле (Редакторы Мусаева Т., Мамедов А.), Баку, 2003, Гурбанлы А., Депортация азербайджанцев из Армянской ССР (1947–1953) // Актуальные проблемы гуманитарных и естественных наук, N 6, 2009. <https://cyberleninka.ru/article/n/deportatsiya-azerbaydzhantsev-iz-armyanskoy-ssr-1947-1953-gody> (11.10.2021)

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 29, գ. 257, թթ. 24–36:

³⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 24:

³¹ Նույն տեղում, թ. 31:

673. ԺԱՄԱՆԱԿԱԶԱՓ ԱՄՍՕՐՅԱ //Շողակն ամսօրյա.- Օշական, 1999.- հունվար- փետրվար.- էջ 2:

1999 թ. փետրվարի 20-ին սբ. Մեսրոպ Մաշտոց Դպրատանը կայացավ «Աստվածաշնչյան Հայաստան» գիտաժողովը, որի մասնակիցների թվում էր նաև Մեսրոպ Արք. Աշճյանը:

674. [Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Գերշ. Ս. Մեսրոպ Արք. Աշճյանի հետ էջմիածին կատարած ուխտագնացության մասին հարցազրույցը մի քանի օրից հրապարակելու առիթով] //Հայրենիք.- Բոստոն, 1986.- 24 յուլիսի.- էջ 1:

675. ԻՐԱՆԻ առաջին սկաուտը: Հանդիսություն ի պատիւ Եղիա Վելիջանեանի: (Նոր Ջուղա) //Ալիք.- Թեհրան, 1974.- 18 մայիսի.- էջ 5, լուսանկ.

Գերշ. Ս. Մեսրոպ Վարդապետ Աշճյանի մասնակցության և խոսքի մասին:

676. [ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ թեմի Առաջնորդ՝ Գերպ. Ս. Մեսրոպ Վարդապետի վերադարձը Լիբանանից՝ Դոբեից] //Նոր-Ջուղա.- Նոր-Ջուղա, 1977.- թ.12.- էջ 4:

677. ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ թեմի ԺԹ Պատգամաւորական Ժողովը Նոր Ջուղայում //Ալիք.- Թեհրան, 1975.- 7 յուլիսի.- էջ 3, 8:

1975 թ. Ս. Ամենափրկիչ վանքում կայացած ժողովը նախագահում էր Իրան-Հնդկաստանի թեմի առաջնորդ Գերշ. Ս. Մեսրոպ Վարդապետ Աշճյանը:

678. ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ թեմի ԺԸ Պատգամաւորական Ժողովը Նոր Ջուղայում [նախագահ՝ Ս. Մեսրոպ Վրդ. Աշճյան] //Ալիք.- Թեհրան, 1974.- 23 յուլիսի.- էջ 3, 6:

679. ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ թեմի 17-րդ պատգամավորական ժողովը //Ալիք.- Թեհրան, 1973.- 22 սեպտ.- էջ 3:

վերդիները նշում է, որ «1950 թ., Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի որոշման համաձայն, Խստիսու գյուղի բնակիչները Հայկական ԽՍՀ Ագիգբեկովի շրջանից 31 տնտեսությամբ խիստ կամավոր սկզբունքով վերաբնակեցվել են Ադրբեջանական ԽՍՀ Աղդաշի շրջանում, սակայն որոշ ժամանակ անց այդ կոլտնտեսության ներկայացուցիչ Շամիլ Կասումովը կազմակերպել է 11 ընտանիքների վերադարձը, ինչպես նաև քշել է անասնազխաքանակի մի մասը և հաստատվել Ագիգբեկովի շրջանի Թերի գյուղում»³³: Ադրբեջանական կողմը կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ այստեղ, տեղական իշխանությունների իմացությամբ, ձևավորվել է նոր կոլտնտեսություն, որի նախագահ է նշանակվել Շամիլ Կասումովը³⁴: Մյուս օրինակը վերաբերում էր Բասարագեչարի (Վարդենիս) շրջանի Զոդ գյուղից վերաբնակեցված որոշ ընտանիքների, որոնք, չնայած 1948 թ. վերաբնակեցվել են ադրբեջանական Խանլարի շրջանում, սակայն նրանցից որոշները շարունակում էին անասուններ, բնակարան և տնամերձ հողեր ունենալ ինչպես Խանլարի շրջանում, այնպես էլ Զոդում³⁵:

Այնուհետ Ալլախվերդիներ իր դժգոհությունն է հայտնում այն կապակցությամբ, որ դեռևս 1950 թ. հոկտեմբերին ադրբեջանական վերաբնակեցման վարչությունը հայկական վերաբնակեցման վարչության հետ անցկացրել է վերադարձածների ստուգում Ախտայի, Վեդիի, Կիրովականի և

³³ Նույն տեղում, թ. 32–33:

³⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 33:

³⁵ Տե՛ս նույն տեղում:

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի հեռածայնային լուրը Ս.Մեսրոպ Արք.
Աշճյանի խորհրդածողությունների վերաբերյալ:

685. ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ: Կիլիկեան Աթոռի Ազգ.
կեդր. Վարչության ժողովներ Անթիլիասի մէջ //Յասկ.- Անթիլիաս,
1991.- ք. 10-11-12.- էջ 557-558:

Կրոնական և քաղաքական ժողովների անդամների թվում
մասն` Մեսրոպ Արք. Աշճյան:

686. ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ: Վեհափառ Հայրապետը
Պքերքեի մէջ //Յասկ.- Անթիլիաս, 1967.- ք. 6-9.- էջ 398:

Խորեն կաթողիկոսի ընկերակցությամբ Ս. Մեսրոպ Վրդ. Աշճ-
յանի այցելությունը Պքերքեի Ս. Մեուշի Պատրիարքին:

687. ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ: Վեհափառ Հայրապետի
այցելութիւնը հանրապետության մախագահին //Յասկ.- Անթիլիաս,
1985.- ք. 8-9.- էջ 444:

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետը Գերշ. Ս. Մեսրոպ Արք.
Աշճյանի ընկերակցությամբ այցելեց Լիբանան:

688. ԼՈՒՐԵՐ Ս. Ամենափրկիչ վանքից //Նոր-Ջուղա.- Նոր-
Ջուղա, 1977.- ք. 14.- էջ 7:

Իրանա-Հնդկաստան թեմի Առաջնորդ Գերայ. Մեսրոպ Ծ. Վար-
դապետի կատարած որոշ ընդունելությունների շուրջ:

689. ԽԱԼԱԹՅԱՆ Տ. ՆԵՐՍԵՅ ԱԲԵՂԱ. «Սուրբ Խաչ» հայ եկեղե-
ցու գանձերի ցուցահանդեսը Հելսինկիում //Էջմիածին.- 1999.- ք. 1.-
էջ 105-106:

1998 թ. նոյեմբերի 11-ից մինչև 1999 թ. հունվարի 24-ը Ֆին-
լանդիայի մայրաքաղաքում տեղի ունեցած ցուցահանդեսին մաս-
նակցեց մասն` Մեսրոպ Արք. Աշճյանը:

690. ԽԱՐԱՄԱՆԾԵԱՆ ՄԻՍԱՔ. Ամերիկահայ գաղութի կեանքէն:
Ամենայն Սրբոց եկեղեցւոյ հիմնադրման 43-րդ տարեդարձը
Շիքակոյի մէջ //Հայրենիք.- Բոստոն, 1986.- 4 դեկտ. - էջ 4, լուսանկ.

նվազագույն բնակարանային ու ապրուստի միջոցներով ապահովելը Ադրբեջանի կողմից դիտարկվում էր որպես «լիբերալ» (ազատական) գործողություն:

Ադրբեջանական բնակչության վերաբնակեցման գործընթացի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից վերաբնակեցման վարչության պատասխան գաղտնի գրությունը՝ ուղղված ՀԽՍՀ Նախարարների խորհրդի հատուկ բաժնին, Ալլախվերդիևի նամակի վերաբերյալ³⁹: Այստեղ նախևառաջ ճշգրտվում է վերադարձած ադրբեջանական բնակչության թվաքանակը: Նշվում է, որ ադրբեջանական ներկայացուցչության աշխատակիցները մի քանի տեղերում հրաժարվել են գնալ այն վայրեր, որտեղ եղել են Հայաստանի վերաբնակեցման վարչության ներկայացուցիչները, այլ միակողմանի ճշգրտումներ են արել և ստացել ոչ ամբողջական ու միակողմանի պատկեր, և որ ինքը՝ Ալլախվերդիևը, հրաժարվել է մասնակցել հարցի քննարկմանը Երևանում՝ հայտարարելով, որ դա Հայաստանի իշխանությունների խնդիրն է⁴⁰:

Ըստ հայկական կողմի տվյալների՝ 1948–1950 թթ. վերադարձածների ընդհանուր թիվը կազմում է 451 տնտեսություն կամ 2116 անձ (առանց չստուգված ընտանիքների, որոնց դեպքում վերադարձած ընտանիքների թվաքանակը կազմում էր 418)⁴¹:

³⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 37–43

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 39, 42:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, թ. 39:

Տեղական իշխանությունների՝ ադրբեջանցի վերաբնակիչների հանդեպ ցուցաբերած «սխալ ու լիբերալ» վերաբերմունքի կապակցությամբ ադրբեջանական կողմի մեղադրանքներին ի պատասխան, հայկական կողմը գրությունում արձանագրում էր «...ստուգմամբ, իրոք, պարզվել են մի շարք դեպքեր, երբ որոշ վերադարձած ընտանիքներին, չնայած Նախարարների խորհրդի որոշմանը, որն արգելում է նրանց ընդունել կոլտնտեսություն, ընդունվել են կոլտնտեսություն: Նման փաստեր են արձանագրվել Կիրովականի, Վերիի, Ազիզբեկովի շրջաններում: Հաստատվել է նաև Թերի գյուղում վերադարձածներից նոր կոլտնտեսություն ստեղծելու դեպքը»⁴²: Նման դիրքորոշումը հայկական կողմը բացատրում էր այն հանգամանքով, որ «վերադարձող տնտեսությունները, չնայած բացատրական աշխատանքին, ընդհանրապես չեն ցանականում վերադառնալ Ադրբեջան և, բնականաբար, տեղական կազմակերպությունները չէին կարող նրանց թողնել բախտի քմահաճույքին և ստիպված էին թողնել վարձու աշխատանքի մինչև հարցի վերջանական լուծումը»⁴³:

Անդրադառնալով ադրբեջանական կողմի մեղադրանքներին՝ վերաբնակիչների նկատմամբ ցուցաբերած «լիբերալ» վերաբերմունքի և ոչ վճռական գործողությունների համար, հայկական կողմը հոռետորական հարց էր տալիս, թե «Ի՞նչ վճռական միջոցներ կարող են և պետք է իրականացվեն խորհրդային կոլտնտեսական հարյուրավոր ընտանիքների

⁴² Նույն տեղում, թ. 41–42:

նկատմամբ, որոնք չեն մտնում տեղի կոլտնտեսությունների կազմի մեջ, չունեն տներ, ունեցվածք և անասուն և, չնայած բոլոր բացատրական աշխատանքներին, բանակցություններին հրաժարվում են վերադառնալ իրենց բնակության վայրեր»⁴⁴: Նշվում էր, որ միակ վարչարարական միջոցը, որն առաջարկվել էր Ադրբեջանի և ԽՍՀՄ գլխավոր վերբնակեցման վարչությունների կողմից, կարող էր լինել վերադարձածներից վերաբնակեցման ժամանակ ստացած դրամական օգնության և պետության ծախսերի գանձումը: Սակայն, ըստ հայկական կողմի, նման միջոցառումը, բացի նրանից, որ անհրաժեշտ արդյունք չէր ունենա նյութական առումով՝ նման մեծ դրամական միջոցներ վերադարձածներից ստանալու անհնարինության պատճառով, այլև կհանդիսանար վերադարձողների համար, այսպես ասած, «ինքնակամ վերադարձի օրինականացում»՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հետագա վերաբնակեցման և արդեն տեղափոխված 8000 ընտանիքների հաստատման համար⁴⁵:

Գրությունում ընդգծվում էր, որ որպես վերադարձի հիմնական պատճառ ադրբեջանական բնակչությունը համարում էր տնտեսական անբավարար իրավիճակը ու անբարենպաստ բնակլիմայական պայմանները, հետևաբար, հայկական կողմն առաջարկում էր ադրբեջանական կողմին ուշադրություն դարձնել այս հիմնախնդիրներին և լուծել դրանք՝

⁴³ Նույն տեղում, թ. 42:

⁴⁴ Նույն տեղում, թ. 43:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 43:

քանզի դրանց լուծումը ամբողջապես կախված էր հենց Ադրբեջանի պետական մարմիններից⁴⁶:

Հատկանշական է, որ ադրբեջանական բնակչության վերաբակեցման երկրորդ փուլն (1950–1953 թթ.) արդեն ընթանում էր առավել դանդաղ և աչքի էր ընկնում ադրբեջանական բնակչության վերաբնակեցման ցանկության նվազմամբ: Հենց վերաբնակեցման ցանկության բացակայության պատճառով, Հայաստանի նախարարների խորհրդի փոխնախագահ Ա. Չարչոյլյանը 1952 թ. հունվարի 19-ի գրությամբ մերժում է Ադրբեջանի Նախարարների խորհրդի փոխնախագահ Մ. Ամիրասլանովի 1953–1954 թթ. Հայաստանից 3800 ադրբեջանական տնտեսության վերբնակեցման կազմակերպման 1952 թ. հունվարի 5-ի դիմումը⁴⁷: Այս փաստաթուղթը ապացուցում է, որ 1953 թ. վերաբնակեցման դադարեցումը պետք է համարել օրինաչափ և դա պայամանվորված էր վերաբնակեցման համար անհրաժեշտ հավաքակազմի բացակայությամբ:

Ընդհանրացնելով սույն հետազոտության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցման գործընթացը կանոնակարգված է եղել ԽՍՀՄ, ինչպես նաև Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ պետական մարմինների համապատասխան իրավական փաստադրերով, որոնք սահմանում էին վերաբնակեցման կազմակերպման գործընթացը, ադրբեջանական բնակչությանը հատկացվող արտոնությունները, դրամական

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

աջակցությունները: Ինչպես վերաբնակեցման վերաբերյալ ընդունված բազմաթիվ օրենսդրական փաստաթղթերը, այնպես էլ գործընթացի հետ կապված արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ապացուցում է վերաբնակեցման խիստ կամավոր բնույթը, ինչի մասին իր փաստաթղթերում բազմիցս ընդգծել է հենց ադրբեջանական կողմը: Հայկական կողմը վերաբնակեցման գործընթացի իրականացման ժամանակ ամբողջապես պահպանել է դրա կամավորության սկզբունքը՝ խիստ մարդասիրական վերաբերմունք ցուցաբերելով Ադրբեջանից վերադարձած վերաբնակիչների նկատմամբ:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 29, գ. 298, թ. 1–2:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչների
այցը Ս. Էջմիածին: Պատվիրակության կազմում նաև՝ Գերշ. Տ.
Մեսրոպ Արք. Աշճյան:

722. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ: 1700-ամեակի ուխտագնացու-
թիւնների միջ-թեմական ներկայացուցչական մարմնի: (Անդրանիկ
նիստ, Երևան, 19-21 փետրվար 1997 թ.) //Լուսավորիչ.- 1997.-
փետրվար- էջ 7; Էջմիածին.- 1997.- թ. 2-3.- էջ 135-136; Հասկ.-
Անթիլիաս, 1997.- թ. 1.- էջ 147-148:

Արարատյան հայրապետական թեմի Առաջնորդարանում կա-
յացած՝ 1700-ամյակի ուխտագնացությունների հանձնախմբի ենթա-
հանձնախմբի ներկայացուցիչների խորհրդաժողովի նախագահին էր
միջոցառումների գործադիր վարիչ Մեսրոպ Արք. Աշճյանը:

723. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ //Հայրենիք.- Բոստոն, 1986.- 24
յուլիսի.- էջ 1:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութեան պաշտոնական
ներկայացուցիչները Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին
բերեցին եղբայրական սիրո ողջույնը Ն.Ա.Օ.Տ.Տ. Կիլիկիո կաթո-
ղիկոս Գարեգին Բ-ից: Պատվիրակության կազմում նաև՝ Մեսրոպ
Արք. Աշճյան:

724. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ //Հայրենիք.- Բոստոն, 1987.- 30
դեկտ.- էջ 1, 7, լուսանկ.

1987 թ. դեկտեմբերի 14-18-ը կայացած Մեծի Տանն Կիլիկիո
Կաթողիկոսության Ազգային Կենտրոնական Վարչության Կրոնական
Ժողովի մասնակիցների թվում էր նաև Մեսրոպ Արք. Աշճյանը:

725. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ //Հասկ.- Անթիլիաս, 1996.- թ. 9-10.-
էջ 672:

Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի Առաջնորդ Գերշ. Տ.
Մեսրոպ Արք. Աշճյանի Հայաստանի Քրիստոնեացման 1700-ամյակի
նշման և Եկեղեցու կենտրոնական հանձնախմբի ղեկավար
նշանակելու մասին:

Gayane S. Hovhannisyan, *The Armenian Genocide Museum-Institute, Resettlement of the Azerbaijani population from Soviet Armenia (1947–1953)*.

The purpose of this article is to present the process of resettlement of the Azerbaijani population from Soviet Armenia in 1948–1953. To achieve this goal, we studied the relevant decrees of the Council of Ministers of the USSR, resolutions of the Councils of Ministers of the Azerbaijani SSR and the Armenian SSR, as well as archival documents confirming the voluntary nature of resettlement.

Studying the topic, we came to the conclusion that the process of resettlement of the Azerbaijani population from Armenia was regulated by the relevant legal documents of the USSR, as well as resolutions of the state bodies of the Armenian SSR and Azerbaijan SSR, which determined benefits and financial assistance to the Azerbaijani population. An examination of the archival documents related to the resettlement-related archival documents demonstrates the highly voluntary nature of resettlement process.

ԳԱՅԱՆԵ Խ. ՂԱԶԱՐՅԱՆ
ԳԱԱ պարմության ինստիտուտ

ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ 1946-1954 ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

*Բանալի բառեր*¹ առօրեականություն, ֆիլմեր, հետպատերազմյան շրջան, գաղափարական զենք, իրականության արտացոլում:

Ֆիլմի, որպես առօրեականության և սոցիալական պատմության ուսումնասիրության աղբյուր լինելու խնդիրների, 1990-ական թվականներից լայնորեն անդրադարձել են օտարերկրացի, հատկապես, ռուս հետազոտողները: Այս խնդիրները լավագույնս ամբողջացրել է Ուրալի դաշնային համալսարանի պրոֆեսոր Օ. Գորբաչևը՝ իր մեծածավալ հոդվածում: Վերջինս ուսումնասիրողին տալիս է հիմնարար գիտելիքներ՝ ֆիլմերի բովանդակության հավաստիությունը ստուգելու համար: Այսպես, ուսումնասիրողը ֆիլմը որպես աղբյուր դիտելուց առաջ պետք է պարզի հետևյալը.

1. Ֆիլմի ստեղծման պահին ինչպիսի՞ գործոններ էին նպաստում իրականության աղավաղմանը,

¹ Տե՛ս Գորբաչև Օ., Советский художественный кинематограф как исторический документ: Особенности анализа и интерпретации, <https://elar.urfu.ru/bitstream/10995/32956/1/dais-2015-15-11.pdf> (20.05.2021)

2. Որքանով է հեղինակը շահագրգռված իրականությունը ճշմարտացի արտացոլելու մեջ,

3. Ինչպիսի՞ գործոններ էին ամենաշատը ազդում մտքի խեղաթյուրման վրա²:

Ահա, այս կետերի պարզաբանումը թույլ կտա մեզ մի շարք դեպքեր և իրադարձություններ դիտել ֆիլմերի պրիզմայով: Այն հատկապես օգտակար է խորհրդային ժամանակաշրջանն ուսումնասիրելու տեսանկյունից:

Ընդհանրապես, գեղարվեստական ֆիլմերի նկարահանման դեպքում, իրականությունն արտացոլելու պահանջն առաջնային չէ, և բեմադրող ռեժիսորը կարող է տուրք տալ իր երևակայությանը: Սակայն, խորհրդային համակարգը սահմանել էր իր պահանջները, որին հետևելը բեմադրող ռեժիսորի համար դարձել էր օրինաչափ:

Խորհրդային իշխանությունները և «աղափարական կառույցները կինեմատոգրաֆիայի հետ մեծ հույսեր էին կապում: Այն պետք է օգներ, հպեստի նոր մտածողությունը ամրապնդվեր բնակչության մեջ և դառնար նոր սերունդ դաստիարակող կառույցագույն գեներ: Ասվածին գալիս է փաստելու 1923-ի «Պրավդա» թերթում լույս տեսած խորհրդային ագրիկուլ ղեկավարներից Լ. Տրոցկու՝ «Օղի, եկեղեցի և կինեմատոգրաֆ» ընդարձակ հոդվածը³: Տրոցկու կարծիքով, կի-

² Նույն տեղում:

³ Лев Троцкий, «Водка, церковь, кинематограф» (1923), «Правда», 1923. 12 июля. Ֆիլմերի կարևորությունը շեշտում էր նաև Վ.Ի. Լենինը, ով ամբողջացրել է ասելիքը իր հայտնի արտահայտության մեջ՝ «Դուք պետք է հստակ հիշեք, որ ֆիլմը մեզ համար բոլոր արվեստներից ամենակարևորն է» (տե՛ս Болтянский Г., Ленин и кино, Москва, 1925, էջ 19):

նեմատոգրաֆիան կարևորագույն հակաավելոհոլային և հակաեկեղեցական զենք է, որը պետք է առավելագույն կերպով օգտագործել: «Կինեմատոգրաֆիան կզվարճացնի, կլուսավորի, կզարգացնի երևակայությունը: Այն մեծ մրցակից է ոչ միայն գարեջրատան, այլև եկեղեցու համար: Ահա մի զենք, որին պետք է ամեն գնով տիրապետել»⁴: Այդ «զենքը» առավել նպատակային և կիրառելի դարձավ հատկապես հետպատերազմյան տարիներին, երբ խնդիր դրվեց ֆիլմերում արտացոլել վերականգնվող «նոր կյանքը»: Ասվածը հիմնավորում գտավ 1946 թ. սեպտեմբերի 4-ի ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի «Մեծ կյանք» կինոնկարի մասին հատուկ որոշման մեջ: Դրանում կարմիր թելով անցնում էր այն միտքը, որ այդուհետ նկարահանվող ֆիլմերը պետք է ցույց տան հետպատերազմյան վերականգնվող արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հեռանկարները: Պետք է պատկերեն լուսավոր ապագայի նկատմամբ անվերապահ հավատ ունեցող, աշխատող, նպատակասլաց և առաջադեմ խորհրդային մարդուն⁵: Ահա այս ցուցումներն էլ ուղենիշ դարձան ԽՍՀՄ ողջ կինոարվեստի աշխատողներին՝ ստեղծագործական ծրագրեր կազմելու համար: Ուշագրավ է, որ հայ իրականության

⁴ Այդպիսի «զենքեր» կամ «գործիքներ» էին համարվում նաև տոները, որոնց միջոցով քաղաքացուն տրվում էր «նոր և ճիշտ աշխարհընկալում» (տե՛ս **Ղազարյան Գ.**, Խորհրդային տոները Հայկական ԽՍՀ բնակչության առօրյա կյանքի համատեքստում, «Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը» (1940–1960-ական թվականներ) (հոդված. Ժող., խմբ. Կ. Խաչատրյան)», Երևան, 2020, էջ 175):

⁵ Постановление Оргбюро ЦК ВКП(б), О кинофильме «Большая жизнь» 4 сентября 1946 г., «Литературная газета», 1946, N 38 (2301), 14 сентября:

մեջ նման գաղափարաբանությամբ ֆիլմ նկարվեց միայն 1949 թ.:

«Երևան» կինոստուդիայի կողմից հետպատերազմյան շրջանում նկարահանված առաջին գեղարվեստական ֆիլմը դարձավ Ղազարոս Աղայանի համանուն հեքիաթի հիման վրա նկարահանված «Անահիտը»: Այն, սակայն, նկարահանվեց ոչ թե որպես հեքիաթ, այլ պատմական ֆիլմ, որը չարժանացավ ժամանակի կինոքննադատների հավանությանը:

Խորհրդային հայտնի կինոգետ և կինոքննադատ Սաբիր Ռիզաևը⁶ սույն ֆիլմի անհաջողությունը հիմնականում կապում էր սցենարի հեղինակ Վլադիմիր Շվեյցերի հետ, ով ծանոթ չլինելով հայ գրականությանն ու մշակույթին⁷, չկարողացավ փոխանցել հեքիաթի ողջ «իմաստը»⁸: Ֆիլմի մասին «Խորհրդային Հայաստան» թերթում լույս տեսած իր քննադատական հոդվածում⁹ խոսում է նաև Հրաչյա Քոչարը՝ մեղքի առյուծի բաժինը գցելով կինոստուդիայի գեղարվեստական ղեկավար Համո Բեկնազարյանի վրա: Նա կրկին շեշտում էր այն հանգամանքը, որ կինոստուդիայի ծրագիրը պետք է լինի ներկան և հերոսական մարդուն՝ Հայրենական պատերազմը հաղթած զինվորին, սպային, գեներալին, բանվորին, ինժեներին, շինականին և գիտնականին պատկերելը:

⁶ Խորհրդային թատերագետ, կինոգետ, ազգությամբ՝ ադրբեջանցի: 1954 թ. եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի սցենարական բաժնի վարիչը:

⁷ Խորհրդային սցենարիստ, ազգությամբ ադրբեջանցի: Ադրբեջանական ԽՍՀ վաստակավոր գործիչ:

⁸ Տե՛ս Ризаев С., Армянская художественная кинематография, Ереван, 1963, էջ 279:

⁹ Ինչպես է իրագործում Երևանի կինոստուդիան ՀԱՄԿ(Բ)Պ Կենտկոմի պատմական որոշումը, Սովետական Հայաստան, 1947, N 207, 4 սեպտեմբերի:

Այն, որ ֆիլմը չստացված է, խոստովանում էր հենց ռեժիսորը՝ Համո Բեկնազարյանը, ով այն պատկերացնում էր որպես հեքիաթ, սակայն բեմադրողները պատկերացնում էին որպես լեգենդ¹⁰։ Ահա, թե ինչ է գրում կինոռեժիսորը իր հուշերում. «...Իմ բողոքները ոչ մի արդյունք չտվին։ ...Այնուամենայնիվ, ֆիլմը էկրան բարձրացավ և պետությանը որոշակի օգուտ բերեց։ Բայց նման մի ֆիլմ ինձ ոչ բավարարություն կարող էր պատճառել, ոչ ուրախություն»¹⁰։

Ճիշտ է, ֆիլմը ակնահաճո է իր դեկորացիաներով և գեղարվեստական լուծումներով, սակայն իրականացված համադրությունը՝ հեքիաթի, պատմական ֆիլմի և ժամանակի գաղափարական ոգու, այն դարձնում է ոչ այդքան ընկալելի։ Դրան միանում են նաև ֆիլմի ստեղծման ընթացքում կինոստուդիայում առկա դժվարություններն ու ներքին անհամաձայնությունները¹¹, և պատկերն ակնհայտ է դառնում։

Իհարկե, կինոստուդիայում այդ տարիներին գոյություն ունեին բազմաթիվ սցենարիստներ, որոնք հաստատման էին սպասում, սակայն, մերժվում էին։ Դրանք համարվում էին գաղափարապես թույլ, քանի որ արժարժում էին ոչ թե ընդհանրական թեմաներ, որոնք «հոգեհարազատ էին Միության ժողովուրդներին, այլև ազգային ինքնությունը արտահայտելու միտումներ ունեին»¹²։

¹⁰ Բեկնազարյան Հ., Հուշեր դերասանի և կինոռեժիսորի, Երևան, 1968. էջ 287–288։

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1381, ց. 3, գ. 227, թ. 2–10։

¹² ՀԱԱ, ֆ. 1381, ց. 3, գ. 76, թ. 1 շրջ.։

Այլ էր պատկերը «Արարատյան դաշտի աղջիկը» ֆիլմի դեպքում: Ֆիլմը որոշակի առումով լուծում է այն խնդիրները, որոնք դրված էին Ստալինյան կինեմատոգրաֆիայի առջև. ցույց տալ հետպատերազմյան նորը, ստեղծել դրական հերոսի նոր կերպար: Ֆիլմի յուրաքանչյուր հերոս կրում է գաղափարական պատասխանատվություն նոր մարդու դաստիարակման գործում: Գլխավոր հերոսուհի Անուշի կերպարը իրենից ներկայացնում է պատերազմական օրերի ծանր պայմաններում կուփված, իր ուժերի վրա վստահ, խելացի, աշխատասեր կոմերիտուհու կերպար, որն իր ողջ ուժերը ներդնում է ավելի լավը դարձնելու համար հաղթանակած երկրի վաղվա օրը: Անուշի հակապատկերն իր փեսացու Տիգրանն է, ով Վարդանիկ գյուղի կոլտնտեսության նախագահն է: Նա ինքնավստահ և հույսը ուրիշների օգնության վրա դնող երիտասարդ է, ով կոլտնտեսության ամենամյա առաջընթացը ապահովում է հարևան կոլտնտեսությունների հաշվին: Նրանց միջև հարաբերությունները ծավալվում են այս խնդիրների շուրջ: Ֆիլմում առաջ են քաշվում կարևոր, այսպես կոչված, «պաստառային» ճշմարտություններ: Առօրյա մի քանի դրվագներով ցույց է տրվում չաշխատող, այսպես ասած, «լոդր» զանգվածի բացասական ազդեցությունը գյուղի վաղվա օրվա վրա¹³: Ֆիլմում շեշտվում է նաև այն միտքը, որ ոչ թե կուսակցությունը՝ ի դեմս նոր կոլտնտեսության նախագահ դարձած Անուշի, չի ցանկանում օգնել իր անդամներին, այլ

¹³ Տե՛ս «Արարատյան դաշտի աղջիկը» (1949, ռեժ.՝ Հ. Բեկնազարյան), <https://www.youtube.com/watch?v=d7I8TgDsGkY> (դրվագ՝ 6.15–8.20), (24.12.2021):

այդ քայլով նա դաստիարակում է չաշխատողներին՝ նրանց դարձնելով ինքնուրույն¹⁴:

Տիգրանի և իր մոր հացի սեղանի շուրջ ծավալվող խոսակցության մեջ առաջ է քաշվում «Ես»-ի և «Մենք»-ի, այսինքն, կոլեկտիվի գաղափարը: Այս դրվագում ամրասլնդվում է այն միտքը, որ «Մենքի» հետևից գնալով անձը կարող է խուսափել այնպիսի խնդիրներից, որը կարող է անել «Ես»-ը առաջ տանելու դեպքում: Ու այդ ամենը երիտասարդին ասվում է հասակն առած կնոջ շուրթերից:

Ֆիլմում, ԱՄՆ-ից եկած հայրենադարձի կերպարով, ցույց է տրվում նրա նկատմամբ պետության վերաբերմունքը, մասնակցությունը գյուղում ծավալվող աշխատանքներին, նրա խոսքը հարգելը, ժողովներին մասնակից դարձնելու իրավունքը: Հայրենադարձին զարմացնում է այն հանգամանքը, թե ինչպես ժողովներին մարդիկ կարող են ազատորեն վիճել և արտահայտել իրենց միտքը¹⁵: Այս դրվագի ներառումը ցույց է տալիս, թե ինչպիսի լայն քարոզչական գործունեություն էին ծավալում խորհրդային իշխանությունները հայրենադարձե-

¹⁴ Տե՛ս նույն տեղում (դրվագ՝ 33.03–35.08):

¹⁵ Տե՛ս նույն տեղում (դրվագ՝ 42.28–44.25):

րի հետ տարվող աշխատանքների, առումով¹⁶։ Սա այն դեպքում, երբ իրականությունը հաճախ դրա հակառակն էր¹⁷։

Ֆիլմում դրվագային ցույց են տրվում նաև իրենց գործը սիրող, այն հաճույքով և ժպիտով կատարող կոմերիտուհին, շինականը, տրակտորիստը, դարբինը, նրանք անտրտունջ կատարում են աշխատանքը՝ ապահովելով նաև սեփական ուրախ հանգիստը¹⁸։ Այդ դրվագները յուրատեսակ ուղերձներ էին քաղաքացիներին՝ հետպատերազմյան թուլացած երկիրը ոտքի կանգնեցնելու և այն ավելի լավը դարձնելու առումով։

Չէր կարող շրջանցվել նաև անհատի պաշտամունքը։ Գյուղում իրականացվող ամեն նորը կապվում էր Ի. Ստալինի անվան հետ։ «Ընկեր Ստալին»-ն էր իրենց տարիներ շարունակ երջանիկ կյանք ապահովող անձը։ Ստալինի մեծադիր նկարն առկա էր յուրաքանչյուր տանը։ Նրա կիսանդրին դրվում էր կոլտնտեսության նախագահի սենյակում, նրան փառաբանող պաստառներն առկա էին յուրաքանչյուր շինության վրա։

Այս ամենով հանդերձ՝ հատկանշական է, որ ֆիլմում չկան հետպատերազմյան գյուղի իրական խնդիրներն արտացոլող դրվագներ։ Ճիշտ է, ֆիլմն ունի ասելիք, ուղերձներ,

¹⁶ Այս առումով շատ կարևոր էր լինելու նաև Կ. Սիմոնովի և Չ. Ազրոսենկոյի սցենարով գրված. Համո Բեկնազարյանի կողմից նկարված «Երկրորդ Քարավան» ֆիլմը, որը, սակայն, էկրան չբարձրացավ։ Սցենարը պահվում է Հայաստանի ազգային արխիվում, կինոստուդիայի ֆոնդում (տե՛ս ՀԱՄ, ֆ. 1381, ց. 1, գ. 53)։

¹⁷ Տե՛ս մանրամասն Ղանգարյան Գ., Խորհրդային Հայաստանում հայրենադարձների առօրյայի պատմությունից (1946-1948 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», N 3 (212), 2019, 120-127։

¹⁸ Տե՛ս նույն տեղում (դրվագներ՝ 1.50-2.07, 19.45-20.03)։

խրատական ենթատեքստեր, որը համապատասխանում էր գաղափարական պահանջներին՝ պատկերել հերոսական մարդուն և հետպատերազմյան նորը, բայց չունի հետպատերազմյան գյուղի ծանր վիճակը, իրական խնդիրները ներկայացնող և իրականությունը արտացոլող դրվագներ: Այն իր «ժանրային առանձնահատկություններով չէր համապատասխանում» նաև գեղարվեստական ղեկավար Համո Բեկնազարյանի «ստեղծագործական հակումներին»¹⁹: Հենց այստեղից էլ բխում է ֆիլմի ստեղծման պահին իրականության աղավաղմանը նպաստող գործոնների և հեղինակի՝ իրականությունը ճշմարտացիորեն արտացոլելու շահագրգռվածության միջև գոյություն ունեցող հակասությունը:

Ի. Ստալինի մահից հետո, երբ սկսվեց անձի պաշտամունքի քննադատումը և որոշակի թուլացան վերահսկողությունն ու ճնշումները կառույցների նկատմամբ, «Երևան» կինոստուդիայի աշխատանքներում նկատվում են մեծ փոփոխություններ: Դա ակնհայտ երևում է 1954 թ. նկարահանված երկու կարճամետրաժ ֆիլմերում: Դրանցից առաջինը երիտասարդ, նորավարտ ռեժիսոր Լաերտ Վաղարշյանի նկարահանած «Փեսատես» ֆիլմն է: Ֆիլմը նվիրված է խոտանի թողարկման դեմ պայքարին: Երևանի ժամացույցի գործարաններից մեկում ստուգումներից պարզվում է, որ արտադրված ժամացույցներն, անսարքության պատճառով, «հետ են մնում»: Այդ մասին հայտնում են ավագ վերահսկիչ Արտոյին, որը կարգադրում է դուրս գրել ժամացույցը վաճառքի՝ պատ-

¹⁹ Տե՛ս Բեկնազարյան Հ., նշվ. աշխ., էջ 228:

ճառաբանելով, որ գործարանի վրա դրված «պլանը» պետք է կատարել: «Պլանը» ամեն ինչից վեր էր: Բացի այդ, ժամացույցները մեծ պահանջարկ ունեին: Դա պայմանավորված էր նրանով, որ ժամացույցի վրա պատկերված էր սիրելի քաղաքի՝ Երևանի համայնապատկերը:

Հետաքրքիրն այստեղ այն էր, որ կինոստուդիայի սցենարական բաժնում տեղի ունեցող քննարկման ժամանակ շեշտը դրվում էր հենց գործարանի տեսարանի վրա: Մեծամասնության կարծիքով նման դեպքերը չպետք է «ոեկլամորեն» իցույց դնել, մանավանդ կարճամետրաժ ֆիլմերի պարագայում, երբ հետագա իրադարձությունները այդ տեսարանի հետ սերտորեն կապված են: Բոլորը, սակայն, համաձայնում են այն հարցում, որ ժամացույցի տեսարանը վերցված է իրական կյանքից և պետք է վեր հանել առկա թերությունները²⁰: Այդուհանդերձ, խնդիր դրվեց, որ չպետք է այդ թերությունը վերագրել ամբողջ գործարանին և աշխատակիցներին: Այն հենց հերոսի սխալն էր, ով վերջում իր արարքը խոստովանում է: Դա նաև ակնհայտ երևում է ֆիլմում, երբ աշխատակիցը զգուշացնում է Արտոյին իր արարքի ամբողջ վտանգի մասին²¹: Շատ կարևոր է այստեղ նաև հերոսի կերպարի հակասությունը, որի մասին քննարկմանը չի խոսվում: Հերոսը Ա. Պապայանի սցենարում²² ներկայացվում է որպես վախ-

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1381, ց. 1, գ. 228, թ. 22–25:

²¹ Տե՛ս «Փեսատես» (1954 թ.), (ռեժ.՝ Լ. Վաղարշյան), <https://armfilm.co/hy/haykakan-hin-filmer/17173-pesates-film-1954.html> (դրվագ՝ 2.50–4.00), (24.12.2021):

²² Սցենարը պահվում է Հայաստանի ազգային արխիվում, կինոստուդիայի ֆոնդում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1381, ց. 1, գ. 75): Այն սկզբից վերնագրվել է՝ «Փեսատես կամ հազար ու մի արկած», հետագայում միայն «Փեսատես»:

կոտ մի անձնավորություն, ով շատ դժվար է խոստովանում իր մեղավորությունը բաց թողնված խոտան ժամացույցի համար և, նույնիսկ, ցանկանում է «փեսատեսության» ժամանակ փախչել:

Սցենարական բաժնի քննարկումներից, ինչպես նաև սցենարում և նկարահանված ֆիլմում առկա որոշ տեսարանների և գլխավոր հերոսի կերպարի միջև գոյություն ունեցող հակասություններից ակնհայտ է, որ թեև կինոստուդիան որոշակի ազատություն էր ձեռք բերել իրական կյանքի թերությունները և խնդիրները ֆիլմի միջոցով վեր հանելու առումով, այդուհանդերձ, դրանք ներկայացվում էին շատ զգույշ՝ պահելով գաղափարական գիծը: Ֆիլմում շեշտվում է, որ կան թերություններ, բայց դա ոչ թե ընդհանուր համակարգի խնդիրն է, այլ պայմանավորված է անձերով և հեշտ լուծելի է:

Ավելի սուր հարցերի էր անդրադառնում «Մանրուք» ֆիլմը: Ֆիլմում վեր էին հանվում և քննադատվում շինարարական կազմակերպության թերությունները, այն «մանրուքները», որոնց պատճառով տուժում էր խորհրդային քաղաքացին:

Ֆիլմում խոսվում է այն մասին, թե ինչպես ինժեներ Միսակ Սողոմոնյանը, «պլանը» գերակատարելու համար, ժամկետից շուտ շահագործման է հանձնում բազմաթիվ թերություններով, դեռևս շինարարական շատ աշխատանքներ ավարտին չհասցրած շենք: Շենքի ընդունող հանձնաժողովի նախագահին, առանց բնակելի տները տեսնելու, ինժեների տանը ճոխ հյուրասիրությունից հետո ստորագրում է ընդուն-

ման ակտը²³: Ընդ որում, շնորհավորելը, այսպես կոչված, «մաղարիչ անելը» հանդիսանում էր խորհրդահայ քաղաքացու առօրյա կյանքի կարևորագույն բնութագրիչ և, նույնիսկ, կարծես, օրենքի ուժ էր ստացել²⁴:

Ֆիլմում շատ սուր ներկայացված է քծնող պաշտոնյայի կերպարը, ով ցանկացած պահի կարող է երես թեքել իր վերադասից՝ խուսափելով պատասխանատվությունից:

Այս ֆիլմը, ընդհանուր առումով, ցույց է տալիս, թե ինչպես էր համակարգը կոծկում թերությունները, այսպես կոչված, «մանրուքները», որոնք գնալով ավելանում էին:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել, որ գեղարվեստական ֆիլմերը ոչ միայն կարող են դառնալ, այլ նաև հանդիսանում են խորհրդային առօրեականության պատմության ուսումնասիրման անգնահատելի աղբյուրներ: Սակայն, շատ կարևոր է ուսումնասիրության ժամանակ զուգահեռներ անցկացնել հեղինակի ստեղծագործերակայության և իրականության միջև, միևնույն ժամանակ, չանտեսելով ամենակարևոր գործոններից մեկը՝ ժամանակի գաղափարական պահանջը:

²³ Տե՛ս «Մանրուք» (1954 թ.). (նեժ.՝ Գ. Մելիք-Ավագյան).

<https://www.facebook.com/hinfilmer/videos/%D5%AF%D5%A1%D6%80%D5%B3%D5%A1%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80%D5%A1%D5%AA%D5%AF%D5%AB%D5%B6%D5%B8%D5%B5%D5%AB%D5%AA%D5%A1%D5%B4%D5%B4%D5%A1%D5%B6%D6%80%D5%B8%D6%82%D6%841954/1003692466435912/> (դրվագ՝ 3.00–5.00), (24.12.2021):

²⁴ Տե՛ս **Жамгарян Г.**, «Несуны» в Советской Армении 1960-ых годов: Анализ исторической памяти по устным источникам, “Norwegian Journal of development of the International Science”, N 34. 2019, էջ 13:

Гаяне Х. Казарян, Институт истории НАН РА, Повседневность в контексте советских армянских художественных фильмов 1946–1954 годов.

В статье описывается повседневная жизнь в фильмах 1946–1954 гг. В основном акцент ставится на художественных фильмах, снятых в киностудии «Ереван» в тяжелые послевоенные годы. Анализ фильмов, архивов и мемуаров позволяет утверждать, что художественные фильмы являются бесценным источником для изучения истории советской повседневности.

Gayane Kh. Ghazaryan, Institute of History of the NAS RA, Everyday life in the context of Soviet-Armenian feature films of 1946–1954.

The article describes the daily life of films in 1946–1954. The main focus is on feature films shot by “Yervan Film Studio” in the difficult post-war years. An analysis of films, archives and memories allows us to conclude that feature films are an invaluable source for studying the history of Soviet everyday life.

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԱԶԳԱՅԻՆ
ԶԱՐԹՈՆՔԻ» ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ՝**

Քանալի բառեր՝ Մեծ Եղեռն, Խորհրդային Հայաստան, «ազգային զարթոնք», առօրեականության, ՀԿԿ, ազգային հարց:

Ազգային հարցը Խորհրդային պետության նրբազգաց խնդիրներից էր: Բովանդակային առումով այն դժվար է անարտուն կերպով ձևակերպել՝ հաշվի առնելով հարցի բազմաշերտ ընկալումները: ԽՍՀՄ իշխանությունների ազգային քաղաքականությունն ուղղված էր սոցիալիստական գաղափարախոսության գերիշխանության ամրապնդմամբ ազգային հիմնախնդիրների «երկրորդացմանը» և, սրանցով պայմանավորված, հանրային տրամադրությունների կառավարմանն այն տրամաբանությամբ, որ ազգային խնդիրները մարդկանց գիտակցության մեջ չլինեն առանցքային մտահոգությունների մակարդակում: Խորհրդային ազգերի եղբայրության և սոցիալիստական արժեհամակարգի շուրջ նրանց

համախմբման գաղափարները խորհրդային ժողովրդի հավաքական մտածողության և նրա քաղաքացիական նույնականացման ընդհանրական բնութագրիչներն էին: Այս մոտեցումները՝ հակադրելով էթնիկ-ազգային մտածողությանը՝ վերջինս խորհրդային իշխանությունները հետապնդում էին՝ համարելով «բուրժուական հասարակարգի մնացուկ», արատավոր երևույթ, որը խաթարում է «կոմունիստական իդեալի» իրականացումը: Խորհրդային Հայաստանի քաղաքական պատմությունը՝ սկսած 1920-ական թվականներից, ընթանում էր այս տրամաբանության մեջ, երբ բոլշևիկները սկսեցին բացահայտ անհանդուրժողականություն ցուցաբերել հայկական ազգային խնդիրների, ազգային իդեալների և ազգային մտածողության հանդեպ: Արդեն 1930-ական թվականների քաղաքական բռնաճնշումները, ինչպես գիտենք, կազմակերպվում էին նաև (եթե չասենք մեծ մասամբ) ազգայնականության, ազգային թեքման դեմ պայքարի մթնոլորտում:

1961 թ. ԽՄԿԿ 22-րդ համագումարում Ն. Խրուշչովն այսպես բնորոշեց «խորհրդային ժողովրդին». «ԽՍՀՄ-ում ձևավորվել է տարբեր ազգության մարդկանց պատմական ընդհանրություն՝ «խորհրդային ժողովուրդ»»: Այս մարդիկ օժտված են ընդհանուր բնութագրական գծերով: Նրանք ունեն ընդհանուր սոցիալիստական Հայրենիք՝ ԽՍՀՄ-ը, տնտեսական ընդհանուր հենք՝ սոցիալիստական տնտեսությունը, ընդհանուր սոցիալ-դասակարգային կառուցվածք, ընդհանուր աշխարհայացք՝ մարքսիզմ-լենինիզմը, ընդհանուր նպա-

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ի տրամադրած

տակ՝ կոմունիզմի կառուցումը, հոգևոր նկարագրի և հոգեբանության բազմաթիվ ընդհանրություններ»²⁵։ Խրուշչովը սրանով, կարծես, ազդարարում էր նոր տիպի՝ «խորհրդային» ազգային գիտակցության ձևավորումը և նրա հաղթանակը խորհրդային ազգերի ազգային ինքնագիտակցության և մտածողության հանդեպ։ Այս վստահությունը, բնականաբար, արդարացված չէր, որովհետև ազգային հարցի պարբերական սրացումները ԽՍՀՄ-ում ցույց տվեցին, որ «խորհրդային ազգի» կոնցեպտը գործնական արտահայտություն չունեցավ՝ մնալով խորհրդային իշխանությունների գաղափարախոսական ու քարոզչական պատկերացումների տիրույթում։ Սակայն, չպետք է թերագնահատել կուսակցական գաղափարախոսական ազդեցությունները խորհրդային ժողովուրդների ազգային մտածողության վրա։ Գաղափարական պարտադրանքի միջոցով խորհրդային իշխանություններին հաջողվել էր ազգային հանրապետություններում ձևավորել ազգային օրակարգերի ժխտման կամ դրանց ուղղորդման համակարգ, ինչը պետք է ապահովագրեր ազգային հարցի անցանկալի զարգացումներից։

Մոսկվան 1965 թ. չկարողացավ խուսափել խորհրդային Հայաստանում Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների անցկացումից և պահպանել Հայոց ցեղասպանության փաստի հիշատակման արգելքը։ Ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցան ոգեկոչման միջոցառումներ, միաժամանակ թույլատրվեց լույս ընծայել Մեծ Եղեռնին նվիրված

Ֆինանսավորմամբ՝ 21T-6A274 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում։

գեղարվեստական ու գիտահանրամատչելի գրականություն, անցկացվեցին դասախոսություններ և այլն²⁶։ Բոլոր այս միջոցառումներն ամբողջությամբ վերահսկվում էին Մոսկվայի կոդմից՝ ամբողջատիրական վարչակարգի լավագույն ավանդույթներով։ Ամենակարևոր դերը վերապահված էր գաղափարական աշխատանքին, ինչի միջոցով պետք էր հնարավորինս «անվտանգ» բովանդակություն հաղորդել միջոցառումների օրակարգին։ Այս համատեքստում Մեծ Եղեռնի թեման տեղափոխվեց կոմկուսի քարոզչական թեզերի տիրույթ։ Մամուլում այն ներկայացվում էր աշխարհում կատարված նմանատիպ հանցագործությունների հետ համադրությամբ և հատուկ շեշտվում էր խորհրդային իշխանության ազգափրկիչ դերը հայ ժողովրդի կյանքում։ «Ավանգարդ» թերթի՝ 1965 թ. ապրիլի 24-ի համարում «Ժողովուրդը» վերտառությամբ հոդվածն սկսվում էր փոքրիկ պարբերությամբ, որում ներկայացվում էին Հայաստանի տնտեսական և արդյունաբերական ձեռքբերումները՝ շնորհիվ խորհրդային կարգերի հաստատման։ Ցեղասպանության իրադարձությունները՝ հիմնականում արևմտահայ մտավորականության ջարդերի և հայերի տեղահանության ու ջարդերի մասին ընդհանուր տեղեկությունները, համառոտ ներկայացվում էին հոդվածի առաջին փոքրիկ սյունակում։ Այստեղ հատուկ շեշտված էր նաև ՀՅԴ համագործակցությունը Իթթիհատի հետ։ Մնացած շարադրանքը վերաբերում էր սոցիալիզմ-կապիտալիզմ հակադրություն-

²⁵ http://istmat.info/files/uploads/52747/22_sezd_chast_1_1962.pdf (11.12.2021)։

²⁶ Տե՛ս Հայոց պատմություն, հատոր IV, գիրք երկրորդ, Երևան, 2016, էջ 115–117։

ներին, Հայկական հարցի նկատմամբ Արևմուտքի կրավորական կեցվածքին և բոլշևիկների հակաբուրժուական պայքարին: Հոգվածում անդրադարձ կար նաև միջազգային հանրության կողմից ցեղասպանությունների դատապարտմանը, որում բնութագրականն այն է, որ որպես միջազգային հանրության ներկայացուցիչներ հանդես էին գալիս միայն միջազգային բանվորական-հեղափոխական շարժումների առաջնորդները²⁷: Նույն ոգով էր շարադրված նաև «Սովետական Հայաստան» թերթի «Արհավիրքից վերածնունդ» հոդվածը²⁸:

Խորհրդահայ մամուլի՝ Մեծ Եղեռնին վերաբերող այս շրջանի հրապարակումներին բնորոշ էին լիրիկական, պաթետիկ շեշտադրումները՝ առանց Հայոց ցեղասպանության հարցի առարկայական քննարկումների և, որ ամենակարևորն է, նրանցում ուղղակի արգելված էր անդրադարձը Թուրքիայի կողմից հանցագործության ժխտմանն ու հայ ժողովրդի արդար պահանջատիրությանը: Քարոզչական այս պարտադրանքը հստակ դրված էր նաև ապրիլյան միջոցառումների վրա: Խորհրդային Հայաստանի ղեկավարներն ունեին հստակ ցուցումներ՝ թույլ չտալ անկարգություններ, անել ամեն ինչ, որ ոգեկոչման միջոցառումները ժողովրդական հուզումների պատճառ չդառնան և թույլ չտալ, որ որևէ կերպ արձարձվի հայկական հողերի վերադարձի հարցը²⁹: Այնուամենայնիվ, չնայած Խորհրդային Հայաստանի իշխա-

²⁷ «Ավանգարդ», № 49, 1965 ապրիլի 24, էջ 2:

²⁸ «Սովետական Հայաստան», № 96, 1965 ապրիլի 24, էջ 3:

²⁹ «Երևան» ամսագիր, թիվ 4, 2003 թ., <https://imyerevan.com/ru/-society/view/2256> (15.12.2021):

նությունների կանխարգելիչ ձեռնարկումներին, մայրաքաղաքի հատկապես ակտիվ երիտասարդության մասնակցությամբ, այդ օրը տեղի ունեցան հանրահավաքներ, արձանագրվեցին նաև անկարգության դեպքեր³⁰: Պետք է արժանին մատուցել Հայաստանի կուսակցական ղեկավարությանը՝ ի դեմս ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յ. Զարոբյանի, որն արեց ամեն հնարավորը, որպեսզի ցույցի մասնակիցները չենթարկվեն քրեական պատասխանատվության:

Ապրիլյան ոգեկոչման միջոցառումների անմիջական հրահանգավորումը Մոսկվայի կողմից հետապնդում էր այս միջոցառումների վերաբերյալ հայ հասարակության մեջ վերահսկելի հանրային տրամադրություններ և հոգեբանական արձագանքներ ունենալու նպատակ: Մեծ Եղեռնը նրբազգացուցավոր թեմա է հայերի համար, ուստի նրա նշանավորումը հասարակության մեջ չպետք է առաջացնեք կենտրոնին անհանգստացնող հուզական տրամադրություններ, չպետք է դրդեր հակախորհրդային նախաձեռնությունների, ազգային հարցերի վերաբերյալ վտանգավոր շահարկումների և այլն: Խորհրդահայ նշանավոր գրող-հրապարակախոս Վարդգես Պետրոսյանի բնորոշմամբ. «Քառասունհինգ տարի, 1920-ից մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք... տխրելու իրավունքից»³¹: Հասկանալով, որ Հայոց ցեղասպանության փաստը մոռացության տալն այլևս անհնար է, հայերի ցեղասպանության նկատմամբ խորհրդա-

³⁰ Հարությունյան Ա., Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և երկրորդ հանրապետությունը, Երևան, 2015:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

հայ հասարակության միակ զգացական վիճակը, որն ընդունելի էր Մոսկվայի համար, դա տխրությունն էր: Անվնաս, «ստերիլ» տխրությունը, որը ինչ-որ տեղ կխորացներ ցեղասպանված ազգի բարդությոը, մարդկանց գիտակցության մեջ միաժամանակ ամրապնդելով այն համոզմունքը, որ միայն ԽՍՀՄ-ում հայերը հուսալիորեն պաշտպանված են գոյաբանական վտանգից: Սրան պետք է վերագրել նաև այն հանգամանքը, որ Հայաստանում հայերի ցեղասպանությանը նվիրված բոլոր միջոցառումները, մինչև Խորհրդային կարգերի փլուզումն, անց էին կացվում գաղափարական չափանիշներին համապատասխանող նույնանման սցենարներով՝ շեշտելով հատկապես համազգային վշտի և տառապանքի բաղադրիչները:

1965 թ. ապրիլյան իրադարձությունների հանրային արձագանքները) Հայ պատմագրության զարգացման ներկա փուլում, երբ օրավուր աճում է Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության նկատմամբ գիտական հետաքրքրությունը, «ազգային զարթոնքի» պատմությանը նվիրված հետազոտություններում արժևորվում է նաև այս իրադարձության և, առհասարակ, ազգային ուղղվածության խնդիրների հանրային արձագանքների հարցը: Ուստի, ստորև կփորձենք ներկայացնել մի շարք աղբյուրների ուսումնասիրության վրա հենվող մեր դիտարկումները՝ այն համոզմունքով, որ հարցի հետագա ուսումնասիրությունը չափազանց կարևոր է սոցիալիստական գաղափարախոսության տիրապետության ժամանակներում ազգային մտածողության

և ազգային հոգեբանության առանձնահատկություններն ու ազգային հիմնախնդիրների հիմնահարցերը համակողմանի բացահայտելու տեսանկյունից:

Մեր կողմից ուսումնասիրված նյութերը վկայում են, որ 1965 թ. Երևանում տեղի ունեցած իրադարձությունները հանրության լայն շրջանակների, հատկապես, շարքային քաղաքացիների շրջանում լայն արձագանք չեն ստացել: Խորհրդային ապրելակերպի հաստատված նորմերը, կենցաղային տարաբնույթ խնդիրները, ինչպես նաև անաչառ տեղեկատվության անհասանելիությունն ու, որ երևի թե ամենալճորոշն էր այս հարցում, գաղափարական պարտադրանքները, քաղաքացիների մոտ անհնար էին դարձնում ապրիլյան դեպքերի կապակցությամբ համազգային ոգևորությունը: Առավել մեծ ընդդիմադիր ակտիվություն դրսևորել են միայն մայրաքաղաքի բնակիչները, հատկապես՝ երիտասարդությունը, իսկ Հայաստանի մնացած շրջաններում այս շարժմանը զանգվածային մասնակցություն չի եղել, բողոքի ակցիաներ կամ անկարգություններ չեն գրանցվել: Օրինակ՝ ուսումնասիրություններ կատարելով Վանաձորի քաղաքային արխիվում՝ 1960-ական թվականներին կատարված հանցագործությունների մեղադրական նյութերում փորձեցինք գտնել գեթ մեկ դատավճիռ, որը կայացված կլիներ ազգային հողի վրա տեղի ունեցած իրավախախտումներով: Դատելով այս նյութերից՝ 1965–1968 թթ., Վանաձոր քաղաքում (խորհրդային տարիներին՝ Կիրովական) այդպիսիք ուղղակի չեն գրանցվել: Որևէ մեկը չի դատապարտվել ո՛չ արգելված բովանդակությամբ

թռուցիկներ տարածելու, ո՛չ ազգային քարոզչություն անելու և ո՛չ էլ երևանյան իրադարձություններին մասնակցելու համար³²: Սա, կարծում ենք, ունի նաև օբյեկտիվ բացատրություն: Քանի որ Երևանն էր հայ քաղաքական, ազգային և մշակութային կյանքի կենտրոնը, ապա Մեծ Եղեռնի ոգեկոչման արարողությունների բուռն արձագանքը Երևանում հասկանալի է: Խորհրդային Հայաստանի շրջաններում այս իրադարձության արձագանքներն առավել թույլ էին: Վայոց Ձորի Շատին գյուղի բնակիչներից մեկը, որի հետ բանավոր պատմության նյութերի հավաքագրման նպատակով ունեցանք հարցազրույց, թեմայի առնչությամբ ուշագրավ դրվագներ պատմեց: Նա նշեց, որ 1965 թ. ապրիլյան դեպքերի մասին իրենց շրջանում աննշան և կարճատև շշուկներ են անցել, այս իրադարձությունների մասին քիչ թե շատ իմացել են միայն գյուղի կրթված մարդիկ, որովհետև նմանատիպ թեմաները՝ իր բառերով՝ «աշխատում էին չհիշել, որովհետև խորհրդային 15 հանրապետությունները մի ժողովուրդ էին, մի ազգ էին և նրանց մեջ թշնամանք պետք է չլիներ»³³: Մեր զրուցակիցը պատմեց, որ 1966 թ., իր սեփական նախաձեռնությամբ և գյուղի մի քանի պիոներների օգնությամբ, որոնց ջոկատավարն է եղել ինքը, գյուղի բարձրագույն բլրակի գագաթին վառել է վեց խարույկ, որոնք վախեցրել են մոտակայքում ապրող աղբբեջանցիներին: Վերջիններիս ներկայացուցիչը ահազանգել է Շատինի գյուղխորհրդի նախագահին և

³² ՀԱԱ, Լոռու մարզային մասնաճյուղ (ԼՄՄ), ֆ. 9, ց. 4-6:

³³ Հարցազրույց Շատին գյուղի բնակչի հետ, 02.11.2021թ. (բնակիչը պահանջեց չիրապարակել իր անունը), հեղինակի անձնական արխիվ:

ասել, որ ադրբեջանցիները կարծում են, որ հայերն իրենց ուզում են ոչնչացնել, այդ պատճառով խարույկ են վառել՝ որպես ազդանշան: Մեր գրուցակցին անհապաղ կանչել են գյուղխորհուրդ և բացատրություն պահանջել: Նա վստահեցրել է, որ խարույկները վառել է բացառապես անմեղ զոհերի հիշատակին և որևէ այլ նպատակ չի հետապնդել, որ ադրբեջանցիները վախենալու բան չունեն: Չափազանց ուշագրավ այս դրվագը բացահայտում է մի հետաքրքիր հանգամանք. ադրբեջանցիների գիտակցության մեջ, փաստորեն, հայերի կողմից հարձակման ենթարկվելու որոշակի մտավախություններ պահպանվել են, մինչդեռ տեղացի հայերի կողմից, դառնելով մեր ուսումնասիրություններից, նրանց նկատմամբ որևէ լարվածություն չի եղել: Նշենք, որ խորհրդային տարիներին հայաստանաբնակ թուրքերի և ադրբեջանցիների նկատմամբ հանդուրժող վերաբերմունքը բնորոշ չի եղել միայն 1960-ական թվականներին: Այս երևույթն արտահայտիչ կերպով դրսևորվել է սկսած 1920-ական թվականներից և անգամ հանդիսացել է տեղացի հայերի և թուրքական կոտորածներից մազապուրծ եղած արևմտահայ գաղթականների միջև որոշակի լարվածության պատճառ³⁴:

Ազգային մտածողության տարբերություններով պայմանավորված լարվածությունը տեղացիների և հայրենադարձների միջև նկատում ենք նաև 1960-ականների խորհրդային

³⁴Տե՛ս Խաչատրյան Կ., Ժամհարյան Գ., Խորհրդային Հայաստանում արևմտահայ գաղթականության առօրյայի պատմությունից (1920-ական թվականների սկիզբ), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2017, էջ 108-114:

Հայաստանի առօրեականության իրողություններում: Այն դրսևորվել է ներգաղթի արդյունքում Հայաստանում բնակություն հաստատած հայրենադարձների և տեղացի հայ ազգաբնակչության ոչ միանշանակ փոխհարաբերություններով: Սրանց մասին արժեքավոր տեղեկություններ ստացանք մեր մյուս հարցազրույցի հերոսուհուց՝ Վերժինե Քեքեջանից, որի ընտանիքը Խորհրդային Հայաստան էր ներգաղթել 1965 թ. նոյեմբերին և բնակություն հաստատել Կիրովական քաղաքում: Քեքեջանը հիշում է, որ Հալեպում, որտեղից ներգաղթել էին, իրենց ընտանիքն ապրում էր բարեկեցիկ, ապահովված կյանքով: Հոր հայրենասիրական մղումը և դեռևս 1964 թ. Խորհրդային Հայաստան տեղափոխված քեռու կարոտն են դառնում պատճառ, որ իրենց ընտանիքը տեղափոխվի Հայաստան: «Հայրս ասում էր, որ դա մեր հայրենիքն է, և եթե սոված էլ լինեմ, պետք է գնամ», - հիշում էր տիկին Վերժինեն³⁵: Առաջին տպավորությունները, որ նա ստանում է նոր բնակավայրից՝ իրենց երեք սենյականոց բնակարանն էր՝ վեց հոգու համար: Տիկին Վերժինեն հիշում է, որ տեղացիներն աչքի չէին ընկնում բարյացակամությամբ, անգամ բացահայտ մեղադրում էին նրանց՝ ասելով. «Ձեր հետևից կարմիր խնձոր էի՞նք ուղարկել, որ եկաք»: Այս վերաբերմունքի պատճառներից մեկն էլ բնակարանը և աշխատանքն էին, որ իրենց հատկացնելու փոխարեն Խորհրդային պետությունը հատկացրել էր հայրենադարձներին: Վերջիններիս նաև շատ էր վիրավորում «ախպար» պիտակը, որով իրենց կնքել էին

³⁵ Հարցազրույց Վերժինե Քեքեջանի հետ, 01.12.2021 թ., հեղինակի

տեղացիները, և այս բառի հաճախակի շահարկումը նրանց միջև մշտական կոնֆլիկտների պատճառ էր դառնում: Վերժինե Քեքեջանը հիշում է նաև, որ իրենք հիասթափված էին տեղական սովորություններից, եկեղեցու հանդեպ և՛ տեղացիների, և՛ խորհրդային իշխանությունների վերաբերմունքից: Օրինակ՝ դպրոցում նրա դասղեկը պահանջել էր, որ այլևս չկրի ոսկյա խաչը, որովհետև դա արգելված է, սակայն ինքն այն երբեք չի հանել պարանոցից և գաղտնի կրել է դպրոցական շրջագգեստի օձիքի տակ: Տեղական բարքերը խորթ էին նրանց, և այդ խորթությունն առաջին հերթին պայմանավորված էր ազգային-հոգևոր արժեքների վերաբերյալ նրանց և տեղացիների տարաբնույթ վերաբերմունքից: Վերժինե Քեքեջանը չէր հիշում 1965 թ. ապրիլյան իրադարձությունները (վերը նշել ենք, որ նրանց ընտանիքը Խորհրդային Հայաստան էր տեղափոխվել նոյեմբեր ամսին), չէր հիշում նաև այս իրադարձությունների վերաբերյալ տեղացիների կողմից որոշակի հետաքրքրության դրսևորում: Սակայն նա պատմում էր, որ Արևմտյան Հայաստանի, տեղահանության և, հատկապես, Ուրֆայի՝ 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության մասին հիշողություններն իրենց ընտանեկան առօրյայում միշտ թարմ են եղել: Քեքեջանն առանձնակի հպարտությամբ պատմեց, որ իր հայրական պապի՝ Գրիգոր Քեքեջանի եղբայրը, Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերի նշանավոր կազմակերպիչ Մկրտիչ Յոթնեղբայրյանն է եղել: Այստեղ, կարծում ենք, տեղին է միջանկյալ ձևով մեջբե-

րել մեկ այլ մասնավոր օրինակ, որը տրամագծորեն հակառակ իրողությունն է ցույց տալիս: Այսպես՝ Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի բնակիչ Շահեն Հախվերդյանը, հավանաբար, սկսած 1950-ական թվականներից (ստույգ տարեթիվը չհաջողվեց պարզել) սկսել է վարել անձնական օրագիր, որտեղ ներկայացրել է ինչպես իր ընտանիքի, այնպես էլ բնակավայրի կարևոր իրադարձությունները: Հախվերդյանի օրագրում 1967 թ. ներկայացնող կարևոր իրադարձություններն են՝ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյա տարելիցը, որն, ըստ նրա, «նշում է ողջ երկրագունդը»³⁶, գազատարի անցկացումը գյուղում և, հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ, գյուղի բնակիչներից մեկի տան բակում գազով խարույկ վառելը, ընտանեկան-կենցաղային մի շարք հարցերի կարգավորումը և որոշ այլ իրադարձություններ գյուղի կյանքից: Օրագրում ոչ մի խոսք չկա 1967 թ. Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցման մասին: Սա, կարծում ենք, նույնպես վկայում է, որ խորհրդահայ ոչ բոլոր շարքային քաղաքացիների շրջանում էին ազգային մտայնությունները մասսայականություն վայելում:

Դատելով մեր ուսումնասիրություններից՝ հայրենադարձների շրջանում խորհրդային կենցաղի առանձնահատկությունները, մասնավորապես՝ իրենց համար խորթ ու անընդունելի բարքերը, տարբերվող կենսամտածողությունը, ազգային մտածողության տարբերությունները (սրա վերաբերյալ, օրինակ, Քեքեջյանը հայրենադարձներին ավելի հայրենասեր էր

³⁵ ՀԱԱ, ԼՄՄ, ֆ. 161, ց. 1, գ. 14, թ. 192-195:

համարում), ինչպես նաև իրենց հանդեպ վերաբերմունքը դժվարացրել են հայրենադարձների ներգրավումը խորհրդային կյանքին: Այդ իսկ պատճառով, Խորհրդային Հայաստանում վերաբնակվելու սկզբնական տարիներին, անձնական շփումներում առավել շատ ձգտել են դեպի իրենց բախտակից հայրենակիցները: Մեր կարծիքով, ազգային մտածողության տարբերությունները տեղացիների և հայրենադարձների միջև և, վերջիններիս առավել ավանդապատկությունն այս հարցում, նույնպես վկայում են խորհրդային մարդկանց մտածողության վրա խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականության ազդեցությունների մասին: Հայաստանում արմատավորված խորհրդային մտածողությանը բախվելով՝ հայրենադարձների մի մասը լքում էր Խորհրդային Հայաստանը, իսկ նրանք, որոնք, այնուամենայնիվ, որոշում էին մնալ, ժամանակի ընթացքում մեծ դժվարություններով համակերպվում և ներգրավվում էին խորհրդային կենսակերպին: Այն հայրենադարձները, ովքեր մնում են Հայաստանում, ժամանակի ընթացքում ձերբազատվում են տեղական ապրելակերպի նկատմամբ խորթությունից: Սրա հետ կապված անհրաժեշտ ենք համարում անել մի քանի դիտարկում: Խորհրդային Հայաստանում ձևավորված կենսակերպը, չնայած գաղափարական ազդեցություններին, զուրկ չի եղել ազգային հատկանիշներից: Ուղղակի խորհրդային մարդկանց գիտակցության մեջ առկա էր հայրենիքի երկակի ընկալում: Առաջին հայրենիքը Խորհրդային Հայաստանն էր, մյուսը՝ Խորհրդային Միությունը: Հայ հասարա-

կության ազգային մտածողության կարևոր առանձնահատկությունն այն էր, որ Խորհրդային մեծ հայրենիքը համարվում էր փոքրիկ Հայաստանի անվտանգության և նրա բարեկեցության միակ երաշխավորը: Պատմության առջև չմեղանչելու համար մենք կարևոր ենք համարում ընդգծել, որ սա ոչ միայն Խորհրդային իշխանությունների ներմուծած գաղափարական թեզն էր, այլև պատմական փաստերով ապացուցված իրողություն: Ազգային հիմնախնդիրների նկատմամբ որոշակի պասիվությունը տեղացիների կողմից պետք է բացատրել նաև այն հանգամանքով, որ Խորհրդային Հայաստանում չկային ազգապահպանության, հայ մնալու հետ կապված այն մտահոգությունները, որոնք, սովորաբար, առավել ցայտուն են դրսևորվում սփյուռքում: Խորհրդային Հայաստանում թեպետև ազգային շատ սուր հիմնախնդիրների քննարկումը հետապնդվում էր Խորհրդային իշխանությունների կողմից, սակայն հասարակական միջավայրը հայկական էր, լեզուն, մշակույթը հայկական էին (արձանագրենք նաև հայ մշակույթի ոլորտում տպավորիչ ձեռքբերումները Խորհրդային տարիներին): Այս ամենը շատ արագ վերացնում էր Խորհրդային մտածողության նկատմամբ «խորթության» զգացողությունը, որը սկզբում արտահայտվում էր հայրենադարձների շրջանում: Ասվածի, այսպես ասած, զգացական հանրագումարը Վերժինե Քեքեջյանի խոստովանությունն էր հարցազրույցի վերջում այն մասին, որ, չնայած դժվարություններին, որոնք կրել էր նրանց ընտանիքը Խորհրդային Հայաստա-

նում, այդուհանդերձ, այստեղ նրանք առան հայրենիքի հանդեպ կարոտը:

Ավելացնենք, որ 1965 թ. դեպքերը բացահայտեցին, մեր կարծիքով, այդ ժամանակաշրջանի համար անսովոր մի իրողություն՝ Խորհրդային Հայաստանի կուսակցական բարձր ղեկավարության քաղաքական կամքը, երբ վեր կանգնելով կուսակցական շահերից, սեփական կուսակցական դիրքը և, ինչու չէ, նաև անձնական ազատությունը վտանգելով՝ նրանք ցուցաբերեցին նվիրվածություն հայ ազգային արժեքներին՝ ինչն այդ տարիների համար, իրավամբ, բացառիկ հայրենասիրություն պետք է համարել: Նշենք, որ Խորհրդային Հայաստանի բարձր ղեկավարության կողմից հայրենասիրական նախաձեռնության ենք հանդիպում նաև 1966 թվականին: Մեծ համարձակություն և նվիրում էր պահանջում նամակը, որը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանը ուղարկեցին ԽՄԿԿ կենտկոմի 23-րդ համագումարին՝ 1966 թ. սեպտեմբերի 30-ին: Նամակի հեղինակները ներկայացնում էին տնտեսական, քաղաքական և էթնիկական գործոններով պայմանավորված անժխտելի հիմնավորումներ, որ ԼՂԻՄ և Նախիջևանի ԻԽՍՀ տարածքների վերադարձը ՀԽՍՀ-ին բխում է պատմական արդարության սկզբունքներից և այս հարցում Մոսկվայի կողմից քաղաքական կամք դրսևորելու դեպքում որևէ խնդիր չի կարող առաջանալ: Իսկ ստորև՝ նամակից մեջբերվող հատվածում, հեղինակներն անգամ հանդես են գալիս հայկական

պահանջատիրության դիրքերից. «Հայ ժողովրդի, ինչպես և մյուս ժողովուրդների համար տարածքային հարցերը միշտ էլ կենսական կարևոր նշանակություն են ունեցել: Մեր ժողովրդի համար ազգային մեծագույն ողբերգություն է եղել Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքի ավելի քան 2/3 կազմող Արևմտյան մարզերի բռնազավթումը, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուղեկցվել է մեկ և կես միլիոն հայերի զանգվածային կոտորածներով: Հենց սրանով պետք է բացատրել հանրապետության բնակչության հիվանդագին արձագանքը թուրքական դիվանագիտության խարդավանքներին, որը փորձում է նենգափոխել պատմությունը և խուսափել Եղեռնի և հայկական հողերի բռնազավթման պատասխանատվությունից»³⁷:

«Ազգային զարթոնքի» պատմական նշանակությունը մեր ժողովրդի կյանքում անհնար է թերագնահատել: Այն, ըստ էության, մարտահրավեր էր խորհրդային իշխանություններին, որովհետև կոտրեց ազգային ցավի, ազգային իղձերի և, առհասարակ, հայ ազգային մտքի անտեսման խորհրդային տարիների կապանքները: Այս առումով, մեր ժողովրդի կյանքում մեծագույն ձեռքբերում ենք համարում նաև 1967 թ. Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղապանության և 1968 թ. Սարդարապատի հերոսամարտի հուշակոթողների կառուցումը: Թեպետ 1965 թ. ապրիլյան իրադարձությունները

³⁷ Տե՛ս Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ՝ **Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ.**, Երևան, 2011, էջ 61-74:

Խորհրդային Հայաստանի բնակչության ոչ բոլոր խավերի արձագանքին արժանացան: Այդուհանդերձ, 1980-ական թվականների վերելքի, ազգային համախմբման, անկախ պետականության վերականգման և Արցախյան ազատամարտում մեր ժողովրդի հաղթանակների մեջ «ազգային զարթոնքը» նույնպես իր ազդեցությունը թողեց:

Гагик А. Жамгарян, *Институт истории НАН РА, к.и.н.,*
О вопросах идеологического контроля «национального подъёма» в Советской Армении и его откликов в общественном сознании.

В статье освещаются события апреля 1965 года в Советской Армении, которые произошли во время мероприятий посвященных 50-летней годовщине Геноцида Армян. Акцент ставится на идеологический контроль этих мероприятий, осуществляемый советскими властями, а так же на воздействие этих событий на общественное сознание. Используя некоторые публикации прессы, а так же источники личного характера, автор показывает, что в 60-ых годах партийно-идеологическое принуждение имело огромное влияние на общественное сознание, в следствии чего даже события общенационального значения в среде обычных армян не имело должного резонанса.

Gagik A. Zhamharyan, *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History*, **On questions of ideological control of “national revival” in Soviet Armenia and its responses in the public consciousness.**

The article covers the events of April 1965 in Soviet Armenia, which took place during the events of the 50th anniversary of the Armenian Genocide. Emphasis is placed on the ideological control of these activities exercised by the Soviet authorities, as well as on the impact of these events on public consciousness. Using some press publications as well as personal sources, the author shows that in the 1960s party-ideological coercion had a great influence on public consciousness, as a consequence of which even an event of national significance such as the commemoration of the memory of the victims of the Armenian Genocide did not receive all the attention it deserved by ordinary Armenians.

Կարեն Գ. Մկրտչյան

ԳԱԱ պարմության ինստիտուտ, պ.գ.թ.

**ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
2000-ԱԿԱՆ ԹԹ.**

Քանալի բառեր՝ Իրանի հայ համայնք, Արցախ, Թեհրանի Հայոց թեմ, սիրիահայություն, Ջավախք, դպրոց:

Հայաստանի անկախության ձեռքբերումից սկսած՝ Իրանի հայ համայնքը մասնակցել է ՀՀ սահմանամերձ շրջաններին, Արցախին, ինչպես նաև Ջավախքին աջակցելու համահայկական նախաձեռնություններին: Հարկ է նշել, որ 1994 թ. Արցախյան ազատագրական պատերազմի ավարտից հետո՝ խաղաղ պայմաններում, ևս շարունակվեց այդ աջակցությունը՝ այս անգամ առաջին անհրաժեշտության կարիքների բավարարումից անցում կատարելով հայրենաշինության գործընթացին: Այս հարցում զգալի տեղաշարժեր եղան 2000-ական թվականների սկզբից, երբ աջակցությունը ստացավ համակարգված բնույթ համայնքի կառույցների կողմից:

Ուշագրավ է, որ համահայկական ծրագրերի իրագործման նպատակով համայնքի անդամների միջև երկրորդվում են այս կամ այն խմբավորմանը պատկանելը: Այդպիսով, հա-

մայնքը միավորվելով ընհանուր գաղափարի շուրջ՝ հանդես է գալիս որպես մեկ կառույց:

Իրանի հայ համայնքի մասնակցությունը համահայկական նախաձեռնություններին կարելի է դասակարգել մի քանի ուղղություններով, որոնք աչքի են ընկնում իրենց հրատապությամբ և արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին աջակցելու մտահոգությամբ: Դրանք են՝ աջակցություն ՀՀ սահմանամերձ շրջաններին, Արցախին, Զավախքին, ինչպես նաև՝ սիրիահայությանը:

2003 թ. հոկտեմբերի 23-ին Արամ Ա Կաթողիկոսի գլխավորությամբ Անթիլիասում տեղի է ունեցել Ազգային կենտրոնական վարչության լիակատար ժողով, որի ընթացքում քննարկվել է Հայաստանի և Արցախի բարեսիրական ձեռնարկներին կաթողիկոսության թեմերի մասնակցության հարցը: Այդ ժողովին մասնակցել են Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանը, Իրանի Իսլամական հանրապետության խորհրդարանում Թեհրանի և Հյուսիսային իրանահայության պատգամավոր Լևոն Դավթյանը, Թեմական խորհրդի ատենապետ Աիդա Հովհաննիսյանը³⁸: Միաժամանակ, նշված ձեռնարկների համադրման նպատակով, Թեմական խորհուրդը հանդիպել է Թեհրանի Հայոց թեմի կազմում ստեղծված Արցախահայության հետ կապի հանձնախմբի հետ և քննարկել Արցախին աջակցելու հարցը³⁹:

³⁸ Հաղորդագրություն ԹՀ թեմական խորհրդի գործունեության 28 սեպտեմբերի առ 30 նոյեմբերի 2003 թ., «Ալիք» օրաթերթ, 27.12.2003:

³⁹ Նույն տեղում:

2004 թ. հուլիսի սկզբին Արամ Ա կաթողիկոսը Արցախի Հանրապետության վերաբնակեցման պետական վարչության պետ Սերժիկ Ամիրխանյանի հետ քննարկել է Արցախում կաթողիկոսության կողմից Նոր Կիլիկիա շրջանի կառուցման ծրագիրը⁴⁰: Արդյունքում, Իրանահայ համայնքի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կարևոր ձեռնարկներից մեկը եղավ Մարտակերտի շրջանի Կիչան գյուղում վերակառուցման ծրագիրը: Այդ թաղամասը վերամկրտվել է Նոր Կիլիկիա անունով: Շինարարության առաջին փուլն ավարտվել է 2015 թ.: 2017 թ. կառուցվել է ևս 32 տուն, որոնց պաշտոնական բացումը և օրհնությունը կատարելու համար Արցախ է այցելել Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսյանը⁴¹:

Իրանահայ համայնքի կողմից իրականացվել են նաև որոշ կարևոր ծրագրեր, որոնց միջոցով լուծվել են կրթական, տնտեսական և առողջապահական նշանակության հարցեր:

2002 թ. Արցախի Լիսազոր և Սարուշեն գյուղերի դպրոցները վերանորոգվել և վերանվանվել են իրանահայ բարերարներ Սուրեն և Թագուհի Ոսկանյանների անուններով⁴²:

2003 թ. օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 6-ը Թեհրանի Հայոց թեմի պատվիրակությունը, Սեպուհ Սրբազանի գլխավորությամբ, այցելել է Արցախ՝ մասնակցելու իրանահայ

⁴⁰ «Ալիք», 11.07.2004:

⁴¹ Սրբազան Հօր Հարցազրույցը Հայաստանի «Փաստ» օրաթերթի հետ, 22.06.2017, <http://www.tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1158-2017062003> դիտվել է 02.03.2020:

⁴² «Ալիք», 21.12.2002:

բարերարների աջակցությամբ վերանորոգված գյուղական, դպրոցների բացմանը⁴³:

1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո Գյումրիում, ապա Արցախում բարեգործություններ և ներդրումներ կատարած թեհրանահայ բարերար Էդիկ Աբրահամյանի աջակցությամբ Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Բրաջուր⁴⁴ գյուղում հիմնադրվել է դպրոց, որը 2000 թ. դրությամբ ուներ 6 դասարան՝ 120 աշակերտով⁴⁵: Դպրոցի ծախսերից բացի, որն արժեցել է 27 հազար դոլար, բարերարը տրամադրել է ևս 50 հազար դոլարի օգնություն: Բացի դրանից Էդիկ Աբրահամյանը ևս 10 հազար դոլար է տրամադրել ՀՕՄ-ին՝ ՀՀ սահմանամերձ շրջաններին աջակցելու նպատակով: «Հայ խիզախուհի» թերթի խմբագիր Աիդա Սիմոնյանի միջոցով 4000 դոլար տրամադրվել է Արցախյան պատերազմի կին հաշմանդամներին և զոհված կանանց ընտանիքներին:

Իրանահայ բարերար Էլպիս Գասպարյանի աջակցությամբ հիմնանորոգվել է ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի մանկապարտեզը և կառուցվել խաղահրապարակ,

⁴³ Հաղորդագրություն Թ.Շ. Թեմական խորհրդի գործունեության 10 յուլիսի առ 28 սեպտեմբերի 2003 թ., «Ալիք», 30.10.2003:

⁴⁴ Նոր Բրաջուր գյուղը գտնվում է Արցախի Հանրապետության հյուսիս-արևմուտքում՝ Շահումյանի շրջանում: Քարվաճառից գտնվում է 13 կմ, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 113 կմ հեռավորության վրա: Համայնքում գործում էր միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էին 45 աշակերտներ: 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով գյուղը հայաթափվել և ռազմակալվել է Ադրբեջանի կողմից: Նոր Բրաջուր համայնքի բնակչության թիվը կազմում էր 239 մարդ, կար 51 տնտեսություն:

⁴⁵ «Ալիք», 21.05.2000:

որի բացումը տեղի է ունեցել 2017 թ. հունիսի 4-ին՝ վերանվանվելով բարերարի անունով⁴⁶:

2002 թ. դեկտեմբերին Սպահանի Հայոց թեմը ֆինանսավորել է Գյումրիի Ղ. Աղայանի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցի գազամուղի կառուցումը և Հաղորթի շրջանում ջրագծի բացումը⁴⁷:

Սպահանի հայոց թեմական խորհուրդը տարիներ շարունակ Հաղորթում ներդրումներ է կատարել, որի արդյունքում Սպահանից որոշ անհատներ իրենց ներկայությունն են հաստատել այդ շրջանում: Նույն թեմի աջակցությամբ Քարվաճառի շրջանի Նոր Գետաշեն գյուղում կառուցվել է դպրոց, որի բացումը տեղի է ունեցել 2005 թ. սեպտեմբերի 1-ին⁴⁸:

Հիշարժան է, որ 2004 թ. Իրանի Հայ բժշկական միության աջակցությամբ Արցախի պետհամալսարանում ստեղծվել է արդի սարքավորումներով հագեցած ատամնաբուժական կենտրոն⁴⁹:

2004 թ. նոյեմբերի 25-ին «Հայաստան» հիմնադրամի Ինոուտամարաթոնի ընթացքում իրանահայ համայնքը նվիրել է 13 հազար դոլար⁵⁰:

Թեհրանահայ բարերար Վարուժան Հովհաննիսյանի աջակցությամբ կառուցվել են Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա գյուղի դպրոցը և Մարտունու շրջանի Հովտաշեն

⁴⁶ «Ալիք», 10.06.2017:

⁴⁷ «Ալիք», 25.12.2002:

⁴⁸ «Ալիք», 22.10.2005:

⁴⁹ «Ալիք», 07.03.2004:

⁵⁰ «Ալիք», 27.11.2004:

գյուղի բուժարանը⁵¹, որոնց բացումը տեղի է ունեցել 2005 թ. սեպտեմբերի 1-ին Սեպուհ Սրբազանի ձեռամբ:

2005 թ. հունիսին «Հայ դպրոց» հիմանդրամը Ստեփանակերտի Աշոտ Ղուկասի անվան թիվ 2, Ասկերանի շրջանի Խնածախ գյուղի և Մարտունու շրջանի Ճարտար գյուղի թիվ 3 դպրոցներին տրամադրել է 350 նոր սեղան-նստարաններ՝ նախատեսված 700 աշակերտի համար: Ուշագրավ է, որ մինչև 120 աշակերտ ունեցող դպրոցներին տրվելիք գույքի նախատեսված քանակը կազմել է 8408 հավաքածու՝ 17.215 դպրոցականի համար: Մինչև 2005 թ. հունիսը տրվել է ևս 1491 սեղան-նստարան՝ 2982 աշակերտների համար: *«Մենք ունենք բազմաթիվ նվիրատուներ, որոնք ցանկություն են հայտնել գույքի բաշխումն իրականացնել հենց Արցախում, և մենք էլ կատարում ենք իրենց ցանկությունը»*, - ասել է հիմնադրամի նախագահ, իրանահայ բարերար Լևոն Ահարոնյանը⁵²:

Մատաղիս-Թալիշ ճանապարհի մի հատվածի կառուցման համար իրանահայ բարերարներ Հենրիկ և Ադրինե Տեր-Ղուկասյանները 2018 թ. նվիրել են 1,3 միլիոն դոլար «Հայաստան» հիմնադրամին⁵³:

⁵¹ «Ալիք», 21.04.2005:

⁵² «Ալիք», 09.06.2005:

⁵³ Իրանահայ բարերար ընտանիքին միջոցներով պիտի բարեկարգուի Մատաղիս-Թալիշ ճանապարհը, 31.05.2018, [http://asbarez.com/arm/316489/%D4%BB%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D4%B2%D5%A1%D6%80%D5%A5%D6%80%D5%A1%D6%80%D4%B8%D6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80/\(28.03.2020\):](http://asbarez.com/arm/316489/%D4%BB%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D4%B2%D5%A1%D6%80%D5%A5%D6%80%D5%A1%D6%80%D4%B8%D6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80/(28.03.2020):)

2001 թ. սեպտեմբերի 4-ին Լ. Ահարոնյանի բարերարությանը և Տ. Սեպուհ եպս. Սարգսյանի ձեռամբ բացվել է Երևանի Ձեյթուն թաղամասի «Ա. Ահարոնյան» նորակառույց դպրոցը⁵⁴: Լ. Ահարոնյանի ջանքերով նաև Երևանում 2004 թ. նոյեմբերի 5-ին վերաբացվեց Հայաստանի բնության պետական թանգարանը⁵⁵:

2014 թ. ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկ և Արտավազ գյուղերի 50 երեխա իրանահայ համայնքի կողմից ստացել են նվեր փաթեթներ: Նախաձեռնության հեղինակ, «Հայ դպրոց» հիմնադրամի հիմնադիր տնօրեն Լ. Ահարոնյանի խոսքով՝ հիմնադրամը տարիներ շարունակ Հայաստանի սահմանամերձ շուրջ 230 դպրոցների գույք է նվիրել⁵⁶:

Բարերար Ադելինա Ստեփանյանն էլ աջակցել է Դիլիջանի գյուղատնտեսական թեքումով 4-րդ դպրոցի նոր շենքի կառուցմանը⁵⁷:

Ինչ վերաբերում է Զավախքի աջակցության հարցին, ապա դեռևս 2003 թ. նոյեմբերի 24-ին Թեհրանի Հայոց առաջնորդարանում տեղի է ունեցել քննարկում թեհրանահայ միությունների ներկայացուցիչների և Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս, Զավախքի աջակցութ-

⁵⁴ «Ալիք», 30.08.2001:

⁵⁵ «Ալիք», 07.11.2004:

⁵⁶ Փյունիկ գյուղի դպրոցի երեխաների 50%-ը եղել են անապահով ընտանիքներից: Լևոնային այդ բնակավայրը Սումգայիթի ջարդերից փրկված ընտանիքներով բնակեցվել է Արցախյան պատերազմի տարիներին (Իրանահայ համայնքի նվիրատվության առաջին հանձնումը Հայաստանի մարզերի երեխաներին, <http://www.hoosy.com/?p=1982> դիտվել է 06.06.2021, 08.03.2014, «Յոյս», թիվ 166):

⁵⁷ «Ալիք», 17.09.2001:

յան հանձնախմբի անդամ Հայկազուն Ալվրցյանի հետ⁵⁸: 2005 թ. ապրիլի 18-ին Սեպուհ Սրբազանն այցելել է Թեհրանում Վրաստանի դեսպան Լևան Ասաթիանիին և քննարկել Վրաստանում հայոց եկեղեցիների նկատմամբ որոշ մարդկանց անբարյաղակամ վերաբերմունքը⁵⁹:

Հիշարժան են ջավախահայությանն աջակցելու նպատակով 2014 թ. հունիսի 27-ին Նոր Զուղայի Հայուհյաց բարեգործական ընկերության նախաձեռնությամբ բարեսիրական հանդեսի կազմակերպումը⁶⁰ և նույն թվականի սեպտեմբերի 6-ին Զավախքի Նինոծմինդա քաղաքում երիտասարդական կրթամշակութային կենտրոնի բացումը⁶¹: Վերջինիս շենքը կահավորվել է Նոր Զուղայի Հայ դատի հանձնախմբի Զավախքին նվիրված միջոցառումների կազմակերպիչ հանձնախմբի և Արաբական Միացյալ Էմիրությունների «Զավախք» հանձնախմբի միջոցով:

Իրանահայ համայնքն աջակցում է նաև Սիրիայի հայ համայնքին, որը հայտնվել էր այդ երկրում սկիզբ առած քաղաքացիական պատերազմի արհավիրքում: Հարկ է նաև նշել, որ այս երկու համայնքերն իրար բախտակից են համարում⁶²:

2014 թ. հունիսի 4-5-ին Սպահանի Հայոց թեմի հանձնախմբի նախաձեռնությամբ և «Արփա» նվազախմբի կա-

⁵⁸ «Ալիք», 25.11.2003:

⁵⁹ «Ալիք», 19.04.2005:

⁶⁰ «Նոր Զուղա» տեղակառու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիւ 102, մայիս – հունիս, 2014, էջ 22:

⁶¹ «Նոր Զուղա» տեղակառու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիւ 104, սեպտեմբեր – հոկտեմբեր, 2014, էջ 20:

⁶² **Բայքուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 39:

տարմամբ «Ֆարշէտան» դահլիճում կազմակերպվել է բարեսիրական համերգ՝ ի նպաստ սիրիահայության⁶³:

2014 թ. ապրիլի 6-ին «Օմաթե վահեդե» ոչ կառավարական կազմակերպության և Սպահանի թեմական խորհրդի համագործակցությամբ Ս. Ամենափրկիչ վանքում տեղի է ունեցել Սիրիայի խաղաղության ուխտավորների⁶⁴ կազմակերպած «Գրոնների սրտակցությունը» խորագրով համաժողով⁶⁵:

Այսպիսով, Իրանի հայ համայնքը մասնակցություն է ունեցել համահայկական նշանակություն ունեցող նախաձեռնություններին: Դրանք ընդգրկած են եղել ՀՀ սահմանամերձ շրջանների, Արցախի, Ջավախքի, ինչպես նաև քաղաքացիական կոնֆլիկտների բռնկում հայտնված Սիրիայի հայ համայնքի սոցիալական, կրթական, առողջապահական և տնտեսական խնդիրների լուծմանը: Ցավոք, 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի որոշ բնակավայրեր, որտեղ իրականացվել էին բարեգործական ծրագրեր, ռազմակալվեցին Ադրբեջանի կողմից: Իրանահայ համայնքի կողմից իրականացված մյուս ծրագրերի առումով հարկ է նշել, որ դրանք կյանքի են կոչվել հաջողությամբ և օգտակար դարձել բազմաթիվ հայրենակիցների:

⁶³ «Նոր Ջուղա» տեղակատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիվ 102, մայիս-յունիս, 2014, էջ 9:

⁶⁴ Ուխտավորների պատվիրակությանն անդամակցում են գործիչներ, որոնք Սիրիայում խաղաղություն հաստատելու նպատակով քարոզարշավներ են կազմակերպում տարբեր երկրներում՝ հավաքելով օգնություն քաղաքացիական կոնֆլիկտների հետևանքով տուժած սիրիացիների համար:

⁶⁵ «Նոր Ջուղա» տեղակատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիվ 101, մարտ – ապրիլ, 2014, էջ 8–9:

**Карен Г. Мкртчян, Институт истории НАН РА, к.и.н.,
Участие армянской общины Ирана в общеармянских инициативах 2000-х гг.**

Армянская община Ирана в 2000-х гг. активно участвовала в инициативах общеармянского значения. Они были направлены на решение социальных, образовательных, медицинских и экономических проблем сирийской армянской общины в приграничных районах Республики Армения, Арцаха и Джавахка. К сожалению, многие построенные здания в Арцахе сегодня остались на оккупированных Азербайджаном территориях в результате 44-дневной войны, развязанной Азербайджаном осенью 2020 г.

Что касается программ, реализуемых на территории Республики Армения и в Джавахке, следует отметить, что они были успешно реализованы и принесли большую пользу многим соотечественникам.

**Karen G. Mkrtchyan, Institute of History of the NAS RA,
Candidate of Sciences in History, The participation of the
Armenian community of Iran in the Pan-Armenian initiatives
in the 2000s.**

The Armenian community of Iran has participated in initiatives of Pan-Armenian significance. They were aimed at solving the social, educational, health and economic problems of the Armenian community of Syria in the border regions of

Armenia, Artsakh, Javakhk. Unfortunately, many constructions built in Artsakh, appeared to be left in the territories occupied by Azerbaijan in the result of the 44-day war unleashed by Azerbaijan in autumn 2020.

As for the other programs, it should be noted that they were successfully implemented and benefited many compatriots.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Հ. ԽՈՒԴԱՆՅԱՆ

Ալբիի առաջին հիշատակությունները ասորեստանյան սեպագիր աղբյուրներում (Ք.ա. XIII դար) 3

ՎԱՀԵ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունները Հայկական լեռնաշխարհի ասորեստանյան արձանագրությունների վերաբերյալ 17

ՄԻՔԱՅԵԼ Ս. ԲԱԴԱԼՅԱՆ

«Պատմում են օղերը»... Գիրը որպես ուրարտական կայսրության ստեղծման կարևոր չափորոշիչ 35

ԳԵՎՈՐԳ Է. ԿԵՍՈՅԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացվածությունը 56

ՀԱՄՈՒ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բաքվում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության գործունեության պատմությունից (1920–1922 թթ.) 74

ՄԱՐԻԱՄ Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բուլղարիայի և Ռումինիայի Հայոց թեմական առաջնորդարանների ազգային կրթության կազմակերպմանն ուղղված ջանքերը 1920–1930-ական թթ. 87

ԳԱՅԱՆԵ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդային Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը 1947–1953 թթ. 106

ԳԱՅԱՆԵ Խ. ՂԱԶԱՐՅԱՆ

Առօրյա կյանքը 1946–1954 թթ. խորհրդահայ գեղարվեստական ֆիլմերի համատեքստում	130
---	-----

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

Խորհրդային Հայաստանում «ազգային զարթոնքի» գաղափարական վերահսկողության և սոցիալական արձագանքների հարցի շուրջ	143
---	-----

ԿԱՐԵՆ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Իրանի հայ համայնքի մասնակցությունը համահայկական նախաձեռնություններին 2000-ական թթ.	162
---	-----

СОДЕРЖАНИЕ

АРУТЮН О. ХУДАНЯН

Первые упоминания об Алзи в ассирийских клинописных источниках (XIII век до н.э.) 3

ВАГЕ С. САРГСЯН

Об исследовании ассирийских надписей Армянского нагорья К.Ф. Леманом-Гауптом 17

МИКАЭЛ С. БАДАЛЯН

«Рассказывают кольца»... Письменность как важный стандарт для образования урартской империи 35

ГЕВОРГ Э. КЕСОЯН

Дипломатическое представительство первой Республики Армения 56

АМО К. СУКИАСЯН

Из истории деятельности Полномочного представительства Советской Армении в Баку (1920–1922 гг.) 74

МАРИАМ М. АКОПЯН

Усилия Болгарского и Румынского армянской епархии по организации национального образования в 1920–1930-х годах..... 87

ГАЯНЕ С. ОГАННИСЯН

Переселения азербайджанского населения из Советской Армении в 1947–1953 годах 106

ГАЯНЕ Х. КАЗАРЯН

Повседневность в контексте советских армянских художественных фильмов 1946–1954 годов 130

ГАГИК А. ЖАМГАРЯН

О вопросах идеологического контроля «национального подъёма» в Советской Армении и его откликов в общественном сознании	143
--	-----

КАРЕН Г. МКРТЧЯН

Участие армянской общины Ирана в общеармянских инициативах 2000-х гг.	162
--	-----

CONTENT

HARUTYUN H. KHUDANYAN

The first mentions of Alzi in Assyrian cuneiform sources (13 th century BC)	3
--	---

VAHE S. SARGSYAN

On the study of Assyrian inscriptions in the Armenian Highland by C. F. Lehmann-Haupt	17
---	----

MIGAYEL S. BADALYAN

“The rings are telling”... The writing as an important standart for the formation of the Urartian empire	35
--	----

GEVORG E. KESoyAN

Diplomatic representation of the First Republic of Armenia ..	56
---	----

HAMO K. SUKIAsYAN

From the history of the activities of the Plenipotentiary Representation of Soviet Armenia in Baku (1920–1922)	74
--	----

MARIAM M. HAKOBYAN

The efforts of the Armenian Dioceses of Bulgaria and Romania in the organization of the national education in the 1920s–1930s.	87
---	----

GAYANE S. HOYHANNISYAN

Resettlement of the Azerbaijani population from Soviet Armenia (1947–1953)	106
--	-----

GAYANE KH. GHAZARYAN

Everyday life in the context of Soviet-Armenian feature films of 1946–1954	130
--	-----

GAGIK A. ZHAMHARYAN

On questions of ideological control of “national revival” in Soviet Armenia and its responses in the public consciousness	143
---	-----

KAREN G. MKRTCHYAN

The participation of the Armenian community of Iran in the Pan-Armenian initiatives in the 2000s.	162
--	-----

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերականին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10–15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ծախից՝ 3, աջից՝ 1:

- Հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածը տպագրելու երաշխավորական գրություն գիտական ղեկավարից, համապատասխան մասնագիտացում և գիտական աստիճան ունեցող մասնագետից, կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախնկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերականի բոլոր համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

<http://www.academhistory.am/>

<http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

2 (23)

Ամփոփումների խմբագրումը՝ Հ. Խուրանյանի
Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

[1500 ԳՊ.]

1/1/80

ՀԱՍ ՅԻՃՆԱՐԱՐ ԳԻՒ. ԳՐԱԴ.



FL0677741

ПА 136

2021N23